Շաբաթօրյա դպրոցի Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ

2013 թվականի երրորդ եռամսյակ

ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ԵՎ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆ

Մարկ Ֆինլի

Բովանդակություն

		ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ԵՎ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆ 2
Դաս 1.	29.06–05.07	ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ ՄԵՐ ՄԵԾԱԳՈՒՅՆ ԿԱՐԻՔՆ Է 4
Դաս 2.	06.07–12.07	ԱՂՈԹՔԸ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՍԻՐՏՆ Է 12
Դաս 3.	13.07–19.07	ԽՈՍՔԸ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՀԻՄՔՆ Է 21
Դաս 4.	20.07–27.07	ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՇԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՊՏՈՒՂՆ ԵՆ 29
Դաս 5.	27.07–2.08	ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՊՏՈՒՂՆ Է 38
Դաս 6.	03.08–9.08	ՁՂՋՈՒՄՆ ՈՒ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՆ 46
Դաս 7.	10.08–16.08	ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՀԱՆԳՈՒՅՑ 55
Դաս 8.	17.08–23.08	ԽՈՐԱԹԱՓԱՆՑՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է 63
Դաս 9.	24.08–30.08	ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԾՆՆԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆ Է . 72
Դաս 10.	31.08–06.09	ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆԸ ԱՃԵԼՈՒ ԵՎ ՓՈԽՎԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆՆ Է 81
Դաս 11.	07.09–13.09	ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ Է 89
Դաս 12.	14.09–20.09	ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ Է 98
Դաս 13.	21.09–27.09	ԽՈՍՏԱՑՎԱԾ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ. ԱՍՏԾՈ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԱԾ Է 107

ԵՐԵՎԱՆ

2013

ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ԵՎ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆ

Աստծո Հոգին սերնդեսերունդ ձգտում է վերածնել Իր ժողովրդի սրտերը: Վերածնունդն անընդհատ, ամենօրյա փորձառություն է: Չէ՞ որ մեզանից յուրաքանչյուրը կարող է իր մասին ասել հին օրհներգի բառերով՝ «Տե՛ր, ես հակված եմ մոլորվելու և զգում եմ դա, ես հակված եմ հեռանալու Աստծուց, ում սիրում եմ»: Ներքուստ մենք խորապես գիտակցում ենք այս խոսքերի ճշմարիտ լինելը:

Մեր սրտերն իսկապես հակված են մոլորվելու: Մեր բանականությունը մշտապես հավիտենականից շեղվում է դեպի ժամանակավորը: Իսկ մտքերն այնքա՜ն հեշտորեն են հեռանում երկնայինից և կենտրոնանում երկրայինի վրա: Չափազանց հաճախ ենք մենք հայտնվում խորապես արմատացած սովորությունների ստրկության մեջ: Ժամանակ առ ժամանակ մեր սեփական վարքը, ինչ-որ բանին մեր արձագանքը մեզ դնում են փակուղու մեջ:

Այդ ամենը կատարվում է, որովհետև մեր նախածնողների մեղանչման պատճառով մենք մեղսավոր էություն ենք ժառանգել (Երեմիա 17.9): Մեր բնական ցանկությունն է դարձել Աստծո ճանապարհից հեռանալը և սեփական ճանապարհով գնալը (Եսայիա 53.6): Պողոս առաքյալի հետ միասին մենք բացականչում ենք. «Ես ի՜նչ խեղճ մարդ եմ» (Հռոմեացիս 7.24) և Դավթի հետ մեկտեղ աղաչում. «Տե՛ր, Քո ողորմության պես ապրեցրո՛ւ ինձ» (Սաղմոս 119.159):

Վերածննդի էությունն այն է, որ սիրող, բարի Աստված ձգտում է ամրապնդել մեզ հետ Իր կապերը: Վերածննդի նախաձեռնությունը Նրան է պատկանում: Նրա Հոգին է մեր մեջ ծնում այդ ծարավը: Նրա Հոգին է համոզում մեզ այդ կարիքի մեջ: Նրա Հոգին է բացում Աստծո բարությունն ու ողորմությունը:

Երկրի ողջ պատմության ընթացքում Աստծո Հոգին ակտիվորեն աշխատում էր՝ վերածնելով մարդկանց սրտերը: Երբ Իսրայելը նահանջեց Աստծո ծրագրերից և մտադրություններից, Տերը օգտագործեց երիտասարդ Հովսիա թագավորին, որ ժողովրդին վերադարձնի Իր մոտ, ինչի արդյունքը դարձավ մեծ վերածնունդը (տե՛ս Դ Թագավորաց 22, 23): Տաճարի նվիրաբերման ժամանակ Աստված ասաց Սողոմոնին. «Եվ Իմ ժողովուրդը, որի վրա կոչված է իմ անունը, խոնարհվեն և աղոթք անեն և իմ երեսը խնդրեն և իրենց չար ճանապարհներից հետ դառնան. այն ժամանակ ես կլսեմ երկնքից և կներեմ նրանց մեղքերը և կբժշկեմ նրանց երկիրը» (Բ Մնացորդաց 7.14): Աստծո սիրտը ջերմորեն փափագում էր Իսրայելի համար վերածննդի դրդող այնպիսի պայմաններ ստեղծել, որ-

պեսզի ժողովուրդը վերապրեր այդ փորձառությունը և Նրա սիրո լույսը բացահայտեր ողջ աշխարհին:

Երբ ժողովուրդն արձագանքում էր վերածննդի՝ Աստծո կոչին, Նա մեծ զորությամբ էր գործում ի բարօրություն այդ նույն ժողովրդի: Նույնը կարելի է ասել նորկտակարանյան քրիստոնեական եկեղեցու, բարենորոգման և ադվենտիստական շարժման մասին: Լիակատար չափով դա վերաբերում է նաև վերջին ժամանակի Աստծո ժողովրդին: Նրա Սուրբ Հոգին կհեղվի իր ողջ լիությամբ, և երկիրը կլուսավորվի Նրա փառքից (Հայտնություն 18.1):

Տվյալ եռամսյակի դասերը կենտրոնացած են վերածննդի տարբեր տեսանկյունների վրա: Մենք միասին կորոնենք այնպիսի հարցերի պատասխանները, ինչպիսիք են. Ի՞նչ պայմաններով է Աստված հեղում Իր Սուրբ Հոգին: Աստված որևէ գերբնական պահի՞ է սպասում՝ Իր Սուրբ Հոգին վերջին ժամանակի եկեղեցու վրա հեղելու համար: Ի՞նչ է նշանակում ապրել Հոգով լցված կյանքով: Մենք կարո՞ղ ենք անել որևէ բան՝ համագործակցելու համար Աստծո հետ և արդեն հիմա ստանալ Սուրբ Հոգու լիությունը: Ինչի՞ց են սկսվում վերածնունդն ու բարենորոգությունը:

Էլեն Ուայթը վերածննդի կարևորությունն ընդգծում էր այսպիսի բառերով. «Մեր միջավայրում ճշմարիտ բարեպաշտության վերածնունդը մեր բոլոր կարիքներից մեծագույնն ու ամենաանհրաժեշտն է» (Հատընտիր լուրեր, հտ. 1, 121): Վերածննդի հարցը Երկինքը դնում է առաջնահերթ տեղում: Ի՞նչը կարող է ավելի կարևոր լինել: Այս եռամսյակում, հետազոտելով այնպիսի հարցեր, ինչպես աղոթքն ու վերածնունդն են, Խոսքն ու վերածնունդը, վկայությունն ու վերածնունդը, վերջին լուրն ու վերածնունդը, նաև այլ հարցեր, կաղոթենք, որ Աստված Իր զորությամբ խոսի մեր սրտերի հետ մեզ դեպի Իրեն քաշելով:

Ինչո՞ւ մենք հենց հիմա մեր սիրտը չբացենք Սուրբ Հոգու ազդեցության առջև: Ինչո՞ւ չխնդրենք Նրան՝ մեր կյանքում ինչ-որ արտասովոր բան անել հենց այսօր: Նա կպատասխանի մեր աղոթքներին, և երկնային օրհնությունները կթափվեն ամենաանսպասելի կերպով:

Մարկ Ֆինլիի՝ ծննդով ԱՄՆ-ի Քոնեկտիկուտ նահանգից, ողջ աշխարհում հայտնի ավետարանիչը, 2005-2010 թվականներին եղել է Վեհաժողովի փոխնախագահը: Վաստակած հանգստի գնալուց հետո նա շարունակում է ծառայությունը որպես Վեհաժողովի նախագահի օգնական՝ մասնակցելով վերածննդի և բարեկարգության ծրագրերին: Հովիվ Ֆինլիի և նրա կինը՝ Էրնեստինան, երեք երեխա և երկու թոռ ունեն:

ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ ՄԵՐ ՄԵԾԱԳՈՒՅՆ ԿԱՐԻՔՆ Է

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հայտնություն 3.14-21, Եբրայեցիս 12.7-11, Մատթեոս 25.1-13, Զաքարիա 3.1-5, Երգ երգոց 5.2-5:

Հիշելու համարը.

«Ահա ես դռան առաջ կանգնած եմ և թակում եմ. եթե մեկը լսի իմ ձայնը և դուռը բանա, կմտնեմ նրա մոտ և ընթրիք կանեմ նրա հետ, և նա ինձ հետ» (Հայտնություն 3.20):

Լաոդիկեի եկեղեցին վերջինն է հիշատակվում յոթ եկեղեցիների մեջ, որոնց մասին խոսվում է Հայտնություն գրքում: Եկեղեցու անունը նշանակում է «դատաստանի ժողովուրդ» և ծառայում է որպես վերջին ժամանակի Աստծո ժողովրդի համապատասխան խորհրդանիշ: Լաոդիկե քաղաքը գտնվում էր բաց դաշտում (ժամանակակից Թուրքիայի հարավ-արևմուտք): Դա բնապահպանական տեսակետից կարևոր քաղաք էր, ուխտագնացության վայր, կրթական ու բժշկական կենտրոն: Լաոդիկեի բնակիչները անկախ, ինքնավստահ ու հարուստ մարդիկ էին:

Սակայն քաղաքին չէր բավականացնում կենսականորեն կարևոր մի բնական ռեսուրս՝ ջուրը: Ջուրը Լաոդիկեից ութ կիլոմետր դեպի հարավ գտնվող աղբյուրից հոսում էր հռոմեական ջրմուղով և քաղաք էր հասնում արդեն գոլ վիճակում: Հիսուսն օգտագործում էր Լաոդիկեի այդ առանձնահատկությունը, որպեսզի ցույց տա Իր եկեղեցու գաղջ վիճակը վերջին ժամանակում: Նա բնորոշվում է որպես ինքնավստահ, ինքնաբավ, քնած, հոգևորապես անտարբեր: Այդ եկեղեցին կորցրել է իր ջերմությունը, նա հոգևոր վերածննդի կարիք ունի:

Սակայն Լաոդիկեի լուրը հույսի լուր է: Քրիստոսը սիրով դիմում է Իր ժողովրդին՝ առաջարկելով լրացնել նրա հոգու կարիքները և պատասխանել ամենախոր հոգևոր ձգտումներին:

Հույս՝ գաղջ Լավոդիկեի եկեղեցու համար

Հայտնություն 2-ում և 3-ում, դիմելով յոթ եկեղեցիներից յուրաքանչյուրին՝ Հիսուսը տարբեր անուններ և տիտղոսներ է օգտագործում՝ կախված այդ եկեղեցիների հոգևոր կարիքներից: Այն անունները, որ Նա օգտագործում է Լավոդիկեի եկեղեցուն ուղղված ուղերձում, իրենց մեջ արձագանքն են կրում հոգևոր նորոգման այն վստահության, որ վրա է հասնում Նրա կանչին արձագանքածների մոտ:

Կարդացե՛ք բերված աստվածաշնչյան հատվածները. Հայտնություն 3.14,15, Բ Կորնթացիս 1.20, Հովհաննես 3.10,11, Կողոսացիս 1.13-17: Ի՞նչ եք կարծում, դիմելով Լավոդիկեի եկեղեցուն՝ Հիսուսն ինչո՞ւ է օգտագործում այնպիսի անուններ, ինչպես «այսպես է ասում Ամենը», «հավատարիմ և ճշմարիտ Վկան», «Աստծո արարածների Սկիզբը»: _____

_____

_____

_____

_____

Հայտնություն 3.14 համարում հունարեն «արխե» բառը թարգմանված է իբրև «սկիզբ»: Այն կարող է սկիզբ նշանակել այն իմաստով, որ նա, ում վերաբերում է այդ բառը, սկիզբ է տալիս իրադարձությանը կամ գործողությանը: Տվյալ համատեքստում «արխեն» մատնանշում է Հիսուսին որպես Սկիզբ՝ ողջ արարչագործության Հիմնադիր կամ Սկզբնապատճառ: Այլ խոսքերով՝ Նա Արարիչ է (Հովհաննես 1.1-3, Եփեսացիս 3.8,9):

Այս ճշմարտությունն ահռելի նշանակություն ունի: Հիսուսն, ով խոսքով կյանքի կոչեց աշխարհները, ստեղծեց երկիրը, Իր խոսքով կյանք պարգևեց, այն Նույն Հիսուսը հույսի լուր է արտասանում Լավոդիկեի համար: Ամենակարող Արարիչը կարող է նոր կյանք ստեղծել: Նա կարող է նոր հոգևոր ձգտումներ արարել մեր սրտերում: Նա կարող է վերափոխել մեր հոգևոր կյանքը:

Կարդացե՛ք Բ Կորնթացիս 5.17-ը և Գաղատացիս 6.14,15-ը: Այդ համարներն ի՞նչ նշանակություն ունեն անձամբ ձեզ համար: ____

_____

_____

_____

Ինչո՞ւ է Լավոդիկեի եկեղեցու լուրը հույսի լուր: Ձեզ ի՞նչն է քաջալերում այն խիստ հանդիմանության մեջ, որով սկսվում է լուրը: Այստեղ բերված Հիսուսի երեք անուններից ո՞րն է առավել սիրելի ձեզ և ինչո՞ւ:

Երկուշաբթի *հուլիսի 1*

Սիրո հանդիմանություն

Կարդացե՛ք Հայտնություն 3.15,16-ը: Ինչո՞ւ է Հիսուսն այդքան խստորեն հանդիմանում Լաոդիկեի եկեղեցին: Ի՞նչ է նշանակում գաղջ լինել: «Գաղջ» բառի փոխարեն ուրիշ ի՞նչ բառեր կարող էր օգտագործել Հիսուսը: _____

_____

_____

Մեկնաբանելով Հայտնություն 3.15,16 համարները՝ Էլեն Ուայթը պնդում է. «Լավոդիկեի եկեղեցու լուրը միանգամայն որոշակիորեն վերաբերում է այն մարդկանց, ում կրոնական փորձառությունը զրկվել է թթխմորից, և ովքեր հստակ վկայություն չեն տանում ճշմարտության օգտին» (ՅՕԱ աստվածաշնչյան մեկնություններ, հտ. 7, 962): Սա շատ դիպուկ դիտողություն է: Անթթխմոր կրոնական փորձառությունը կենսազուրկ փորձառություն է: Արտաքին քրիստոնեական թաղանթը թաքցնում է ներքին դատարկությունը: Արտաքին ձևը ոչ մի կենսական զորություն չունի: Լավոդիկեցիները հերետիկոսներ չեն, ոչ էլ կատաղի կրոնամոլներ, պարզապես անտարբեր մարդիկ են: Նրանք բավականաչափ բարոյական մարդկանց կերպարանք ունեն: Պողոսը նրանց մասին այսպես է գրել. «Ովքեր աստվածապաշտության կերպարանքն ունեն, բայց նրա զորությունն ուրացած են» (Բ Տիմոթեոս 3.5): Իր ժամանակի կրոնասեր մարդկանց մասին Հիսուսն ասել է. «Այս ժողովուրդը իր բերանով է մոտենում Ինձ, և շրթունքներով է Ինձ պատվում, բայց իրենց սիրտն ինձանից հեռացած, ջոկված է» (Մատթեոս 15.8):

Կարդացե՛ք Եբրայեցիս 12.7-11, Հոբ 5.17-19, Սաղմոս 95.10, Առակաց 29.15,17-ը և որոշե՛ք, թե ինչ նպատակով է Աստված արտահայտում Իր հանդիմանությունը: _____

_____

_____

_____

Մեր Տերը չափազանց շատ է սիրում Իր ժողովրդին, որպեսզի թույլ տա նրան այդքան հեշտորեն գնալ կործանման: Նա կանի ամեն անհրաժեշտը, որ կրկին հոգևոր կրակ վառի նրանց սրտերում: Խորագույն սերը Փրկչին դրդում է հանդիմանել Իր ժողովրդին: Նա պատժում է միայն նրա համար, որ բժշկի: Օվսե մարգարեն կրկնում է այս մտքերը՝ ապաշխարության կոչ անելով. «Եկե՛ք ու հետ դառնանք Տիրոջ մոտ, որ Նա պատառեց, և Նա էլ կբժշկի մեզ. Նա զարկեց, Նա էլ կպատի մեզ» (Օվսե 6.1):

Աստվածձերկյանքումուղարկե՞լէցավոտ,անգամվրդովեցուցիչ փորձառություններ՝ ձեզ խոնարհեցնելու և Իրեն մերձեցնելու համար: Դուք ի՞նչ եք սովորել այդ փորձառություններից:

Երեքշաբթի ***հուլիսի 2***

Երևութականը ու իրականությունը

Հսկայական տարբերություն կա այն բանի մեջ, ինչ Լաոդիկեն ասում է, և նրա միջև, ինչ անում է: Է՛լ ավելի խոր անդունդ է ձևավորվել իր թվացյալ հոգևոր փորձառությունների և իրական վիճակի միջև:

Կարդացե՛ք Հայտնություն 3.17-ը: Լավոդիկեն ինչպե՞ս է գնահատում ինքն իրեն: Նրան ինչպե՞ս է գնահատում Տերը: Մարդիկ ինչո՞ւ են այդ աստիճան սխալվում իրենց իրական հոգևոր վիճակի առումով: Իսկ մենք չե՞նք սխալվում մեր հոգևոր վիճակի հարցում: _____

_____

_____

Սատանայի ամենանենգ խաբեություններից մեկը մեզ կուրացնելն է, որպեսզի չտեսնենք մեր իրական հոգևոր կարիքները: Հիսուսի ժամանակվա որոշ հոգևոր առաջնորդներ չէին տեսնում իրենց հոգևոր չքավորությունը: Դրանք «եկեղեցու անդամներ» էին, ովքեր կարդում էին Աստվածաշունչ, պահում էին շաբաթը, վերադարձնում էին տասանորդը և միևնույն ժամանակ սպասում էին Մեսիայի գալստյանը: Բայց շատերն անգամ պատկերացում չունեին այն հոգևոր թագավորության մասին, որ Նա պետք է հաստատեր: Հիսուսը նրանց անվանում էր «կույր առաջնորդներ» (Մատթեոս 23.24): Պողոսը Կորնթոսի եկեղեցուն գրում է անհավատ մարդկանց մասին, «ում սրտերը կուրացրել է այս աշխարհի աստվածը» (Բ Կորնթացիս 4.4): Այդ պատճառով Հիսուսն ասաց, որ եկել է «կույրերին տեսողություն քարոզելու» (Ղուկաս 4.19): Եթե մենք

թույլ տանք, Նա կվերականգնի մեր կորցրած հոգևոր տեսողությունը: Ամեն անգամ, երբ Հիսուսն իր երկրային կյանքի ընթացքում բժշկում էր կույրերին, ցույց էր տալիս, որ ցանկանում է բացել մեր մտքի աչքերը, որ կարողանանք ավելի հստակ տեսնել Իրեն:

Կարդացե՛ք Մատթեոս 25.1-13-ը: Դուք ի՞նչ նմանություններ եք գտնում անմիտ կույսերի և Լաոդիկեի եկեղեցու անդամների միջև: _____

_____

_____

Ի՞նչն է օգնում ձեզ՝ հոգևորապես արթուն մնալ: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է այդքան հեշտ հոգևորապես անտարբեր մարդ դառնալը: Ինչպե՞ս կարելի է պայքարել հոգևոր անտարբերության դեմ:

Հորեքշաբթի *հուլիսի 3*

Ասպվածային դեղամիջոց

Լավոդիկեի, ինչպես նաև հոգևոր նինջով և անտարբերությամբ տառապող բոլոր մարդկանց համար հույս կա՛: Մեր Տերը աստվածային դեղ ունի: Այն փաստը, որ Տերը դիմում է այդ եկեղեցուն, վկայում է, որ նա անհուսալի վիճակում չէ, եթե միայն ընդունի Քրիստոսի խորհուրդն ու հետևի դրան:

Խորհեցե՛ք Հայտնություն 3.18,19-ում Հիսուսի խոսքերի մասին: Ի՞նչ նկատի ունի Հիսուսը, երբ խոսում է կրակում փորձված ոսկու, սպիտակ հանդերձների և աչքերի դեղի մասին, որ հարկավոր է քսել աչքերին: *Տե՛ս նաև Ա Պետրոս 1.7, Զաքարիա 3.1-5, Հայտնություն 19.7-9, Եփեսացիս 4.30-ը:* _____

_____

_____

_____

«Հիսուսը դռնեդուռ է ընկնում, կանգնում է յուրաքանչյուր հոգու տաճարի մոտ՝ հռչակելով. «Ահա՛ ես դռան առաջ կանգնած եմ և թակում եմ»: Որպես երկնային Վաճառական՝ Նա բացում է Իր գանձարանը և բացականչում. «քեզ խրատ եմ տալիս՝ ինձանից կրակով փորձված ոսկի առ, որ հարստանաս, և սպիտակ հանդերձներ, որ հագնես, և քո մերկության ամոթը չերևա»: Այն ոսկու մեջ, որ Նա առաջարկում է, խառնուրդ չկա, այն Ոփիրի ոսկուց էլ թանկարժեք է, քանի որ դա հավատն է և սերը:

Սպիտակ հագուստը, որ Նա առաջարկում է մարդուն, Նրա սեփական արդարության հանդերձն է: Դեղը, որով հարկավոր է օծել աչքերը, Նրա շնորհի յուղն է, այն հոգևոր տեսողություն է պարգևում կուրության և խավարի մեջ գտնվող հոգուն, որ նա կարողանա տարբերել Աստծո Հոգու գործերը թշնամու գործերից: «Բացե՛ք ձեր դռները, - հրավիրում է մեծ Վաճառականը՝ հոգևոր հարստությունների տերը, - և գնե՛ք իմ ապրանքը: Այս Ես Եմ՝ ձեր Փրկիչը, որ ձեզ խրատ եմ տալիս ձեռք բերել Ինձանից»» (Է. Ուայթ, The Advent Review and Sabbath Herald, օգոստոսի 7, 1894թ.):

Էլեն Ուայթը մեջբերում է Հայտնություն 3.20-ում Հիսուսի խոսքերը. «Ահա, ես դռան առաջ կանգնած եմ ու թակում եմ»: Հիսուսը թակում է: Նա չի ջարդում դուռը և ուժով չի հարթում Իր ճանապարհը: Դա նշանակում է՝ թեև Աստված մեր փրկության համար արել է ամեն բան, միայն մե՛նք կարող ենք Նրան թույլ տալ ներս մտնել: Հարցրե՛ք ինքներդ ձեզ՝ դուք չե՞ք դիմադրում Նրա թակոցը լսելիս: Եթե դիմադրում եք՝ ինչո՞ւ: Ի՞նչն է հետ պահում ձեզ: Ի՞նչ մեղքից կամ ի՞նչ կապվածությունից չեք ցանկանում ազատվել: Կարո՞ղ է պատահել, որ ձեր կյանքում կա ինչ-որ բան, ինչից ձեզ համար դժվար է հրաժարվել:

Հինգշաբթի ***հուլիսի 4***

Հավիտենական սերը

Համեմատե՛ք Հայտնություն 3.20-ը և Երգ երգոց 5.2-5-ը: Ի՞նչ ընդհանուր բան կա այս համարների միջև: Այդ համարներն ի՞նչ են ասում Աստծո սիրո մասին: _____

_____

_____

Մերձավոր Արևելքում երեկոյան ընթրիքը եղել և առ այսօր մնում է արտակարգ կարևոր իրադարձություն: Երբ առօրյա աշխատանքն ավարտվում էր, և աշխատավորները դաշտերից տուն էին վերադառնում, երեկոյան հացկերույթի սեղանի շուրջ հավաքվում էր ողջ ընտանիքը: Այն ժամանակ ապրում էին մեծ գերդաստաններով, և հաճախ ընթրիքի սեղանի շուրջ բավականին շատ մարդիկ էին հավաքվում: Այնտեղ կարող էին լինել պապիկներ և տատիկներ, եղբայրներ և քույրեր, հորաքույրեր և հորեղբայրներ, մեծեր և երեխաներ: Աշխատանքային օրվան հաջորդող այդպիսի հանդիպման ժամանակ պատմում էին պատմություն-

ներ և վերապրած փորձառությունները, խորհուրդներ էին տալիս: Դա եղբայրական շփման ժամանակ էր: Հիսուսը ցանկանում է մեզ հետ նման շփում ունենալ:

Ինչպե՞ս են Հայտնություն 3.21-ում գրի առնված Քրիստոսի խոսքերը վկայում մեզանից յուրաքանչյուրի կյանքում Իր մտադրություններն իրագործելու Նրա անկեղծ փափագի մասին:

Հայտնություն գրքում «Աստծո գահ» բառակապակցությունը հիշատակվում է ավելի քան 40 անգամ. դա ավելի է, քան Աստվածաշնչի ցանկացած այլ գրքում: Աստծո գահի մոտ մենք միանում ենք երկնային երգչախմբին և ուրախությամբ հռչակում. «Արժանի՜ է մորթված Գառն առնելու և՛ զորություն, և՛ հարստություն, և՛ իմաստություն, և՛ կարողություն, և՛ պատիվ, և՛ փառք, և՛ օրհնություն» (Հայտնություն 5.12): Հիսուսը հավաստիացնում է, որ մենք կարող ենք մասնակցել այդ մեծ տոնակատարությանը, եթե ծարավի ենք մեղքի պատմության ավարտին:

Դիմելով վերջին ժամանակի Իր անտարբեր ժողովրդին՝ Քրիստոսը մեծագույն դրդապատճառ է օգտագործում: Նրա սիրո շնորհիվ մեզ համար հավիտենությունն է պատրաստված: Մեր երակներով արքայական արյուն է հոսում: Մենք Տիեզերքի Թագավորի որդիներն ու դուստրերն են: Մենք կարող ենք թագավորել Նրա հետ՝ նստելով Նրա գահին: Մեծագույն շահադրդումը, որի օգնությամբ Նա փորձում է արթնացնել մեզ հոգևոր քնից, Նրա անսահման սերն է, քանի որ Նա փափագում է մեզ հետ անցկացնել հավերժությունը: Եթե դա բավական չէ՝ մեզ հոգևոր անտարբերությունից դուրս բերելու համար, ապա էլ ի՞նչ կարելի է ձեռնարկել: Եթե դա մեզ ծնկի չի իջեցնում, որպեսզի որոնենք վերածնունդը, ապա էլ ի՞նչը մեզ կօգնի:

Քրիստոսը ցանկանում է շփվել մեզ հետ, բայց որքանո՞վ ենք դա ցանկանում մենք: Պատասխանը պարզ է: Վերլուծե՛ք. որքա՞ն ժամանակ եք անցկացնում աղոթքի և Տիրոջ հետ շփման մեջ: Ձեր պատասխանն ի՞նչ է ասում ձեր և, հնարավոր է, այն մասին, թե որքանով գաղջ եք դուք:

Ուրբաթ ***հուլիսի 5***

Հետագա ուսումնասիրության համար

«Վերածնունդն ու բարենորոգությունը պետք է տեղի ունենան Սուրբ Հոգու օգնությամբ: Վերածնունդն ու բարենորոգությունը երկու տարբեր

հասկացություններ են: Վերածնունդը նշանակում է հոգևոր կյանքի նորոգում, մտքի ու սրտի ուժերի վերածնունդ, հարություն հոգևոր մահից: Բարենորոգությունը նշանակում է վերակազմակերպում, փոփոխություն գաղափարների ու տեսությունների, սովորությունների ու գործնական կյանքի մեջ: Բարենորոգությունը արդարության բարի պտուղ չի բերի, եթե կապված չլինի Հոգուց բխող վերածննդի հետ: Վերածնունդն ու բարենորոգությունը պետք է կատարեն իրենց համար նախատեսված գործը, և այդ գործում դրանք անխզելիորեն կապված կլինեն միմյանց հետ» (Է. Ուայթ, *The Advent Review and Sabbath Herald*, փետրվարի 25, 1902 թ.):

«Ճշմարիտ վկայի խորհուրդը լի է քաջալերանքով և մխիթարությամբ: Եկեղեցիները դեռևս կարող են ձեռք բերել ճշմարտության, հավատի, սիրո ոսկին և հարստանալ երկնային գանձերով: «Ես խրատ եմ տալիս քեզ՝ ինձանից կրակում փորձված ոսկի առ, որ հարստանաս, և սպիտակ հանդերձներ, որ հագնես, և քո մերկության ամոթը չերևա»: Սպիտակ հագուստը Քրիստոսի արդարությունն է, որը կարող է դրսևորվել բնավորության մեջ: Իր հագուստը Գառի արյամբ լվացող և սպիտակեցնող յուրաքանչյուր մարդու բնորոշ կլինի սրտի և շարժառիթների մաքրությունը» (Է. Ուայթ, *The Advent Review and Sabbath Herald*, հուլիսի 24, 1888 թ.):

Հարցեր քննարկման համար.

1. Ինչո՞ւ է գաղջ վիճակն այդքան վտանգավոր: Ինչո՞ւ այն կարող է հանգեցնել հոգևոր ինքնասպանության:
2. Ինչո՞ւ որոշ քրիստոնյաներ թվում են ջերմեռանդ, իսկ ուրիշները՝ անտարբեր: Այդպիսի վիճակը խառնվածքի՞ հետևանք է, թե՞ ինչ-որ այլ պատճառ կա: Բացատրե՛ք ձեր պատասխանը:
3. Դասարանում քննարկե՛ք, թե ինչպես կարելի է խուսափել հոգևոր անտարբերությունից: Մենք ինչպե՞ս կարող ենք պահպանել մեր հոգևոր փորձառության կյանքն ու աճը: Մենք ի՞նչ կարող ենք անել՝ որպես ամբողջական եկեղեցի՝ պաշտպանելու մեզ գաղջ վիճակից:
4. Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ մեր «սառը» վիճակն առավել հաճո է Աստծուն, քան «գաղջը»: Ինչո՞ւ գաղջ վիճակն ավելի լավ չէ, քան կատարյալ սառը վիճակը: Հուշում. ի՞նչն է առավել հարմարավետ՝ ջերմությա՞ն, թե՞ սառնության մեջ գտնվելը:

ԱՂՈԹՔԸ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՍԻՐՏՆ Է

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Գործք առաքելոց 1.4,8,14, Մարկոս 1.35, Ղուկաս 5.16, Մատթեոս 18.19,20, Բ Կորնթացիս 10.3-5, Սաղմոս 50.23:

Հիշելու համարը.

«Արդ՝ եթե դուք, չար լինելով, գիտեք բարի պարգևներ տալ ձեր որդիներին, որքա՞ն ավելի ձեր Հայրը, որ երկնքում է, բարիքներ կտա նրանց, որ խնդրում են իրենից» (Մատթեոս 7.11):

Աստված գործում է մեծ զորությամբ, երբ Իր ժողովուրդն աղոթում է: Անգլիացի բանաստեղծ լորդ Ալֆրեդ Թենիսոնը, իհարկե, իրավացի էր, երբ ասում էր. «Աղոթքի շնորհիվ շատ ավելին է արվել, քան կարծում է այս աշխարհը: Մեծ վերածնունդները, որոնց մասին մենք կարդում ենք Սուրբ Գրքում, հիմնված էին աղոթքի վրա: Հին Կտակարանը նկարագրում է նահապետների և մարգարեների բարեխոսությունը, երբ նրանք վերածնունդ էին որոնում: Մովսեսը, Դավիթն ու Դանիելը Ամենակարողից զորություն էին աղերսում: Գործք առաքելոց գիրքը ցույց է տալիս Նոր Կտակարանի հավատացյալներին ծնկաչոք Երկնքին աղաչելիս, երբ նրանք աղերսում էին Սուրբ Հոգու հեղման համար:

Հիսուսի աղոթքով առլեցուն կյանքը վկայում է Երկնային Հորից Նրա մշտական կախվածության մասին: Ավետարաններն օգնում են մեզ՝ տեսնելու Նրա հոգևոր զորության աղբյուրը: Հենց ծնկաչոք, Հոր հետ միայնակ լինելիս էր Փրկիչն ստանում մեծագույն զորությունը:

«Մենք կարող ենք վերածննդի սպասել միայն ի պատասխան մեր աղոթքներին » (Է. Ուայթ, Հատընտիր լուրեր, հտ. 1, 121): Այս շաբաթվա դասին մենք ուսումնասիրելու ենք աղոթքի դերը վերածննդի՝ Աստվածաշնչում ներկայացված մի քանի մեծագույն փորձառությունների մեջ:

Աղոթքն ու վերածնունդը Գործք առաքելոց գրքում

Հավատավորները, ում մասին խոսվում է Գործք առաքելոց գրքում, երկնքից զորությամբ էին լցվում: Սուրբ Հոգին հեղվեց միանգամայն ակնառու կերպով: Սրտերին դիպավ սուրբ ազդեցությունը, շատերը վերափոխվեցին: Ավետարանը ներթափանցեց ամենադժվարամատչելի վայրերը: Գործք առաքելոց 2-ում մենք կարդում ենք, թե ինչպես մեկ օրվա ընթացքում երեք հազար մարդ միացավ եկեղեցուն (Գործք առաքելոց 2.41): Գործք առաքելոց 4.4 համարը հայտնում է, որ միայն հավատքն ընդունած տղամարդկանց թիվը կազմում էր «հինգ հազարի չափ»: Անգամ կրոնական առաջնորդներից շատերը, ովքեր Հիսուսի երկրային ծառայության ժամանակ ընդդիմանում էին Նրան, «հնազանդվում էին հավատին» (Գործք առաքելոց 6.7): Այնուհետև, Գործք առաքելոց 9-ում ասվում է, որ եկեղեցիները «բոլոր Հրեաստանի,՝ Գալիլեայի և Սամարիայի մեջ… շատանում էին» (Գործք առաքելոց 9.31): 10 12-րդ գլուխները վկայում են այն մասին, որ Ավետարանը տարածվել էր տարբեր մշակութային և աշխարհագրական տարածքներում: Մկրտվեցին հռոմեացի հարյուրապետը և Եթովպիայի թագուհու գանձերի պահապանը: Գործք առաքելոց 1-ում հաղորդվում է, որ սկզբում մոտավորապես 120 հավատացյալ կար, ովքեր աղոթքի համար հավաքվել էին վերնատանը (Գործք առաքելոց 1.13,16): Բայց առաջին դարի ավարտին Հռոմեական կայսրության մեջ հաշվվում էր առնվազն մեկ միլիոն քրիստոնյա: Սա միանգամայն նշանակալի աճ է:

Ո՞րն է գաղտնիքը:

Կարդացե՛ք բերված համարները: Ո՞րն էր նորկտակարանյան եկեղեցու աճի հիմնական պատճառը: Գործք առաքելոց 1.4,8,14, 2.42, 4.31,33, 6.3,4: _____

_____

_____

_____

Հովիվ Ռ. Ա. Թորեյը XIX դարի վերջին – XX դարի սկզբում վերածննդի հզոր քարոզիչ էր: Նա վերածննդի ծրագրեր էր անցկացնում Մեծ Բրիտանիայում (1903-1905թթ.) և Հյուսիսային Ամերիկայում (1906-1907 թթ.): Տառապելով քրիստոնյաների զբաղվածության համար՝ նա ասել է. «Մենք չափազանց զբաղված ենք, որ աղոթենք, ուստի չափազանց

զբաղված ենք, որ զորություն ստանանք: Մենք ահռելի քանակությամբ գործեր ունենք, բայց քիչ բանի ենք հասնում, շատ է ծառայությունը, քիչ՝ դարձի եկածները, շատ են ջանքերը, բայց քիչ են արդյունքները»:

Դուք աղոթքի ժամանակ ունե՞ք: Դուք ինչպե՞ս կարող եք թուլացնել ձեր կյանքի տեմպը, որ աղոթքին ավելի շատ ժամանակ հատկացնեք: Խորհե՛ք այն բոլոր արդարացումների մասին, որոնցով դուք երբեմն բացատրում եք աղոթքի բացակայությունը, այն պատճառների մասին, որոնք ստիպում են ձեզ՝ առաջին տեղում դնել ոչ թե աղոթքը, այլ ինչ-որ ուրիշ բան: Վերջին հաշվով, որքա՞ն օրհնություն եք դուք կորցնում՝ ժամանակը անցկացնելով ոչ աղոթքի մեջ:

Երկուշաբթի ***հուլիսի 8***

Հիսուսի աղոթքի կյանքը

Համեմատե՛ք հետևյալ համարները. Մարկոս 1.35, Ղուկաս 5.16, 9.18: Հիսուսի աղոթքի կյանքի ո՞ր երեք առանձնահատուկ կողմերն են բացահայտվում բերված համարներում: _____

_____

_____

_____

«Քրիստոսը մշտապես Հորից ստանում էր այն, ինչ կարող էր փոխանցել մեզ: «Այն Խոսքը, որ լսում եք, - ասում էր Նա, - իմը չէ, այլ ինձ ուղարկող Հորը»: «Որովհետև Մարդու Որդին էլ չեկավ, որ իրեն ծառայեն, այլ որ Ինքը ծառայի»: Նա ապրում, մտածում և աղոթում էր ոչ թե հանուն Իրեն, այլ հանուն շրջապատողների: Ժամանակ անցկացնելով Աստծո հետ՝ Նա յուրաքանչյուր առավոտ գնում էր, որ երկնային լույսը տանի մարդկանց: Ամեն օր Նա Սուրբ Հոգու նոր մկրտությունն էր ստանում: Նոր օրվա վաղ ժամերին Տերը Նրան արթնացնում էր քնից, և Նրա հոգին, Նրա շուրթերն օծվում էին շնորհով, որը Նա կարող էր փոխանցել շրջապատողներին» (Է. Ուայթ, *The Review and Herald*, օգոստոսի 11, 1910 թ.):

Դիտարկե՛ք ստորև բերված հատվածները: Որոշե՛ք, թե հատկապես ինչի մասին էր աղոթում Հիսուսը: Հիսուսի աղոթքներն ինչպե՞ս են բացահայտում այն, թե ինչն էր Նրա համար առանձնապես կարևոր: Ո՞ր առավել կարևոր կողմն է յուրահատուկ Հիսուսի ամեն աղոթքին:

Հովհաննես 17.20-24 _____
Ղուկաս 22.31,32 _____
Մատթեոս 26.36-44 _____

Աղոթքը Հիսուսի կյանքի անբաժանելի մասն էր, այդպես Նա կապ էր պահպանում Հոր հետ: Ամեն օր աղոթքի միջոցով Փրկիչը նորոգում էր Հոր հետ իր փոխհարաբերությունները: Հիսուսի աղոթքի կյանքը Նրան հաղորդում էր արիություն և ուժ՝ դիմանալու թշնամու փորձություններին: Այդպիսի աղոթքի հանդիպումներից հետո Նա է՛լ ավելի խորությամբ էր Իրեն նվիրում Հոր կամքի կատարմանը: Դրանք Նրան հոգևոր արթնություն և ուժ էին պարգևում: Նկարագրելով Հիսուսի աղոթքի փորձառություններից մեկը՝ Ղուկասը նկատում է. «Եվ եղավ, որ Նա աղոթք անելիս Նրա երեսի կերպարանքն ուրիշ կերպ եղավ, և նրա հագուստը փայլուն եղավ» (Ղուկաս 9.29): Ամեն օր աղոթքի միջոցով Հիսուսը Հոր հետ շփման նոր հոգևոր փորձառություն, նորոգում և ամրապնդում էր ձեռք բերում:

Մի քանի րոպե հատկացրե՛ք՝ մտաբերելու համար որոշ առանձնահատուկ փորձառություններ, երբ Աստված հրաշալի կերպով պատասխանել է ձեր աղոթքներին: Այդ հիշողություններն ու վերապրած փորձառությունների մասին մտորումներն ինչպե՞ս են ամրապնդում ձեր աղոթքի կյանքն այսօր:

Երեքշաբթի ***հուլիսի 9***

Աղոթելով միասին

Թեև Հիսուսը հաճախ աղոթքի ժամանակն անցկացնում էր միայնակ, կարելի է հիշել բազմաթիվ դեպքեր, երբ Նա Իր աշակերտներին դրդում էր աղոթել Իր հետ միասին: Պետրոսը, Հակոբոսն ու Հովհաննեսը Հիսուսի հետ էին այլակերպման սարի վրա (Մատթեոս 17.1,2): Գեթսեմանում աղոթելիս Հիսուսն աշակերտներին խնդրեց Իրեն սատարել աղոթքի մեջ (Ղուկաս 22.39-46): Համատեղ աղոթքի մեջ զարմանահրաշ զորություն է թաքնված:

Ուշադիր կարդացե՛ք Մատթեոս 18.19,20-ը: Ընդհանրացրեք Հիսուսի պնդումը համատեղ աղոթքի վերաբերյալ: _____
_____
_____
_____
_____

«Այս խոստումն ասում է այն մասին, որ ի պատասխան Աստծո ժողովրդի համատեղ աղոթքների՝ կարելի է ավելի մեծ զորություն ակնկալել, քան այն, որ տրվում է ի պատասխան անձնական աղոթքի դեպքում: Պարգևված զորությունը համեմատական կլինի անդամների միասնականությանը և Աստծո ու միմյանց հանդեպ նրանց սիրուն» (Է. Ուայթ, *The Central Advance*, 25 փետրվարի 1903թ.):

Ջոն Բունյանը մի անգամ նկատել է. «Աղոթելով դուք կարող եք ավելին անել, քան այն, ինչի համար աղոթում էիք, բայց ոչինչ չեք կարող առանց աղոթքի»:

Երբ մենք սկսում ենք լրջորեն և անկեղծ բարեխոսել, Սուրբ Հոգին գործում է մեծ զորությամբ՝ հրաշքներ գործելով մեր միաբան աղոթքների միջոցով:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 12.1-16-ը: Ի՞նչ իրադրության մեջ էր Պետրոսը: Դրան ինչպե՞ս վերաբերվեց եկեղեցին: Բերված հատվածն ի՞նչ է ասում մեզ համատեղ աղոթքի զորության մասին: _____

_____

_____

Միանգամայն ակներև է, որ տվյալ դեպքում Պետրոսն ազատվեց գերբնական կերպով: Ամեն բան այնքան արտասովոր էր, որ Պետրոսն անգամ վստահ չէր, թե դա տեղի է ունենում իրականում, և ոչ թե տեսիլքի մեջ: Միայն հետո նա գիտակցեց, թե ինչ կատարվեց: Կարևոր է նկատել, որ համարները երկու անգամ հիշատակում են այն մասին, որ հավատացյալները աղոթում էին համատեղ: Եվ դա զարմանալի չէ, եթե հաշվի առնենք ստեղծված բարդ իրադրությունը: Մենք պետք է վարվենք նույն կերպ, հատկապես՝ երբ եկեղեցին բախվում է դժվարությունների:

Հորեքշաբթի ***հունիսի 10***

Մեր ազատությունը

Դուք երբևէ հարցրե՞լ եք ինքներդ ձեզ, թե ինչու է աղոթքն այդքան անհրաժեշտ: Ինչո՞ւ մենք պետք է Աստծուն խնդրենք Սուրբ Հոգին ուղարկելու մասին: Մի՞թե Նա Ինքը չի ցանկանում այն նվիրել մեզ:

Այս հարցերի պատասխանը թաքնված է այն ըմբռնման մեջ, որ Աստված հարգում է ընտրության մեր ազատությունը: Նա մեզ ստեղծել է բարոյական ընտրություն կատարելու ընդունակ: Դեռևս նախքան մեր

աղոթք արտաբերելը՝ Աստված մեզ համար և մեր միջոցով անում է այն ամենը, ինչ կարող է, բայց նա սահմանափակված է մեր ընտրությամբ (Սաղմոս 78.41,42):

Աղոթքի մեջ մենք ընդունում ենք մեր բացարձակ կախվածությունն Աստծուց և թույլ ենք տալիս Նրան՝ միջամտել մեր կյանքին: Որքան ավելի շատ ենք մենք աղոթում, այնքան ավելի ենք գիտակցում Նրա լիությունը: Երբ մենք աղոթում ենք, Նրա Սուրբ Հոգին մեր սիրտը պատրաստում է է՛լ ավելի մեծ պարգևներ ստանալու: Որքան ավելի շատ ենք աղոթում, այնքան ավելի շատ ենք թույլ տալիս Սուրբ Հոգուն՝ «խաչել» մեր մեղսավոր ցանկությունները: Բարու և չարի միջև մեծ պայքարում աղոթքն Աստծուն հնարավորություն է տալիս առավել գործուն կերպով դրսևորվել մեր կյանքում:

Վերլուծե՛ք Բ Կորնթացիս 10.3-5 տեքստերը: Բացատրե՛ք «Մեր զինվորության զենքերը մարմնավոր չեն, այլ Աստծով զորավոր» արտահայտությունը: Ի՞նչ զենքեր են դրանք: Ի՞նչ պատերազմի մասին է այստեղ խոսում Պողոսը և ինչո՞ւ է այդպիսի պատկերներ օգտագործում: Մենք ինչպե՞ս պետք է հասկանանք պայքարը, որի մեջ ներքաշված ենք: _____

_____

_____

_____

_____

Որպես Յոթերորդ օրվա ադվենտիստներ՝ մենք գիտակցում ենք Քրիստոսի և սատանայի միջև ընթացող մեծ պայքարի իրական լինելը և գիտենք, որ բոլորը ներքաշված են այդ պայքարի մեջ: Միայնակ մենք ի զորու չենք պատերազմել սատանայի դեմ: Մեր միակ հույսը Հիսուսի հետ մեր կապն է, իսկ աղոթքի կյանքը այդ կապի հիմքն է, հոգևոր զենք՝ հոգևոր պայքարի մեջ, որից մեզանից ոչ ոք չի կարող զերծ մնալ: Եթե Հիսուսն ուներ աղոթքի կարիք, ապա որքա՜ն ավելի շատ դրա կարիքն ունենք մենք:

«Մենք նույնպես պետք է ժամանակ գտնենք խորհրդածությունների և աղոթքի, նոր հոգևոր ուժեր ստանալու համար: Մենք ինչպես հարկն է չենք գնահատում աղոթքի զորությունն ու իրական բնույթը: Աղոթքն ու հավատն անում են այն, ինչ չի կարող կատարել երկրային զորությունը» (Է. Ուայթ, Ապաքինման ծառայություն, 509):

Դուք ձեր կյանքում զգո՞ւմ եք Քրիստոսի և սատանայի միջև մեծ պայքարի դաժան իրողությունը: Աղոթքն ինչպե՞ս է օգնում ձեզ այդ պայքարի մեջ: Դուք որտե՞ղ կլինեիք առանց աղոթքի:

Արդյունավետ աղոթք

Աղոթքի բազմաթիվ արդյունավետ եղանակներ գոյություն ունեն: Շատ մարդիկ օգտակար են համարում Աստծո առջև ծնկի գալն ու Աստվածաշունչը բացելը, մի քանի համար կարդալն ու Աստծո հետ կարդացածի մասին զրուցելը:

Սաղմոսները աղոթքի համար ոգեշնչման առանձնահատուկ աղբյուր են: Փորձե՛ք աղոթքի ժամանակ մտորել որևէ սաղմոսի մասին: Բարձրաձայն կարդացե՛ք մեկ համար և հետո Աստծո հետ խոսե՛ք այն մասին, թե ինչ է նա ձեզ հայտնում:

Ոմանք գտնում են, որ աղոթքի համար առավել բարենպաստ ժամանակը կարելի է անցկացնել Աստծո հետ առանձնացված՝ հանգիստ միջավայրում, բնության գրկում: Ոմանք աղոթքը համադրում են երգի հետ:

Աղոթքի արդյունավետության մասին մենք ի՞նչ ենք իմանում բերված համարներից. Սաղմոս 34.4, 50.23, 67.4, 71.6:

Դավթի աղոթքները լի էին երկյուղածությամբ և փառաբանությամբ: Երբ մենք խորհում ենք Աստծո բարության և անկրկնելի սիրո մասին, մեր սրտերը լցվում են Նրան փառաբանելու ցանկությամբ:

Կարդացե՛ք Դանիել 9.8-13-ը: Դուք ի՞նչ կարող եք ասել այդ աղոթքի մասին: _____

_____

Պողոսն ինչպե՞ս է բնորոշում արդյունավետ աղոթքի կյանքը: Եփեսացիս 5.20 _____

_____

Պողոսը Եփեսացիս 6.18-ում և Փիլիպեցիս 4.6-ում ի՞նչ է ասում խնդրելու նշանակության մասին, և ինչո՞ւ է խնդրանքը համարվում աղոթքի կարևոր բաղադրիչ: _____

_____

_____

Թեև մենք չենք ձգտում աղոթքի որոշակի բանաձև սահմանել, սակայն ընդհանուր գծերով կարելի է հետևյալն ասել. մենք աղոթքն սկսում ենք փառաբանությամբ ու գոհաբանությամբ և երախտագիտություն ենք հայտնում Աստծուն՝ մեր հանդեպ բարության համար: Աղոթքն ավարտում ենք խնդրանքներով՝ չմոռանալով, որ մեզանից սպասվում է հնազանդություն և հուսալ Աստծո զորությանը:

Կարո՞ղ է պատահել, որ ձեր աղոթքի կյանքն այնպիսին չէ, ինչպիսին պետք է կամ կարող էր լինել: Ձեզ ի՞նչ է անհրաժեշտ փոխել: Ինչո՞ւ առավել համառ ջանքեր չգործադրել՝ աղոթքի մեջ ավելի շատ ժամանակ անցկացնելու համար: Դա կփոխի ձեր կյանքը:

Ուրբաթ *հուլիսի 12*

Հետագա ուսումնասիրության համար

«Աստծո առջև բացե՛ք ձեր կարիքները, ուրախություններն ու տրտմությունները, ձեր հոգսերն ու անհանգստությունները: Դուք Նրան դրանով չեք հոգնեցնի և չեք ծանրաբեռնի: Նա, ով ընդունակ է հաշվել մեր գլխի յուրաքանչյուր մազը, չի կարող անտարբեր լինել իր զավակների կարիքների հանդեպ: «Տերը բազմագութ և ողորմած է» (Հակոբոս 5.11):

Նրա սիրող սիրտը հուզում են մեր տրտմությունները: Նա մեզ հետ միասին տրտմում է, երբ Իրեն պատմում ենք դրանց մասին: Եկե՛ք Նրա մոտ՝ այն ամենով, ինչ վրդովվեցնում կամ անհանգստացնում է ձեզ: Ոչ մի բեռ Նրա համար չափազանց ծանր չի լինի. չէ՞ որ նա պահում է աշխարհները և կառավարում է Տիեզերքը: Այն ամենը, ինչ վերաբերում է մեր ներքին աշխարհին, չի կարող սակավ կարևոր լինել Նրա համար: Մեր կյանքի պատմության մեջ ոչ մի այնպիսի խառնաշփոթ գլուխ չկա, որ Նա չկարողանա կարդալ ոչ մի թյուրիմացություն չի կարող այնքան դժվար լինել, որ Նա ի զորու չլինի օգնել: Ոչ մի դժբախտություն, որ կարող է բաժին ընկնել Նրա զավակներից փոքրագույնին, հոգին կեղեքող ոչ մի անհանգստություն, ցանկացած ուրախություն, յուրաքանչյուր անկեղծ աղոթք՝ ոչինչ չի վրիպում մեր Երկնային Հոր հայացքից, ով կարեկցանքով արձագանքում է ամենին: «Նա բժշկում է սրտով կոտրվածներին և փաթաթում նրանց խոցերը» (Սաղմոս 147.3): Աստծո և մարդկանցից յուրաքանչյուրի միջև հարաբերություններն այնքան որոշակի ու լիակատար են, ասես այդ մարդը երկրի միակ մարդն է, ում մասին հոգում է Երկնային Հայրը և ում համար տվել է Իր սիրելի Որդուն» (Է. Ուայթ, Քայլեր դեպի Քրիստոս, 100):

Հարցեր քննարկման համար.

1. Ինչո՞ւ աղոթել, եթե Աստված առանց դրա էլ ամեն բան գիտի: Թեև այս հարցին տարբեր պատասխաններ կարելի է տալ, դրանցից

ամենաճիշտը, հավանաբար, այն է, որ Աստվածաշունչը մեզ բազմիցս խորհուրդ է տալիս աղոթել: Անգամ եթե մենք չենք հասկանում, թե դա ինչպես է գործում, այնուամենայնիվ, արդյունավետ աղոթող մարդիկ գիտեն, որ դա իսկապես գործում է: Չէ՞ որ դուք ընդունում եք մարմնի ապաքինմանը նպաստող դեղ, թեև չգիտեք, թե հատկապես ինչ կերպ է այն գործում: Միևնույնը կարելի է ասել նաև աղոթքի մասին: Աղոթքի կարևորությունը ցույց տվող է՞լ ինչ պատճառներ դուք կարող եք բերել, հատկապես՝ վերածննդի ու վերափոխման մեր ձգտման համատեքստում:

2. Աղոթքով ուշադիր կարդացե՛ք է. Ուայթից մեջբերումը «Հետագա ուսումնասիրության համար» բաժնում: Խորհեցե՛ք այստեղ բովանդակվող քաջալերանքի մասին, հատկապես՝ վերջին տողում, որտեղ խոսքը վերաբերում է Աստծո և յուրաքանչյուր մարդու միջև փոխհարաբերություններին: Դուք ի՞նչ կարող եք անել՝ Աստծո հետ նույնքան սերտ փոխհարաբերություններ ունենալու համար, որքան նկարագրված է մեջբերման մեջ:
3. Դասարանում զրուցե՛ք մեծ պայքարի իրական բնույթի և մեր հասարակության մեջ դրա դրսևորումների մասին: Համատեղ աղոթքն ինչպե՞ս է օգնում ձեզ՝ հաջողությամբ հաղթահարելու կյանքի փորձությունները:

ԽՈՍՔԸ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՀԻՄՔՆ Է

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Սաղմոս 119.50,74,116, Եբրայեցիս 4.12, 11.3, Հովհաննես 5.39, Եբրայեցիս 4.1,1, Գործք առաքելոց 20.27-32:

Հիշելու համարը.

«Ինձ իրավունք արա և ազատի՛ր ինձ, քո խոսքի պես ապրեցրո՛ւ ինձ» (Սաղմոս 119.154):

Քանի որ Աստվածաշնչի լուրջ ուսումնասիրությունը անցյալում միշտ վերածնունդ է առաջ բերել, մենք հավատում ենք, որ նման բան տեղի կունենա նաև վերջին օրերում: Սուրբ Հոգին կիջնի նվիրված ադվենտիստ քրիստոնյաների վրա, ովքեր Աստծո կամքն են որոնում, Նրա Խոսքի մեջ ցանկանում աշխարհին հռչակել Բարի լուրը:

Հմայված Փրկչի Անձով՝ Նրա Խոսքում նրանք կգտնեն շնորհ, ուժ և հույս: Իսկ Աստված կպատվի նրանց նվիրումը՝ առատորեն հեղելով Իր Սուրբ Հոգին, և ողջ աշխարհը կլուսավորվի երեք հրեշտակների պատգամի լույսով: Սուրբ Հոգին կթափվի առատորեն, Ավետարանը կհասնի երկրի ծայրերը, և Հիսուս Քրիստոսը կվերադառնա փառքով (Մատթեոս 24.14):

Այս շաբաթ մենք ուսումնասիրելու ենք Աստվածաշնչի դերը վերածննդի մեջ: Մենք կկենտրոնանանք այն բանի վրա, թե ինչպես կարող է Աստծո Խոսքը մեր և մեր կյանքում մեծ փոփոխություններ կատարել, եթե հավատի ու հնազանդության միջոցով մեզ հանձնենք նրա սկզբունքներին ու ճշմարտություններին:

Վերածնունդ Խոսքով

Կարդացե՛ք ստորև բերված համարները: Առաջին տողում շարադրե՛ք Դավթի խնդրանքը, իսկ երկրորդում նկարագրե՛ք այն հանգամանքները, որոնք նրան դրդել էին հենց այդ խնդրանքին:

Սաղմոս 119.25 (խնդրանք) _____

(հանգամանքներ) _____

Սաղմոս 119.107 (խնդրանք) _____

(հանգամանքներ) _____

Սաղմոս 119.153,154 (խնդրանք) _____

(հանգամանքներ) _____

Սաղմոսներում Դավիթը խոսում է իր հոգևոր կյանքում Խոսքի օրհնությունների մասին: 119 սաղմոսից կարդացե՛ք հետևյալ համարները և յուրաքանչյուր համարից ընտրե՛ք այն բառը, որը լավագույնս արտացոլում է այն օրհնությունները, որոնք սաղմոսերգուն ձեռք է բերել Խոսքում: Սաղմոս 119.50,74,116,130,160,169,170: _____

_____

_____

_____

_____

_____

Աստծո Խոսքում Դավիթը ձեռք բերեց արիություն և ուժ, հույս և Աստծո առաջնորդությունը: Այն լուսավորեց նրա մթագնած բանականությունը (Սաղմոս 119.130), սնեց նրա քաղցած սիրտը և հագեցրեց նրա ծարավ հոգին (Սաղմոս 119.81): Երբ Սավուղը սպառնում էր սպանել Դավթին, վերջինս ապավինում էր Աստծո խոստումներին (Սաղմոս 34.5): Անհանգստանալով ապագայի համար՝ նա հույսը դնում էր առաջնորդության մասին Աստծո խոստումների վրա (Սաղմոս 32.8): Ցնծության մեջ Դավիթը բացականչում է. «Քո Խոսքն ապրեցնում է ինձ» (Սաղմոս 119.50): Վերածննդի հիմքը Աստծո Խոսքով նոր կյանք ձեռք բերելն է:

Դուք ինչպե՞ս կարող եք սովորել հույս, զորություն, վստահություն և լույս քաղել Աստծո Խոսքից: Այսինքն՝ դուք ինչպե՞ս կարող եք առավել խորը փորձառություն ունենալ Տիրոջ հետ՝ Նրան ճանաչելով Աստվածաշնչի էջերում:

Խոսքի ստեղծագործ զորությունը

Կարդացե՛ք Եբրայեցիս 4.12-ը: Այս համարը պնդում է, որ Աստծո Խոսքը կենդանի է, ճշմարիտ, «ամեն երկսայրի սրից ավելի կտրուկ» և թափանցում է մեր էության խորքերը: Ինչպե՞ս հասկանալ «Աստծո Խոսքը կենդանի է» արտահայտությունը: _____

Աստծո Խոսքն ինչո՞վ է տարբերվում իմաստուն մարդու, հովվի կամ հոգեբանի խելացի խորհրդից: Հետևյալ տեքստերն ի՞նչ են ասում Աստծո Խոսքի զորության մասին. Սաղմոս 33.6,9, Եբրայեցիս 11.3, Բ Տիմոթեոս 3.16,17: _____

Իմաստուն խորհուրդը որոշակի արժեք ունի: Մեզ ամենքիս բազմիցս օգնել են շրջապատողների խորհուրդները: Սակայն մարդկային խորհուրդը չունի փոփոխություն կատարելու այն ուժը, ինչը կարող է անել Աստծո Խոսքը: Այն կենդանի է, ճշմարիտ, վերափոխման ուժեղ միջոց: Աստծո գրված Խոսքում այն նույն զորությունն է թաքնված, ինչ և արարման ժամանակ՝ Նրա արտասանածի մեջ: Հավատով ընդունելով Աստծո պատվիրաններն ու խոստումները՝ մենք ձեռք ենք բերում Սուրբ Հոգու զորությունը՝ Քրիստոսի հրամանը կատարելու համար:

«Այն ստեղծագործ զորությունը, որ աշխարհներ կյանքի կոչեց, բովանդակվում է Աստծո Խոսքի մեջ: Այդ Խոսքը ուժ է տալիս, այն կյանք է ծնում: Յուրաքանչյուր հրաման կապված է խոստման հետ և կամավոր կերպով ընդունվելով՝ թափանցում է հոգու խորքը՝ իր մեջ կրելով Ամենագոյի կյանքը: Այն մարդուն կերպարանափոխում և նորոգում է Աստծո պատկերով» (Է. Ուայթ, Դաստիարակություն, 126):

Աստծո Խոսքի անկանոն ընթերցումը շատ հազվադեպ է բերում հոգևոր վերածննդի: Աստվածաշնչի ուսումնասիրությունը, նպատակ ունենալով ապացուցել սեփական իրավացիությունը կամ մարդուն իր մոլորվածության մեջ համոզելը, շատ քիչ օգուտ է բերում մեր սեփա-

կան հոգևոր կյանքին: Փոփոխությունները տեղի են ունենում, երբ մենք աղոթքով կարդում ենք Աստծո Խոսքը և խնդրում ենք Սուրբ Հոգուն՝ մեզ Հիսուսին ավելի նմանվելու ուժ պարգևել: Ճշմարիտ բարենորոգությունը տեղի է ունենում, երբ մենք Արարիչ Աստծուն խնդրում ենք մեզ կրկին արարել Իր պատկերով: Փոփոխությունը վրա է հասնում, երբ Հիսուսի ուսմունքը դառնում է մեր կյանքի մի մասը, և մենք ապրում ենք «ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից» (Մատթեոս 4.4):

Աստծո Խոսքի զորությունն ինչպե՞ս է փոխել ձեր կյանքը: Է՞լ որ ոլորտներում են խոշոր փոփոխություններ անհրաժեշտ:

Երեքշաբթի *հուլիսի 16*

Հիսուսը և Խոսքը

Աստծո Խոսքի նպատակներն ինչո՞ւմ են համընկնում Աստծո Հոգու նպատակներին: Հովհաննես 5.39, 16.14,15: _____

_____

_____

_____

_____

Աստծո Խոսքը վկայում է Հիսուսի մասին: Սուրբ Հոգին նույնպես վկայում է Նրա մասին: Հոգին մեզ Նրա Խոսքի միջոցով տանում է դեպի Հիսուսի հետ հարաբերությունների առավել խորը փորձառությունների: Վերածննդի գործընթացում Սուրբ Հոգու նպատակը գլխավորապես ոչ թե ոչ թե գերբնական նշանների ու հրաշքների մեջ իրեն դրսևորելն է, այլ Հիսուսին փառաբանելը Նրա խոսքի միջոցով: Սուրբ Հոգով մկրտությունը կատարվում է ոչ թե նրա համար, որ մեծ հրաշքներ կատարելու զորություն ստանանք, այլ որպեսզի Աստված Իր զորությամբ վերափոխի մեր կյանքը: Սրանում է վերածննդի ու բարենորոգության էությունը:

Աստծո Խոսքը որպես անկյունաքար կամ հիմք է ծառայում ճշմարիտ վերածննդի համար: Մեր փորձառությունը բխում է Աստծո Խոսքի ըմբռնումից: Մեր փառաբանությունն ու երկրպագությունը բխում են Խոսքով լցված սրտից: Վերափոխված կյանքը ճշմարիտ վերածննդի մեծագույն վկայությունն է:

Փառաբանության դրական հույզերը կարող են ուղեկցել վերածննդին, սակայն դրանք երբեք վերածննդի հիմք չեն դառնա: Ցանկացած այսպես կոչված վերածնունդ, որը հիմնված է բացառապես զգացմունքների կամ փորձառությունների արտաքին դրսևորման վրա,

լավագույն դեպքում մակերեսային է, վատթարագույն դեպքում՝ խաբուսիկ: Դա հոգևորության պատրանք է, այլ ոչ թե ճշմարիտ բարեպաշտություն: Իսկ եթե վերածնունդն սկիզբ է առնում Աստծո Խոսքից, ապա այն չի լինի պարզապես բոպեական պոռթկում, այլ կհանգեցնի երկարատև արդյունքների՝ փոփոխություններ կատարելով մեր և շրջապատողների կյանքում:

Պատմությունն այն մասին, թե ինչպես Հիսուսը Էմմաուսի ճանապարհին հայտնվեց երկու աշակերտներին, վկայում է ճշմարիտ վերածննդի մեկնարկի մեջ Աստվածաշնչի դերի մասին: Քրիստոսի այդ հետևորդները շատ շփոթահար էին: Սակայն աստիճանաբար Հիսուսը «մեկնում էր նրանց՝ ինչ որ Գրքերի մեջ գրված էր իր մասին» (Ղուկաս 24.27): Նա կրկնեց Մեսիայի մասին հինկտակարանյան մարգարեությունները: Հիսուսը կարող էր հրաշք գործել կամ ցույց տալ Իր ձեռքերի վերքերը՝ Իրեն աշակերտներին բացահայտելու համար: Սակայն Տերը դա չարեց: *Նա նրանց հետ աստվածաշնչյան դաս անցկացրեց:*

Ուշադրությո՛ւն դարձրեք իրենց վիճակի վերաբերյալ աշակերտների գնահատականին. «Եվ իրար ասացին. չէ՞ որ մեր սրտերը բորբոքվում էին մեզանում, երբ որ ճանապարհին մեզ հետ խոսում էր, և ինչպես գրքերը բաց էր անում մեզ համար» (Ղուկաս 24.32):

Ճշմարիտ վերածննդի ինչպիսի՜ օրինակ:

Ինչո՞ւ մենք չպետք է հենվենք մեր զգացմունքների վրա: Զգացմունքներն ինչպե՞ս կարող են խաբել մեզ: Զգացմունքներն ի՞նչ տեղ ունեն Տիրոջ հետ մեր փոխհարաբերություններում, և ի՞նչ տեղ նրանք *չպետք է* զբաղեցնեն:

Հորեքշաբթի ***հուլիսի 17***

Վերածնունդը, հավատն ու Խոսքը

Խոսելով այն ժամանակի մասին, որ նախորդելու է Իր վերադարձին, Հիսուսն ասել է. «Մարդու Որդին, գալիս, երկրի վրա հավատ կգտնի՞» (Ղուկաս 18.8): Ակնհայտ է, որ վերջին օրերին հավատը խիստ անբավարար է լինելու:

Մենք ինչպե՞ս կարող ենք սահմանել աստվածաշնչյան հավատը: Կարելի՞ է ասել, թե հավատը վստահություն է, որ Աստված մեզ կտա ամենը, ինչ կցանկանանք: Հավատը կենտրոնացա՞ծ է մեր ցանկությունների վրա: Կարելի՞ է ասել, թե հավատը վստահություն է, որ մենք կստանանք այն, ինչ ցանկանում ենք, եթե միայն շատ հավատանք դրան:

Մենք պետք է իմանանք այս հարցերի պատասխանները, այնպես չէ՞:

Ճշմարիտ հավատը միշտ կենտրոնացած է Աստծո կամքի, և ոչ թե մեր ցանկությունների վրա: Դա վստահությունն է առ Աստված, հավատ Նրա խոստումների հանդեպ, ինչպես նաև՝ Նրա Խոսքին համապատասխանող արարքները: Մեր հավատն աճում է, երբ մենք լսում ենք Աստծո Խոսքը և վարվում այնպես, ինչպես Գիրքն է ասում (Հռոմեացիս 10.17, Հակոբոս 2.17,18): Հավատի կառուցման համար անհրաժեշտ է բաց միտք, որը պատրաստ է ընդունել Աստծո Խոսքի ուսմունքը, ինչպես նաև՝ կատարել այն, ինչ ասում է Աստված, անգամ եթե դա հակասում է մեր ցանկություններին, որովհետև այդպիսով մենք նախապատրաստվում ենք Հոգու զորությունն ընդունելուն:

Ինչո՞ւ որոշ մարդկանց Աստվածաշնչի ընթերցանությունը առանձնապես օգուտ չի տալիս: Եբրայեցիս 4.1,2:

Մեր հոգևոր փորձառությունը վերածնվում է, երբ մենք հավատով ընդունում ենք Աստծո Խոսքը և ապավինում դրա Հեղինակին: Աստվածաշնչի հապճեպ ընթերցանության մեջ շատ քիչ օգուտ կա, երբ մենք այդ անում ենք պարտքի զգացումից ելնելով՝ համարելով մեր պարտականությունը: Մենք փոխվում ենք միայն այն ժամանակ, երբ յուրացնում ենք ընթերցվածը՝ թույլ տալով, որ աստվածաշնչյան ուսմունքը ձևավորի մեր մտքերն ու կյանքը:

Համեմատե՛ք Կափառնայումում անդամալույծ ծառա ունեցող հռոմեացի հարյուրապետի հավատը աշակերտների հավատի հետ Գալիլեայի ծովում փոթորկի ժամանակ (Մատթեոս 8.8-10, Հովհաննես 5.6-9, Մատթեոս 14.29-33): Մենք ի՞նչ կարող ենք սովորել յուրաքանչյուր դեպքում: _____

_____

_____

_____

_____

Հավատը չի աճում պարզապես Աստծո Խոսքի ընթերցանության կամ ունկնդրելու ժամանակ: Այն ծագում է, երբ մենք հուսացած ենք Աստծո խոստումներին՝ դրանք ընկալելով որպես մեզ ուղղված խոստումներ, երբ հավատում ենք, որ Նրա ասածը վերաբերում է անմիջապես մեզ: Աստված մեզանից յուրաքանչյուրին հավատի որոշակի չափ է պարգևել: Դա Երկնքի պարգևներից մեկն է (Հռոմեացիս 12.3): Երբ մենք մարզում ենք հավատը, որ Տերն արդեն տեղավորել է մեր սրտերի մեջ, այդ հավատը չի կարող չաճել:

Խոսքը վերածննդի պահապանն ու պաշտպանն է

Սուրբ Հոգին մեծ զորությամբ գործում էր Պողոս առաքյալի ուսմունքի և քարոզի միջոցով, երբ նա քրիստոնեական եկեղեցի էր կազմակերպում Եփեսոսում: Եփեսոս քաղաքում այդ ժամանակ մոտավորապես 250 հազար մարդ էր ապրում: Այն համարվում էր Ասիայի առևտրային կենտրոնը: Նավերը ապրանքներ էին բերում Ասիայի տարբեր անկյուններից, և մարդիկ գալիս-հավաքվում էին Եփեսոսում՝ գնելու նուրբ մետաքս, հազվագյուտ զարդեր, բուրավետ համեմունքներ, ձեռագործ գորգեր, արվեստի նրբաճաշակ գործեր և տարաշխարհիկ կերակուրներ: Եփեսոսը նաև Արտեմիս աստվածուհու երկրպագության կենտրոնն էր, իսկ ավելի ուշ այդ քաղաքում ի հայտ եկավ աշխարհահռչակ Ցելսի գրադարանը, որտեղ 12 հազար գիրք էր հաշվվում: Քաղաքն ուներ նաև ընդարձակ ամֆիթատրոն, որտեղ 15 հազար մարդ էր տեղավորվում: Այն օգտագործվում էր մեծ համերգների և թատերական ներկայացումների անցկացման համար: Ամենուրեք թագավորում էին սանձարձակությունն ու ամենաթողությունը: Եթե ինչ-որ տեղ կար մի վայր, որտեղ քիչ հավանական էր քրիստոնեության արմատավորումը, զարգացումն ու ծաղկումը, Եփեսոսն էր:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 20.27-32-ը: Ինչո՞ւ էր Պողոս առաքյալն անհանգստանում Եփեսոսի քրիստոնյաների համար: Ի՞նչ էր նա զգում Եփեսոսի եկեղեցու հանդեպ: Ի՞նչ տեղ էր նա հատկացնում Աստծո Խոսքին: _____

_____

_____

_____

Կարդացե՛ք Ա Պետրոս 1.22,23, Հակոբոս 1.21,22, Ա Հովհաննես 2,14-ը:

Առանձնացրե՛ք Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի խոսքերը՝ յուրաքանչյուր քրիստոնյայի կյանքում Աստվածաշնչի կարևորության վերաբերյալ: Առանձնահատուկ ուշադրություն դարձրեք առաքյալների ուսմունքին՝ մեր հոգևորության վրա ունեցած Աստվածաշնչի ազդեցության առումով: _____

_____

_____

_____

Աստծո Խոսքի դերի մասին ի՞նչ ընդհանուր բան եք դուք տեսնում վերը բերված բոլոր տեքստերում: Ինչո՞ւ պետք է Աստվածաշունչը կենտրոնական տեղ զբաղեցնի հոգևոր վերածննդի մեջ՝ ինչպես անձնական, այնպես էլ հասարակական մակարդակում:

Ուրբաթ *հուլիսի 19*

Հետագա ուսումնասիրության համար

««Օրենքին և վկայությանը դիմեցեք. եթե նրանք չխոսեն այս Խոսքի համեմատ, նրանք արշալույս չունեն» (Եսայիա 8.20): Մարգարեն Աստծո ժողովրդին ուղղորդում է դեպի Սուրբ Գիրքը՝ որպես հուսալի պաշտպանություն կեղծ ուսուցիչների և դիվական մոլորությունների ազդեցությունից: Սատանան օգտագործում է ցանկացած միջոց՝ մարդկանց խանգարելու ճանաչել Աստվածաշունչը, որովհետև այդ Գրքի հստակ ուսմունքը բացահայտում է նրա խաբեությունը: Ամեն անգամ, երբ ճշմարիտ վերածնունդ է տեղի ունենում, չարի իշխանն սկսում է առավել ակտիվորեն գործել. ներկայումս նա իր բոլոր ուժերը կենտրոնացնում է Քրիստոսի և Նրա հետևորդների դեմ պայքարի մեջ: Մենք շուտով կբախվենք վերջին մեծագույն խաբեությանը: Մեր աչքերի առջև հակաքրիստոսը գործելու է իր հրաշքները: Ձեղծարարություններն այնքան նման կլինեն Աստծո զորության հայտնությունների, որ միայն Սուրբ Գրքի օգնությամբ հնարավոր կլինի ճշմարտությունը տարբերել կեղծիքից: Յուրաքանչյուր հրաշք և յուրաքանչյուր պնդում հարկավոր է ստուգել աստվածաշնչյան վկայությամբ:

Աստծո պատվիրաններին հնազանդվողները դիմադրության և ծաղրի կհանդիպեն: Նրանք կկարողանան դիմակայել միայն Աստծով: Գալիք փորձություններին դիմանալու համար նրանք պետք է հասկանան Աստծո կամքը, որ բացված է Նրա Խոսքում: Նրանք միայն այն դեպքում կկարողանան պատշաճ կերպով պատվել Տիրոջը, եթե ճիշտ հասկանան Նրա բնավորությունը, կառավարման սկզբունքները և մտադրությունները, ինչպես նաև՝ գործեն համապատասխան կերպով: Միայն սեփական մտքերը աստվածաշնչյան ճշմարտություններով թրծած մարդիկ կդիմակայեն վերջին մեծ պայքարում» (Է. Ուայթ, Մեծ պայքար, 593,594):

Հարցեր քննարկման համար.

1. Ուշադիր կարդացե՛ք «Հետագա ուսումնասիրության համար» բաժնում էլեն Ուայթի գրքից բերված հատվածը: Հեղինակն ի՞նչ դեր է հատկացնում Աստծո Խոսքին, հատկապես՝ վերջին ժամանակի և սատանայի վերջին խաբեությունների համատեքստում:
2. Խորհեցե՛ք այսպիսի մի նախադասության իմաստի մասին. «Կեղծիքն այնքան նման կլինի Աստծո զորության դրսևորմանը, որ միայն Սուրբ Գրքի օգնությամբ հնարավոր կլինի ճշմարտությունը տարբերել ստից»: Սա մեզ ի՞նչ է ասում այն մասին, թե որքան զգույշ պետք է լինենք ճշմարտության վերաբերյալ դատողությունների մեջ, որոնք հիմնված են միայն մեր անձնական փորձառության կամ մեր զգացողությունների վրա:
3. Այս շաբաթ մենք կարդացել ենք Հակոբոս 1.22 համարը, որտեղ առաքյալը մեզ կոչ է անում Խոսքը կատարողներ լինել: Ի՞նչ է դա նշանակում, և ինչո՞ւ է տվյալ կոչն այդքան կարևոր մեզ համար, եթե մենք ձգտում ենք մեր կյանքում ճշմարիտ հոգևոր վերածնունդ վերապրել: Ինչո՞ւ անհամեմատ ավելի հեշտ է կարդալ, սովորեցնել և խոսել հավատի մասին, քան այն դրսևորել գործնականում: Շաբաթվա ընթացքում վերլուծե՛ք, թե որքանով է ձեզ հաջողվում Խոսքը կատարողներ լինել:

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՊՏՈՒՂՆ ԵՆ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Մատթեոս 28.19,20, Հովհաննես 20.21, Գործք առաքելոց 2, Գործք առաքելոց 22.1-15, Հովհաննես 6.1-11, Գործք առաքելոց 8.26-38:

Հիշելու համարը.

«Բայց զորություն կառնեք՝ երբ որ Հոգին ձեզ վրա կգա, և Իմ վկաները կլինեք Երուսաղեմում և բոլոր Հրեաստանի և Սամարիայի մեջ՝ մինչև երկրի ծայրերը» (Գործք առաքելոց 1.8):

Վերածննդի նպատակն այն է, որ մեր սրտերը լցնի Հիսուսի հանդեպ այնպիսի սիրով, որ մենք ցանկանանք այդ սիրով կիսվել մեր ճանապարհին հանդիպող յուրաքանչյուր մարդու հետ: Ճշմարիտ վերածնունդը դրդում է մեր սրտերին՝ ընդունել Աստծո բարությունը, կարեկցանքը, ներումն ու զորությունը: Մենք այնքան ենք հնազանդվում Նրա սիրուն և վերափոխվում Նրա շնորհով, որ չենք կարող լռել:

Սակայն բացառապես անձնական հոգևոր փորձառության վրա հիմնված «վերածնունդը» աչքաթող է անում ամենագլխավորը: Եթե այն հանգեցնում է մեր «սրբության չափանիշներին» չհամապատասխանող շրջապատի մարդկանց քննադատելու ոգու զարգացմանը, նշանակում է՝ այն ի վերուստ ներշնչված չէ: Ճիշտ նույն կերպ եթե վերածննդի գործընթացի մեջ շեշտադրված են միայն արտաքին վարքի փոփոխությունները, և ոչ թե սրտի հոգևոր վերափոխումը, ապա ինչ-որ բան սխալ է տեղի ունենում:

Սրտի փոփոխությունը հանգեցնում է վարքի փոփոխության: Ճշմարիտ վերածնունդը երբեք չի հանգեցնում սեփական անձի վրա կենտրոնացման, ինքնաբավության կամ ինքնափառաբանման: Ընդհակառակը, այն միշտ տանում է շրջապատողների հանդեպ անշահախնդիր հոգատարության: Երբ մեր սրտերը նորոգվում են Աստծո շնորհով, մենք փափագում ենք օրհնելու շրջապատողներին և ծառայելու կարիքավորներին: Ցանկացած ճշմարիտ վերածնունդ հանգեցնում է վերանվիրաբերման՝ ավետարանչական աշխատանքի և ծառայության մեջ:

Քրիստոսի հրաժեշտի հանձնարարությունն ու խոստումը

Քրիստոսը չհիմնեց Իր եկեղեցին նրա համար, որ նա հոգ տաներ միայն ինքն իր մասին: Հիսուսի հրաժեշտ խոսքերը կենտրոնացած են եկեղեցու բուն առաքելության վրա: Քրիստոսը ցանկանում է, որ եկեղեցին նայի առաջ՝ իր սահմաններից դուրս: Նա հիմնել է այն, որ աշխարհի հետ կիսվի Իր սիրով և փրկության մասին լուրով:

Կարդացե՛ք բերված տեքստերը: Յուրաքանչյուր հատված ինչպե՞ս է բացահայտում Իր եկեղեցու համար Հիսուսի անկեղծ ցանկությունը:

Մատթեոս 28.19,20 _____

Մարկոս 16.15 _____

Ղուկաս 24.45-49 _____

Հովհաննես 20.21 _____

Քրիստոսի համբարձումից հետո եկեղեցին պետք է դառնար աշխարհին հայտնված Նրա սիրո ու շնորհի մարմնավորումը: Աշակերտներին առանձնահատուկ առաքելություն էր վստահվել: Նրանք լուր ունեին այս աշխարհի համար: Նրանք պետք է կատարեին իրենց խնդիրը՝ շարունակելով Հիսուսի սկսած գործը:

«Աստծո մտահղացման համաձայն՝ եկեղեցին կոչված է համագործակցելու Նրա հետ՝ մարդկանց փրկության գործում: Այն ստեղծված է ծառայության համար, և նրա խնդիրն է՝ Ավետարանը տանել աշխարհին: Ի սկզբանե Աստծո ծրագիրն այն էր, որ եկեղեցին աշխարհում արտացոլի Նրա լիությունն ու կատարելությունը: Նրա անդամները՝ մարդիկ, ում Նա խավարից կանչել էր Իր լույսի մեջ, պետք է հայտնեն Իր փառքը: Եկեղեցին Քրիստոսի շնորհի գանձերի պահապանն է, և նրա միջոցով է, որ վերջին հաշվով անգամ «իշխանություններին և պետություններին երկնավորներում» (Եփեսացիս 3.10) պետք է բացահայտվի Աստծո սիրո ողջ լիությունը» (Է. Ուայթ, Գործք առաքելոց, 9):

Մարդկության փրկությունը հուզում է Հիսուսի սիրտը: Պողոս առաքյալը իր երիտասարդ բարեկամ Տիմոթեոսին գրում էր, որ Փրկչի ցանկությունն է, որ «բոլոր մարդիկ փրկվեն և ճշմարտության գիտությանը գան» (Ա Տիմոթեոս 2.4): Պետրոս առաքյալն ավելացնում է, որ Տերը «երկայնամիտ է լինում մեզ վրա, որովհետև չի կամենում, որ կորչողներ լինեն, այլ որ բոլորն ապաշխարության հասնեն» (Բ Պետրոս 3.9):

Ձեր կյանքում ի՞նչն է վկայում շրջապատողների փրկության հարցում ձեր շահագրգռվածության մասին: Ձեր պատասխանն ի՞նչ է ասում հենց ձեր և ձեր առաջնահերթությունների մասին:

Երկուշաբթի *հուլիսի 22*

Ստանալով խոստումը

Հավանաբար, աշակերտների փոքրիկ խմբին թվում էր, թե Աստծո սերն ու ճշմարտությունը ողջ աշխարհին հասցնելու հանձնարարությունը գործնականում անիրականանալի է: Մարտահրավերը մեծ էր, խնդիրը՝ հսկայական: Պատմաբանները հայտնում են, որ առաջին դարում Հռոմեական կայսրության մեջ ապրում էր վաթսունից յոթանասուն միլիոն մարդ: Գործք առաքելոց գրքի առաջին գլխի համաձայն՝ Պենտեկոստեի օրը վերնատանը մոտ 120 քրիստոնյա էր հավաքվել: Դա նշանակում է միջինում մեկ քրիստոնյա՝ կայսրության 500000 կամ 580000 բնակչի հաշվով: Մարդկային տեսակետից Ավետարանով ողջ աշխարհն ընդգրկելու Հիսուսի հրահանգը անմիտ էր թվում:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 2-ը: Սուրբ Հոգու հեղումն ինչպե՞ս էր ազդել վաղ եկեղեցու առաքելության վրա:

Արդյունքներն ապշեցուցիչ էին: Քրիստոնեական եկեղեցին բազմակիորեն աճեց: Հիսուսի սիրո լուրը տարածվեց՝ հասնելով կայսրության ամենահեռավոր անկյունները:

Պահպանվել է նամակագրությունը հռոմեական Բեթանիա նահանգի (ժամանակակից Թուրքիայի հյուսիսային ծովեզր) կառավարիչ Պլինիոս Կրտսերի և Տրոյանոս կայսեր միջև, որը թվագրվում է մոտավորապես մեր թվարկության 110 թվականին: Պլինիոսը նկարագրում էր քրիստոնյաներին փնտրելու և պատժելու ուղղությամբ իր ձեռնարկած միջոցառումները. «Տարբեր տարիքի, տարբեր սոցիալական խավերի, անգամ տարբեր սեռերի շատ մարդկանց կանչում և կանչելու են դատաստանի: Ոչ միայն քաղաքները, այլև ամենահեռավոր գյուղերը վարակված են այդ սնահավատությամբ [քրիստոնեությամբ]»:

Սա ուշագրավ նամակ է: Նա վկայում է այն մասին, որ միայն մի քանի սերունդ անց քրիստոնեությունը թափանցել էր գործնականում հասարակական բոլոր շերտերը և անգամ հեռավոր գավառները:

90 տարի անց, մոտավորապես ՔՀ 200 թվականին հռոմեացի օրենսդիր Տերտուղիանոսը, դարձի գալով ի քրիստոնեություն, մի խիզախ նամակ գրեց հռոմեական մագիստրատներին՝ ջատագովելով

քրիստոնեությունը: Նա պարծենում էր նրանով, որ «բոլոր քաղաքների գրեթե բոլոր քաղաքացիները քրիստոնյաներ են»:

Գործք առաքելոց գիրքը իր Տիրոջ մասին վկայությանը նվիրված, վերածնված եկեղեցու պատմությունն է: Հոգևոր վերածնունդը միշտ տանում է ջերմեռանդ վկայության: Վկայությունը կյանքի վերափոխման բնական հետևանքն է: Իր աշակերտներին Հիսուսն ասաց. «Իմ հետևից եկե՛ք, և ես ձեզ մարդկանց որսորդ կդարձնեմ» (Մատթեոս 4.19): Որքան ավելի շատ ենք մոտենում Հիսուսին, այնքան ավելի շատ ենք հոգում այն մասին, ինչը հուզում է Նրան: Եթե մեզ համար անհետաքրքիր է Նրա սիրով շրջապատողների հետ կիսվելը, նշանակում է՝ մենք հեռվից ենք հետևում Նրան և անձնական հոգևոր վերածննդի կարիք ունենք:

Երեքշաբթի ***հուլիսի 23***

Անձնական վկայության ուժը

Կրոնական ծեսերն ինքնին ի զորու չեն փոխելու կյանքը: Կրոնական ձևամոլությունը տանում է հոգևոր անպտղության: Դավանաբանությունը սիրտը չի փոխի: Նորկտակարանյան վկայության զորությունը նրանում էր բովանդակվում, թե ինչ կյանք էին վարում Ավետարանի միջոցով փոխված մարդիկ: Աշակերտները բեմադրություն չէին խաղում: Նրանք ոչինչ չէին անում մեքենաբար, սովորության համաձայն: Նրանց մեջ որևէ արհեստական հոգևորություն չկար: Կենդանի Քրիստոսի հետ հանդիպումը փոխեց նրանց, և նրանք չէին կարող լռել:

Ի՞նչ ընդհանրություն է կարմիր թելի նման անցնում Պողոսի և Հովհաննեսի փորձառությունների միջով: Ի՞նչն էր նրանց այդպես ուժեղ վկաներ դարձրել: Գործք առաքելոց 22.1-15, Փիլիպեցիս 3.1-7, Ա Հովհաննես 1.1-4: _____

_____

_____

Պենտեկոստեի օրն աշակերտներն արդեն ուրիշ մարդիկ էին: Ինչ-որ բան էր տեղի ունեցել *նրանց մեջ*, որպեսզի Հոգին կարողանար ինչ-որ բան անել *նրանց միջոցով:* Սուրբ Հոգին ինչ-որ բան էր արել *նրանց համար,* որպեսզի հետո ինչ-որ բան անի *նրանց հետ միասին:* Հոգին լցրել էր նրանց կյանքը, որ կենդանացնի շրջապատողների կյանքը:

Ահա թե ինչպես դա բացատրեց Հիսուսը. «Ինձ հավատացողը, ինչպես Գիրքն ասում է, նրա փորից կենդանի ջրերի գետեր կբխեն» (Հովհաննես 7.38): Հունարեն *«պիստեուոն»* բառը, որն այստեղ թարգման-

ված է «հավատում է», անհամեմատ ավելին է նշանակում, քան մակերեսային հավատը կամ մտավոր համաձայնությունը: Այդ հավատն ամուր է քարի նման, կատարյալ վստահություն է: Դա ակտիվ, կյանքը վերափոխող հավատ է Քրիստոսի հանդեպ, ով խաչի վրա Իր կյանքը տվեց մարդկության մեղքերի համար: Հիսուսը ցանկանում էր ասել. երբ Նրա սերը հագեցնում է մեր հոգևոր ծարավը, այն մեր սրտերից թափվում է շրջապատող մարդկանց վրա:

«Աստծուն հաճո է, որ մենք, պատմելով Իր հավատարմության մասին, աշխարհին բացահայտենք Քրիստոսին: Մենք պետք է ընդունենք Նրա բարությունը, որը դրսևորվել է հին աշխարհի արդարների միջոցով: Բայց ամենագործուն վկայությունը մեր սեփական փորձառության մասին վկայությունն է: Մենք վկայում ենք Աստծո մասին, երբ մեր մեջ գործում է Աստծո զորությունը» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 347):

Ամենազորեղ վկայությունը ելնում է այն քրիստոնյայից, ով անձամբ ծանոթ է Հիսուսի հետ: Ավելի հիասքանչ բան չկա, քան այն վկայությունը, որը բնականորեն բխում է Հիսուսի սիրով լի սրտից:

Դուք ի՞նչ կարող եք պատմել այն մասին, ինչ Տերն արել է ձեզ համար: Դուք ինչպե՞ս կարող եք սովորել դրանով կիսվել շրջապատող մարդկանց հետ:

Հորեքշաբթի ***հուլիսի 24***

Վկայող հավատն աճող հավատ է

Ակտիվության դրսևորումը կյանքի օրենքն է: Առողջ լինելու համար մեր մարմնին անհրաժեշտ է մշտապես մարզվել: Յուրաքանչյուր օրգան, մկան, յուրաքանչյուր հյուսվածք ամրապնդվում և էլ ավելի ակտիվ է դառնում մարզումների շնորհիվ: Երբ մենք անտեսում ենք վարժությունները, մեր իմունային համակարգը թուլանում է, և մենք ավելի ընկալունակ ենք դառնում հիվանդության հանդեպ:

Մեզ հետ ինչ-որ նման բան տեղի է ունենում նաև հոգևոր առումով, երբ վկայությամբ չենք մարզում մեր հավատը: Հիսուսի խոսքերն այն մասին, որ «ավելի երանելի է տալը, քան թե առնելը» (Գործք առաքելոց 20.35), իրագործվում է անմիջապես մեր հոգևոր կյանքում: Շրջապատողների հետ կիսվելով Աստծո Խոսքով՝ մենք աճում ենք հոգևորապես: Որքան ավելի ենք մենք սիրում Հիսուսին, այնքան ավելի շատ ենք ձգտում վկայել Նրա սիրո մասին: Որքան ավելի շատ ենք վկայում Նրա

սիրո մասին, այնքան ավելի շատ ենք սիրում Նրան: Կիսվելով մեր հավատով՝ մենք ամրապնդում ենք այն:

Մեր հավատի մասին վկայելու տեսանկյունից մեզ ի՞նչ է սովորեցնում Հիսուսի կատարած հրաշքը հացերի և ձկնիկների հետ: Հովհաննես 6.1-11: _____

_____

_____

_____

Որքան ավելի շատ ենք մենք կիսվում մեր հավատով, այնքան ավելի է այն բազմապատկվում: Բազմապատկման այս օրենքը հոգևոր կյանքի աստվածային սկզբունքն է: Մենք ի՞նչ ենք ընտրում՝ տալ և աճե՞լ, թե՞ պահել և թառամել: Հիսուսը բազմապատկում է մեր հավատը, երբ մենք դրանով կիսվում ենք շրջապատողների հետ, անգամ եթե այն բավականին թույլ է: Երբ մենք մեզ շրջապատող քաղցած մարդկանց հետ կիսվում ենք Հիսուսով (Կյանքի հացով), մեր հավատը բազմապատկվում է և ձեռք ենք բերում ավելին, քան ունեինք սկզբում:

Սկզբում Հիսուսն ուներ հինգ հաց և երկու ձկնիկ: Այն բանից հետո, երբ հինգ հազար մարդ լիովին կշտացավ, պարզվեց, որ ավելի շատ սնունդ է մնացել, քան կար սկզբում՝ հավաքվեց տասներկու զամբյուղ:

Նորկտակարանյան եկեղեցուն Հիսուսի տված հրահանգները լիովին հստակ են, դրանք չի կարելի չհասկանալ: Նա հայտարարեց. «Ձրի առել եք, ձրի տվեք» (Մատթեոս 10.8): Վկայությունը քնքուշ զեփյուռ է, որը վերածննդի կայծեր վառեց ու բորբոքեց՝ դրանք վերածելով Պենտեկոստեի բոցերի: Եթե աղոթքն ու Աստվածաշնչի ուսումնասիրությունը չեն ուղեկցվում վկայությամբ ու ծառայությամբ, վերածննդի կրակը շուտով մարում է, և մարող խանձողները սառչում են:

Որքան ավելի շատ ենք մենք վկայում, այնքան ավելի է աճում մեր հավատը, այնպես չէ՞: Դուք սեփական փորձով վերապրե՞լ եք այդ կարևորագույն հոգևոր փորձառությունը:

Հինգշաբթի ***հուլիսի 25***

Վերածնունդը, վկայությունը և Աստծո միջամտությունը

Գործք առաքելոց գրքում նկարագրված՝ նորկտակարանյան քրիստոնեության անշեղ աճի մասին ցնցող պատմությունը Հիսուսի սիրո մասին վկայող եկեղեցու վերածննդի պատմությունն է: Դա պատմու-

թյունն է եկեղեցու, որը կանոնավոր կերպով վերապրում էր Աստծո միջամտությունը: Առաջին քրիստոնյաների համար վկայությունը կենսակերպ էր:

«Եվ բոլոր օրը չէին դադարում տաճարում և տներում սովորեցնել և Հիսուս Քրիստոսին ավետարանել» (Գործք առաքելոց 5.42): Հալածանքները միայն նպաստում էին Ավետարանի գործի առաջընթացին: Երբ հալածանքները ցրեցին Երուսաղեմի եկեղեցու անդամներին, նրանք «ման էին գալիս՝ խոսքն ավետարանելով» (Գործք առաքելոց 8.4):

Աստվածային միջամտության ամենավառ օրինակներից մեկը, որ գրի է առնված Գործք առաքելոց գրքում, Փիլիպոսի և եթովպացի ներքինու պատմությունն է:

Գործք առաքելոց 8.26-39-ում կարդացե՛ք պատմությունն այն մասին, թե ինչպես է Փիլիպոսը ուսուցանում ներքինուն, և վերջինիս արձագանքի մասին: Այս պատմությունը մեզ ի՞նչ է ասում վերածննդի ու վկայության մասին: _____

_____

_____

_____

«Հրեշտակը Փիլիպոսին ցույց տվեց այն մարդուն, ով լույս էր որոնում և պատրաստ էր ընդունել Ավետարանը, այսօր էլ հրեշտակները ուղղորդում են այն աշխատողների քայլերը, ում շուրթերը բացում և սրտերն ազնվացնում է Սուրբ Հոգին: Փիլիպոսի մոտ ուղարկված հրեշտակն ինքը կարող էր եթովպացու համար անել այն, ինչ պետք էր, սակայն, Աստծո մտահղացման համաձայն, մերձավորներին ծառայել և նրանց օգնել պարտավոր են մարդիկ» (Է. Ուայթ, Գործք առաքելոց, 109):

Վերածնունդը ներառում է երեք կարևոր բաղադրիչ՝ աղոթքը, Աստծո Խոսքի ուսումնասիրությունը և վկայությունը: Երբ Աստծո ժողովուրդը Նրան որոնում է ներշնչված, անկեղծ աղոթքի մեջ, երբ նրա միտքը ներթափանցված է Աստծո Խոսքի ճշմարտություններով, երբ նա շրջապատողներին ջերմեռանդորեն վկայում է Նրա սիրո և ճշմարտության մասին, այդ ժամանակ Աստված միջամտում է և ամենաանսպասելի հնարավորություններ է բացում ճշմարտության հռչակման համար:

Ազնի՛վ եղեք ինքներդ ձեզ հետ. դուք ի՞նչ եք անում, երբ վկայության հնարավորություն է ստեղծվում: Դուք վկայո՞ւմ եք, թե՞ պատրվակներ եք գտնում՝ դա չանելու համար: Ձեր պատասխանն ի՞նչ է ասում վերածննդի ու վերափոխման ձեր կարիքի մասին:

Հետագա ուսումնասիրության համար

«Իր իմաստությամբ Տերը ճշմարտությունը որոնողներին ուղղորդում է դեպի այն մարդիկ, ովքեր գիտեն այն: Երկնքի մտահղացմամբ՝ նրանք, ում միտքը պայծառացրել է լույսը, պետք է դրանով կիսվեն խավարում գտնվողների հետ: Այն մարդիկ, ովքեր գիտելիքներ են քաղում իմաստության մեծ Աղբյուրից, գործիքներ և միջնորդներ են դառնում, ում օգնությամբ Ավետարանը վերափոխող ազդեցություն է գործում մտքի և սրտի վրա» (Է. Ուայթ, Գործք առաքելոց, 134):

«Աստված կարող էր մեղավորներին առանց մեր օգնության էլ փրկել: Նրա հետ համագործակցելը մեզ է անհրաժեշտ, որպեսզի ձևավորենք քրիստոսանման բնավորություն: Որպեսզի Նրա հետ միասին ուրախանանք յուրաքանչյուր փրկագնված հոգու համար, պետք է մասնակցենք մեր Փրկչի աշխատանքին» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 142):

Հարցեր քննարկման համար

1. Ո՞րն է այս շաբաթվա դասի գլխավոր գաղափարը: Աստված կանչո՞ւմ է ձեզ՝ ձեր կյանքում որոշ փոփոխություններ կատարելու: Անհրաժե՞շտ է, որ դուք վերանայեք ձեր առաջնահերթությունները: Ձեզ ինչի՞ է կանչում Աստված:
2. Մտորե՛ք այն զարմանահրաշ ճշմարտության մասին, որ ինչքան ավելի շատ ենք վկայում մեր հավատի մասին, այնքան այն ավելի է աճում: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է դա այդպես: Ինչո՞ւ այդ սկզբունքն այդքան խոր իմաստ ունի:
3. Դուք հաճա՞խ եք վկայում ձեր Հիսուսի մասին: Եթե հազվադեպ, հարցրե՛ք ինքներդ ձեզ՝ ինչո՞ւ: Դուք վախենո՞ւմ եք տհաճություններից: Եթե այդպես է, ապա խորհեցե՛ք Հիսուսի և այն մասին, թե որքան հաճախ էին Նրան մերժում և չէին հասկանում: Եթե մերժումը չէր կանգնեցնում Նրան, ապա ինչո՞ւ այն պետք է խանգարի ձեզ: Թե՞ դուք չեք համարձակվում վկայել, որովհետև չգիտեք, թե ինչ պետք է ասել: Այդ դեպքում սա ձեզ ի՞նչ է ասում Տիրոջն առավել խորությամբ ճանաչելու անհրաժեշտության մասին:
4. Անցյալ շաբաթ մենք խոսում էինք այն մասին, որ միայն կրոնական ծեսերն ու ձևերը չեն կարող փոխել սիրտը: Միևնույն ժամանակ,

ծեսերն ու ավանդույթները ի՞նչ տեղ են զբաղեցնում մեր հավատի մեջ և եկեղեցում: Կարո՞ղ են ծեսերն ու ավանդույթները օգտակար լինել վերածննդի ու վերափոխման մեջ, և եթե այո, ապա ի՞նչ կերպ:

5. Ինչո՞ւ ենք մենք այնքան մեծ բավականություն զգում, երբ Աստված մեզ օգտագործում է հոգիները Իրեն դարձնելու համար:

ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՊՏՈՒՂՆ Է

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Մատթեոս 26.69-74, Գործք առաքելոց 5.28-32, 6.3-10, 9.1-9, Փիլիպեցիս 2.5-8:

Հիշելու համար.

«Որովհետև մեր զինվորության զենքերը մարմնավոր չեն, այլ Աստծով զորավոր՝ բերդեր քանդելու. խորհուրդներ ենք քանդում, և ամեն բարձրություն, որ գոռոզանում է Աստծո գիտության դեմ, և գերի ենք բռնում ամեն միտք՝ Քրիստոսին հնազանդեցնելու համար» (Բ Կորնթացիս 10.4,5):

Առօրյա կյանքի վրա վերածննդի ազդեցության օրինակը կարելի է տեսնել Ուելսի վերածննդի օրինակով, որ տեղի է ունեցել 1904 թվականին: Էվան Ռոբերտսը և նրա բարեկամներից ոմանք սկսել էին ջանասիրաբար աղոթել Սուրբ Հոգու հեղման համար: Նրանք կանչում էին Աստծուն, ուսումնասիրում Սուրբ Գիրքը և պատմում իրենց հավատի մասին:

Այդ աղոթքներին ի պատասխան հեղվեց Սուրբ Հոգին: Մարդիկ փոխվեցին: Վեց ամսվա ընթացքում փոքրիկ Ուելսում 100 հազար մարդ դարձի եկավ: Այդ վերածննդի արդյունքները զգացվում էին ողջ երկրում: Ամեն օր մարդիկ հազարներով հավաքվում էին եկեղեցիներում՝ աղոթելու: Կոպիտ, հայհոյելու սովոր հանքափորները կերպարանափոխվել էին և դարձել բարի ու հարգալից: Անգամ հանքերում աշխատող ձիերը ստիպված էին վարժվել նոր հրամաններին, որովհետև հանքափորները դադարել էին հայհոյել: Հնազանդությամբ լի վերափոխված կյանքը սրտերի դարձի գալու արդյունքն էր: Սա ճշմարիտ վերածննդի անհերքելի վկայություն է:

Վերափոխված կյանքը

Վերածնունդը պարզապես Հիսուսի հետ ենթադրյալ մերձությունից բխող ինչ-որ ջերմ, հաճելի զգացողություն չէ: Այն վերափոխում է կյանքը: Երբեմն Աստվածաշնչի հեղինակները սուր կերպով զգում էին Հիսուսի հետ իրենց մոտիկությունը, իսկ լինում էր, որ նրանց թվում էր, թե իրենք հեռու են Նրանից: Երբեմն նրանց հոգին ճախրում էր աննկարագրելի հրճվանքից, և նրանք վայելում էին Նրա ներկայության ուրախությունը, երբեմն էլ բացարձակապես չէին զգում Նրա մոտիկությունը:

Դրական հույզերը վերածննդի պարտադիր արդյունքը չեն: Վերածննդի ճշմարիտ արդյունքը փոխված կյանքն է: Վերածննդի պտուղը ոչ թե զգացմունքներն են, այլ հնազանդությունը: Դա երևում է Պենտեկոստեից հետո աշակերտների կյանքի օրինակով:

Վերլուծե՛ք Պետրոսի վարքը նախքան Հիսուսի մահը, Նրա հարությունից հետո և Պենտեկոստեից հետո: Ի՞նչ եք նկատում: Պետրոսի վարքում ի՞նչ փոփոխություններ առաջ բերեցին Քրիստոսի մահը, Նրա հարությունը և Պենտեկոստեն:

Մատթեոս 26.69-74. Պետրոսի վարքը նախքան Քրիստոսի մահը _____

_____

_____

Հովհաննես 21.15-19. Պետրոսի վարքը Քրիստոսի հարությունից հետո _____

_____

_____

Գործք առաքելոց 5.27-32. Պետրոսի վարքը Պենտեկոստեից հետո _____

_____

Սուրբ Հոգու հեղումը Պենտեկոստեի օրը դրամատիկական փոփոխություն կատարեց Պետրոսի կյանքի ու վարքի մեջ: Այդ իրադարձությունը թույլ, կասկածամիտ հավատացյալին վերափոխեց հավատով առլեցուն, հնազանդ աշակերտի: Մի ժամանակ չմտածված խոսքերի և դատարկ խոստումների հակված Պետրոսն այժմ դարձել էր հավատի այր, խանդավառ վկա, նա դադարել էր վախենալ: Սա մեծազոր օրինակ է այն բանի, թե ինչ կարող է անել Սուրբ Հոգին յուրաքանչյուր հավատավոր, Տիրոջը հավատարիմ մարդու համար:

Հնազանդության բարձր գինը

Հավատի և այդ հավատի համար վճարված գնի առաջին օրինակներից մեկը Ստեփանոսի կյանքն է:

Ստեփաննոսի մասին ի՞նչ են հաղորդում բերված տեքստերը: Գործք առաքելոց 6.3-10, 7.55,56 _____

_____

_____

Սուրբ Հոգով լցվելը աշակերտներին բերեց անշահախնդիր, ազնվաբարո կյանքի: Հավատը նրանց տանում էր հնազանդության: Հոգևոր պատերազմը ժամանակ առ ժամանակ չափազանց դաժան էր դառնում, բայց Հիսուսը՝ նրանց Փրկիչն ու Տերը, նրանց կողքին էր, որպեսզի ամրապնդի նրանց հավատը: Նրանց քարկոծում էին, բանտերն էին նետում, այրում էին խարույկների վրա, նրանք ընկնում էին նավաբեկությունների մեջ: Նրանց հավատը շատ թանկ էր նստում իրենց վրա: Քրիստոսի շատ աշակերտներ նահատակվում էին:

Գործք առաքելոց 7-ում գրի է առնված Ստեփանոսի տպավորիչ քարոզը Իսրայելի պատմության մասին: Նա հիշատակում է Աբրահամին, Իսահակին, Հակոբին, Հովսեփին, Մովսեսին, Դավթին և Սողոմոնին: Իր քարոզում Ստեփանոսը խոսում էր Աստծո հավատարմության մասին, որը հատկապես նկատելի է Իսրայելի անհավատարմության ֆոնի վրա: Ստեփանոսն իր քարոզն ավարտում է խիզախ հայտարարությամբ այն մասին, որ Իսրայելի առաջնորդները խախտել են Աստծո ուխտը և դիմադրել Սուրբ Հոգու ազդեցությանը (Գործք առաքելոց 7.51-53):

Ստեփանոսի հետ ի՞նչ տեղի ունեցավ Հիսուսի մասին վկայելու պատճառով: Սա մեզ ի՞նչ է ասում այն մասին, թե որքան բարձր կարող է լինել հավատարմության գինը: Գործք առաքելոց 7.54-60: _____

_____

_____

Ստեփանոսը հնազանդ էր Աստծո կոչին և հավատարիմ Աստծո առաքելությանը ընդհուպ մինչև մահը: Թեև մեզանից ոչ բոլորից կպահանջվի մահվամբ վկայել մեր հավատարմությունը, մենք պետք է այնքան նվիրված լինենք Տիրոջը, որ եթե անգամ պահանջվի մեռնել, կանգ չենք առնի, հետ չենք դառնա, այլ, Ստեփանոսի նման, հավատարիմ

կմնանք մինչև վերջ: Միանգամայն հնարավոր է, որ հիմա այս տողերը կարդացող որևէ մեկը երբևէ իր կյանքը կզոհի հանուն Տիրոջ գործի:

Ի՞նչ տեղի կունենար, եթե դուք հայտնվեիք մի իրադրության մեջ, որը կսպառնար ձեր կյանքին և ծագած կլիներ այն պատճառով, որ դուք խիզախորեն վկայում եք Քրիստոսի մասին: Թեև հիմա դուք, իհարկե, չեք կարող իմանալ, թե ինչպես կվարվեք, սակայն ինչպե՞ս ձեր նախկին արարքները կորոշեն ձեր հնարավոր արձագանքն այդպիսի իրավիճակում:

Երեքշաբթի ***հուլիսի 30***

Երբ Հոգին զարմացնում է

Սողոսը դաժանաբար հալածում էր քրիստոնյաներին: Նա համարում էր, որ դիմակայելով այդ «մոլեռանդ աղանդին», ինքը կատարում է Աստծո կամքը: Երբ Սողոսը գնում էր Դամասկոս, որպեսզի ձերբակալի քրիստոնյաներին և նրանց բերի Երուսաղեմ՝ կտտանքների ենթարկելու, Հիսուսը դրամատիկ կերպով կանգնեցրեց նրան: Դամասկոսի ճանապարհին Սողոսի վերապրած փորձառությունը փոխեց ոչ միայն նրա կյանքը, այլև աշխարհը:

Գործք առաքելոց 9.1-9-ում կարդացե՛ք Պողոսի դարձի գալու փորձառությունը: Ինչո՞ւ Տերն այդ փորձառությունից անմիջապես հետո նրան ուղարկեց Անանիայի մոտ: Ի՞նչ կարևոր դաս կա դրանում մեզ համար: _____

_____

_____

«Շատերը համարում են, որ ստացած լույսի և փորձառությունների համար պատասխանատվությունը նրանք կրում են միայն Քրիստոսի առջև և ոչինչ պարտական չեն Նրա երկրային հետևորդներին: Հիսուսը մեղավորների Բարեկամն է, և Նրա սիրտը հուզվում է նրանց դժբախտությունից: Նրան է տրված ամեն իշխանությունը երկնքում և երկրի վրա, և Նա հարգում է այն միջոցները, որոնք Ինքն է նախատեսել մարդկանց լուսավորման և փրկության համար. Նա մեղավորներին ցույց է տալիս եկեղեցու ճանապարհը, որին լույս է դարձրել աշխարհի համար:

Երբ մոլորված ու կանխատրամադրված Սողոսին տրվեց Քրիստոսի հայտնությունը, ում նա հալածում էր, նա անմիջականորեն առնչվեց եկեղեցուն, որն աշխարհի լույսն է» (Է. Ուայթ, Գործք առաքելոց, 122):

Հիսուսն ինչո՞վ զարմացրեց Անանիային: Ի՞նչ պետք է աներ Անանիան՝ Փրկչի հրամանը կատարելու համար: Գործք առաքելոց 9.10-16: _____

_____

_____

Փորձե՛ք ձեզ պատկերացնել Պողոսի տեղում՝ Դամասկոսի ճանապարհին Հիսուսի հետ հանդիպումից հետո: Ի՞նչ ցնցում էր դա նրա համար: Նաև ձեզ փորձե՛ք պատկերացնել Անանիայի տեղում: Ակներևաբար, նրա համար նույնպես դա ոչ աննշան ցնցում էր: Մենք ի՞նչ դաս կարող ենք քաղել այս իրավիճակներից՝ այն բանի կապակցությամբ, թե ինչի և ինչպես Տերը կարող է մեզ կանչել: Հնարավո՞ր է, որ Նա մեզ խնդրի ինչ-որ մեզ համար անհասկանալի բան անել: Ինչո՞ւ մենք պետք է հնազանդվենք Տիրոջը՝ չնայելով ոչ մի բանի:

Չորեքշաբթի *հուլիսի 31*

Ջգայուն լինել Հոգու կանչի հանդեպ

Պողոսի ողջ ծառայության ընթացքում Սուրբ Հոգին առաջնորդում, համոզում, խրատում և զորացնում էր նրան: Հանդես գալով Ագրիպպասի առջև՝ առաքյալը նկարագրում էր Դամասկոսի ճանապարհին իրեն տրված երկնային տեսիլքը: Հետո նա վկայեց, որ իր ծառայության նպատակն այն է, որ ինչպես հրեաները, այնպես էլ հեթանոսները «խավարից դեպի լույսը դառնան և սատանայի իշխանությունից՝ դեպի Աստված» և Հիսուսի հանդեպ «հավատով ստանան մեղքերի թողություն և սրբերի հետ ժառանգություն» (Գործք առաքելոց 26.18):

Ինչպիսի՞ն էր Պողոս առաքյալի արձագանքը Դամասկոսի ճանապարհին ստացած տեսիլքին: Պողոսի արձագանքը համեմատե՛ք Սուրբ Հոգու ձայնին Ագրիպպաս թագավորի արձագանքի հետ: Գործք առաքելոց 26.19-32: _____

_____

_____

_____

Լինելով Պողոսի կատարյալ հակադրությունը՝ Ագրիպպաս թագավորը չարձագանքեց Սուրբ Հոգու համոզիչ զորությանը: Նրա ինքնահավանությունն ու եսամոլ ցանկությունները չէին համընկնում Հոգու դրդումներին, որոնք նոր կյանքի էին կոչում Քրիստոսում:

Հիսուսը հստակ կերպով ասաց այդ մասին. «Մի քիչ ժամանակ դեռ լույսը ձեզ հետ է. գնացե՛ք, քանի դեռ լույսն ունեք, որ խավարը ձեզ չհասնի, և խավարում գնացողը չգիտի, թե ուր է գնում: Քանի որ լույսն ունեք, հավատացե՛ք լույսին, որ լույսի որդիներ լինեք» (Հովհաննես 12.35,36):

Եթե մենք հնազանդ ենք Սուրբ Հոգու առաջնորդությանը և քայլում ենք Աստծո ճշմարտության լույսի ներքո, Նա մշտապես մեզ ավելի ու ավելի շատ լույս ու ճշմարտություն կբացահայտի: Միևնույն ժամանակ, որքան ավելի շատ ենք հետ մղում Սուրբ Հոգու դրդումները, որքան ավելի շատ ենք դիմադրում Նրան, այնքան ավելի է խստանում մեր սիրտը:

«Ագրիպպասն էլ Պողոսին ասաց. Քիչ է մնում, որ ինձ համոզես՝ քրիստոնյա դառնամ» (Գործք առաքելոց 26.28): Սա ողջ Աստվածաշնչի ամենահոգեցունց, տխուր խոսքերից մեկն է: Մենք ինչպե՞ս կարող ենք նույն դիրքորոշումն ընդունելու վտանգի մեջ հայտնվել: Օրինակ, աշխարհի հետ մեր փոխգիջումն ինչպե՞ս է ի հայտ բերում այն նույն սկզբունքը, որ լսելի է Ագրիպպասի խոսքերում:

Հինգշաբթի ***օգոստոսի 1***

Հոգով լցված կյանքը

Սուրբ Հոգին կարևորագույն տեղ էր զբաղեցնում Հիսուսի կյանքի բոլոր տեսանկյուններում: Նա երկրի վրա ծնվել էր «Սուրբ Հոգուց», և մկրտության ժամանակ «Աստված Սուրբ Հոգով ու զորությամբ օծեց Հիսուսին» Նրա ծառայության սկզբում (Մատթեոս 1.20, 3.16,17, Գործք առաքելոց 10.34-38): Իր ողջ կյանքի ընթացքում Քրիստոսը հնազանդ էր Հոր կամքին (Հովհաննես 8.29, Եբրայեցիս 10.7):

Կարդացե՛ք Փիլիպեցիս 2.5-8-ը: Սուրբ Հոգով լցված կյանքի ո՞ր տեսանկյուններն են նշված Հիսուսի մասին այս առանձնահատուկ համարներում: _____

_____

_____

_____

Նա, ով «Աստծո պատկերն» էր, Աստծո էության նկարագիրը (Եբրայեցիս 1.3), «Իր անձն ունայնացրեց» կամ, ինչպես ասում է Նոր Կտակարանի հունարեն բնագիր տեքստը, «Իր անձը ամայացրեց»,

զրկեց այն արտոնություններից և իրավունքներից, որ Իրեն էին պատկանում որպես Աստծուն հավասարի, և դարձավ «ծառա»:

Հիսուսը ծառա էր, ով կատարում էր Հոր կամքը: Նա «խոնարհեցրեց Իրեն» և դարձավ «հնազանդ մինչև մահ, և այն էլ՝ խաչի մահ» (Փիլիպեցիս 2.8): Հիսուսը Սուրբ Հոգով լի կյանքի օրինակ է դրսևորում: Սա կամավոր հնազանդության և Հոր կամքին խոնարհ հնազանդության կյանք է: Սա աղոթքի կյանք է, որը ծարավի է մյուս մարդկանց փրկված տեսնել Հոր Թագավորությունում:

Պողոս առաքյալը հայտարարում է, որ Նոր Կտակարանի Հոգով լցված քրիստոնյաները Քրիստոսի միջոցով «ստացան շնորհը և առաքյալությունը, որպեսզի Նրա անունով հավատին հնազանդեցնեն բոլոր ազգերը» (Հռոմեացիս 1.5): Մյուս կողմից, հեթանոսներին՝ մարդկանց, «ովքեր հակառակությունից են և ճշմարտությանն անհնազանդ, և անիրավության հետևից գնացած՝ բարկություն և սրտմտություն» (Հռոմեացիս 2.8):

Հռոմեացիս 6.15-23-ում Պողոսը երկու հակադիր արտահայտություններ է օգտագործում՝ «մեղքի ծառա» և «արդարության ծառա»: Հռոմեացիս 8.12-17-ում նա խոսում է «ծառայության հոգու» և «որդեգրության հոգու» մասին: Տիրոջ հետ հարաբերությունների ձեր անձնական փորձը, ձեր հավատն ու մեղքի հետ պայքարը, Աստծո կողմը կանգնելու ձեր որոշումն ի՞նչ են ասում այս արտահայտությունների նշանակության մասին:

Ուրբաթ ***օգոստոսի 2***

Հետագա ուսումնասիրության համար

«Դարպասի մուտքի մոտ, որտեղից սկսվում է դեպի հավիտենական կյանք տանող ճանապարհը, Աստված տեղադրել է հավատը և այդ ճանապարհը սալարկում է լույսով, խաղաղությամբ և հաճույքով ծառայելու ուրախությամբ: Այդ ճանապարհով գնացողը անփոփոխ կերպով հիշում է Քրիստոսում իր բարձր կոչման նպատակի մասին: Նա միշտ իր առջև տեսնում է պարգևը: Նրա համար Աստծո հրամանը արդարություն, ուրախություն և խաղաղություն են Սուրբ Հոգում» (Է. Ուայթ, Երկնային բնակարաններում, 183):

«Սուրբ Հոգու խոստումը սահմանափակված չէր մեկ ժամանակաշրջանով կամ ժողովրդով: Քրիստոսը վստահեցրեց, որ Նրա Հոգու աստվածային ազդեցությունը Նրա հետևորդների հետ կլինի մինչև վերջ:

Պենտեկոստեի օրվանից մինչ օրս Մխիթարիչը ուղարկվում է բոլորին, ովքեր իրենց լիովին կնվիրեն Տիրոջ ծառայությանը: Քրիստոսին որպես իրենց անձնական Փրկիչ ընդունածների մոտ Սուրբ Հոգին գալիս է որպես Խորհրդատու, Ուղեցույց, Վկա և սրբագործվելու Զորություն: Որքան հավատացյալներն ավելի շատ են շփվում Աստծո հետ, այնքան ավելի պարզորոշ և համարձակ են վկայում իրենց Փրկչի սիրո և փրկարար շնորհի մասին: Այն մարդիկ, ովքեր հալածանքների երկար դարերի ընթացքում իրենց կյանքում զգացել են Սուրբ Հոգու ներկայությունը, ապշեցրել են այս աշխարհին: Հրեշտակների և մարդկանց առջև նրանք բացահայտել են փրկարար սիրո վերափոխող զորությունը» (Է. Ուայթ, Գործք առաքելոց 49):

Հարցեր քննարկման համար

1. Կարդացե՛ք Գործք առաքելոց 5.1-11-ը: Մենք ի՞նչ կարող ենք սովորել այս բավականին սարսափեցնող պատմությունից: Դուք ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ Անանիային ու Սափիրային վրա հասան իրենց արարքների այդպիսի սոսկալի հետևանքներ:
2. Խորհեցե՛ք այն մասին, թե ինչպես Հիսուսը «ունայնացրեց Իրեն»՝ կատարելու համար այն, հանուն ինչի եկավ մեր երկիր: Մենք ինչպե՞ս կարող ենք այս սկզբունքը կիրառել մեր և նաև Տիրոջ հետ մեր փոխհարաբերությունների նկատմամբ: Ինչո՞ւ են ինքնուրացումը և սեփական «ես»-ի համար մահը այդքան կարևոր վերածննդի և բարենորոգության գործընթացում:
3. Ագրիպպասն ասաց Պողոսին. «Քիչ է մնում, որ ինձ համոզես՝ քրիստոնյա դառնամ» (Գործք առաքելոց 26.28): Դասարանում խոսե՛ք այդ ճակատագրական խոսքերի հետևանքների մասին:

ՋՂՋՈՒՄՆ ՈՒ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՆ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Գործք առաքելոց 5.30-32, Բ Կորնթացիս 7.9-11, Ղևտացոց 5.5, Ա Հովհաննես 1.9, Եբրայեցիս 12.17, Սաղմոս 32.1-8:

Հիշելու համար.

«Իր հանցանքը ծածկողը չի հաջողվի, բայց խոստովանող և թողնողը ողորմություն կգտնի» (Առակաց 28.13):

Սուրբ Գիրքը վկայում է, որ վերածննդին միշտ նախորդել են ապաշխարելն ու խոստովանելը: Աստված Իր ժողովրդին պատրաստել է Իր համար մեծ գործերի՝ մարդկանց բերելով իրենց կատարած մեղքերի համար բարեպաշտ տրտմության: Ջղջալով և ապաշխարելով մեր մեղքերի համար՝ մենք կանգնում ենք այն ճանապարհին, որը տանում է դրանց հանդեպ հաղթանակի:

«Տերը չի ուշացնի Իր խոստումը, ինչպես ոմանք ուշանալ են կարծում, այլ երկայնամիտ է լինում մեզ վրա, որովհետև չի կամենում, որ կորչողներ լինեն, բայց՝ որ ամենքն ապաշխարության հասնեն» (Բ Պետրոս 3.9): Ջղջումն ու ապաշխարությունը երկու նախապայման են, որոնք անհրաժեշտ են Հոգին ավելցուկով ստանալու համար:

Այս շաբաթվա դասին մենք մեր ուշադրությունը կկենտրոնացնենք ճշմարիտ ապաշխարության կարևորության վրա, որն անհրաժեշտ է Սուրբ Հոգու հեղման համար, և ճշմարիտ ապաշխարությունը կհամեմատենք կեղծի հետ: Մենք կհայտնաբերենք, որ ապաշխարությունը Սուրբ Հոգու պարգևն է, որով Նա մեզ օժտում է, որպեսզի կարողանանք շրջապատող մարդկանց համար արտացոլել Հիսուսի սերը:

Ապաշխարությունը Աստծո պարգևն է

Պենտեկոստեին նախորդած շաբաթների ընթացքում աշակերտները ջանադրաբար Աստծուն որոնում էին աղոթքի մեջ: Գործք առաքելոց 1.14-ում ասված է, որ «միաբան կենում էին աղոթքի և աղաչանքների մեջ»: Միաբանության այս փորձառությունը Քրիստոսի հետևորդների լիակատար միասնության մասին է, որն անհնար կլիներ առանց զղջման և ապաշխարության: Աղոթքն ու ապաշխարությունը նրանց պատրաստում էին այն բանին, ինչ պետք է տեղի ունենար:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 5.30-32-ը: Մենք ի՞նչ կարևոր պահեր կարող ենք նկատել Պետրոսի քարոզի մեջ: _____

_____

_____

Պետրոսը երկու կարևոր պարագա է ընդգծում: Նախ՝ ապաշխարությունը պարգև է: Երբ մենք մեր սրտերը բացում ենք Սուրբ Հոգու ազդեցության համար, Հիսուսը մեզ շնորհում է ապաշխարության պարգևը: Երկրորդ՝ աշակերտներն իրենք իրենց կյանքում վկա էին եղել ապաշխարության իրական բնույթին: Նրանք ոչ միայն քարոզում էին ապաշխարությունը, այլև զգում էին այն:

«Սպասելով խոստման կատարմանը՝ աշակերտները ճշմարիտ զղջման մեջ խոնարհեցնում էին իրենց սրտերը և իրենց թերահավատությունն էին խոստովանում Աստծո առջև: Նրանք հիշում էին Քրիստոսի խոսքերը, որ Նա ասել էր մահից առաջ, և սկսում էին առավել լիարժեք հասկանալ դրանց իմաստը...

Մտորելով Նրա մաքուր, սուրբ կյանքի մասին, որի իրադարձությունները մեկը մյուսի հետևից կրկին անցնում էին նրանց աչքերի առջևով, հասկանում էին, որ այժմ ոչ մի աշխատանք իրենց չափազանց ծանր չի թվա, և ոչ մի զոհ իրենց համար չափազանց մեծ չի լինի, եթե միայն կարողանան Քրիստոսի հրաշալի բնավորության մասին վկայել իրենց կյանքով» (Է. Ուայթ, Գործք առաքելոց, 36):

Զղջման և ապաշխարության թեման հաճախ է հանդիպում Գործք առաքելոց գրքում (Գործք առաքելոց 17.30,31, 26.19,20): «Աստծո բարությունը» մեզ տանում է ապաշխարության, Սուրբ Հոգու համոզիչ զորությունը մեզ բերում է ներող Փրկչի մեր կարիքի գիտակցման: Միևնույն ժամանակ մենք պետք է հասկանանք, որ Սուրբ Հոգին չի լցնում չապաշխարած սիրտը (Հռոմեացիս 2.8, Գործք առաքելոց 2.38,39, 3.19):

Սուրբ Հոգին լցնում է եսասիրական պատվասիրությունից, համընդհանուր ճանաչման և սեփական փառքի ձգտումից ազատված սրտերը:

Ինչո՞ւ է այդքան դժվար ընդունել սեփական մեղքերը և ապաշխարել դրանց համար: Ինչո՞ւ է այդքան հեշտ սեփական «ես»-ին թույլ տալ ճշմարիտ ապաշխարության ճանապարհը բռնել:

Երկուշաբթի ***օգոստոսի 5***

Ճշմարիտ ապաշխարության սահմանումը

Պողոս առաքյալն ինչպե՞ս է նկարագրում ճշմարիտ ապաշխարությունը: Բ Կորնթացիս 7.9-11: _____

_____

_____

_____

Ապաշխարությունը տրտմություն է մեղքի մասին, որը մարդուն ուղարկվում է Աստծուց: Այն ենթադրում է մեղքերն ընդմիշտ թողնելու որոշում, որոնք ցույց է տալիս Սուրբ Հոգին (Եզեկիել 14.6, Զաքարիա 1.4): Ճշմարիտ ապաշխարությունը քրիստոնյաներին խոր ընկճախտի մեջ չի նետում՝ մեղսավոր բնույթի կամ մեղսավոր գործերի պատճառով: «Որովհետև Աստծո ուզած կերպով տրտմությունը ապաշխարություն է գործում փրկության համար՝ առանց զղջալու, բայց աշխարհի տրտմությունը մահ է գործում» (Բ Կորնթացիս 7.10): Ճշմարիտ ապաշխարությունն օգնում է կենտրոնանալ Հիսուսի արդարության, ոչ թե մեր մեղավորության վրա: Այն ջանադիր ձգտում է առաջացնում՝ նայել «հավատի զորագլխին և կատարողին՝ Հիսուսին» (Բ Կորնթացիս 7.11, Եբրայեցիս 12.2):

Ողջ Նոր Կտակարանը վկայում է, որ որքան էլ մեծ լինեն մեր մեղքերը, դրանք երբեք չեն գերազանցի Քրիստոսի շնորհի ընդգրկունությունը: Որովհետև «մեկի հնազանդությամբ շատերն են արդարանում» (Հռոմեացիս 5.19): Սա միանգամայն ակնհայտորեն երևում է Պողոս առաքյալի փորձառության մեջ:

Կարդացե՛ք Ա Տիմոթեոս 1.14-17 և Գործք առաքելոց 26.10-16-ը: Այս հատվածներն ի՞նչ են հաղորդում Պողոսի մեղսավորության և Հիսուսի արդարության մասին: _____

_____

_____

_____

Երբ Պողոս առաքյալը գիտակցեց, որ հալածում էր փառքի Տիրոջը, ծնկի եկավ ճշմարիտ զղջման ու ապաշխարության մեջ: Իր ողջ կյանքի ընթացքում նա երբեք չէր դադարում պատմել սեփական մեղսավորության և Աստծո շնորհի մասին: Նրա ապաշխարությունը նրան ընկճախտի չհասցրեց, ընդհակառակը, ուղղորդեց սիրառատ, ներող Փրկչի գիրկը: Պողոսը կենտրոնացավ ոչ թե իր մեղսավորության, այլ Հիսուսի արդարության վրա:

Դուք երբևէ ձեզ զգացե՞լ եք «առաջին» մեղավորը: Կամ եթե անգամ ոչ առաջինը, միևնույնն է՝ չափազանց մեղավոր՝ փրկվելու համար: Ինչպե՞ս կարող եք սովորել վստահություն զգալ, որ Քրիստոսի արդարությունը բավարար է ձեր փրկության համար:

Երեքշաբթի ***օգոստոսի 6***

Ճշմարիտ ապաշխարությունն ու խոստովանությունը

Ի՞նչ հոգևոր սկզբունքներ են շարադրված Ղևտացոց 5.5, Ա Հովհաննես 1.9, Եսայիա 1.16-18 և Գործք առաքելոց 26.19, 20-ում՝ ճշմարիտ զղջման ու ապաշխարության բնույթի վերաբերյալ: _____

_____

_____

_____

Ճշմարիտ ապաշխարությունը միշտ ուղեկցվում է որոշակի մեղքերի խոստովանությամբ: Սուրբ Հոգին մեզ չի ուղարկում մեղքի աղոտ զգացողություն: Նա ցույց է տալիս մեր որոշակի թերությունները:

«Սեփական մեղքի ճշմարիտ գիտակցումը միշտ տարբերվում է կոնկրետությամբ և որոշակիությամբ: Որոշ մեղքեր կարող են բացահայտվել միայն Աստծո առջև, ուրիշ մեղքեր պետք է ընդունվեն այն մարդկանց առջև, ովքեր դրա պատճառով տուժել են, երրորդները կարող են ուղղվել հասարակության դեմ և այդ պատճառով պետք է ընդունվեն բոլորի առջև: Սակայն յուրաքանչյուր խոստովանություն պետք է լինի որոշակի և ըստ էության: Դուք պետք է ընդունեք որոշակի այն մեղքերը, որոնցում մեղավոր եք» (Է. Ուայթ, Քայլեր դեպի Քրիստոս, 38):

Սուրբ Հոգու հանդիմանող ազդեցության նպատակն այն է, որ մեզ բացահայտի Քրիստոսի շնորհի մեր կարիքը: Ապաշխարությունը չի հարկադրում Աստծուն՝ սիրել մեզ ավելի ուժեղ, այն օգնում է առավել

լիարժեք գնահատել Նրա սերը: Խոստովանելով մենք չենք վաստակում Աստծո ներումը, ընդհակառակը, այն մեզ հնարավորություն է տալիս ստանալ Նրա ներումը: Աստված մեզ ավելի շատ չի սիրում այն ժամանակ, երբ մենք զղջում ենք, կամ՝ ավելի քիչ, երբ մեղանչում ենք: Մեր հանդեպ Նրա սերն անփոփոխ է: Փոփոխվում է միայն մեր կյանքում Սուրբ Հոգու գործողություններին մեր արձագանքը:

Ցավոք, մեր սրտերը հաճախ արգելափակում են Աստծո առատ օրհնությունների ստացումը, քանի որ մեր հոգևոր զարկերակները խցանված են մեղքի թանձրուկներով: Մեղքը խլացնում է մեր մեջ Հոգու ազդեցությունը, և մեզ համար առավել բարդ է դառնում Նրա ձայնին արձագանքելը: Զղջումն ու ապաշխարությունը բացում են մեր հոգևոր սրտերի խցանված ուղիները, որպեսզի մենք կարողանանք առատորեն ստանալ Սուրբ Հոգին և Նրա զորությունը:

Որքան էլ մենք ներման ծարավի լինենք զղջման և ապաշխարության ժամանակ, պետք է հիշենք, որ դա «երկկողմանի երթևեկությամբ փողոց է»: Վերլուծենք՝ ինչպե՞ս ենք մենք արձագանքում այն մարդկանց, ովքեր մեզ հետ վատ են վարվել և ներում են խնդրում: Ինչպե՞ս ենք վերաբերվում նրանց, ում պետք է ներենք, թեև նրանք բացարձակապես արժանի չեն մեր ներմանը: Ինչո՞ւ է այդ ներումն անհրաժեշտ առաջին հերթին մեզ:

Չորեքշաբթի *օգոստոսի 7*

Ճշմարիտ և կեղծ ապաշխարության համեմատությունը

Աստվածաշնչում որոշակի մարդկանց օրինակներ կան, ովքեր ապաշխարություն էին որոնում, սակայն չներվեցին: Նրանք ողբում էին, տրտմում, խոստովանում էին իրենց մեղքերը, բայց այդպես էլ Աստծուց ներում չստացան:

Կարդացե՛ք փարավոնի, Բաղաամի, Եսավի և Հուդայի պատմությունները (Ելից 12.29-32, Թվոց 22.32-35, Եբրայեցիս 12.17, Մատթեոս 27.4): Ի՞նչ ընդհանուր թելով են կապված այս բոլոր պատմությունները՝ զղջման և ապաշխարության համատեքստում: _____

_____

_____

_____

Եբրայեցիս 12.17-ում գրառված դարձվածքը հանրագումարի է բերում այս բոլոր պատմությունները: Այստեղ ասվում է Եսավի մասին, որ նա, «ցանկանալով ժառանգել օրհնությունը», «ապաշխարելու հնարավորություն չգտավ»: Փարավոնի, Բաղաամի և Հուդայի նման՝ Եսավն էլ չէր ափսոսում այն ցավի համար, որ իր մեղքը պատճառել էր ընտանիքին կամ Աստծո սրտին: Նա անհանգստանում էր միայն կորսված առաջնեկության համար: Եսավը զղջացել էր, որ չի ստացել այն, ինչ, իր կարծիքով, իրեն էր պատկանում: Նրա դրդապատճառները ազնիվ չէին: Նա տրտմում էր ինքն իր համար: Կեղծ ապաշխարությունը կենտրոնացված է մեղքի հետևանքների, և ոչ թե բուն մեղքի վրա:

Ցանքի ու հունձքի օրենքը Աստծո օրենքն է: Մեղքն իսկապես սոսկալի հետևանքների է տանում, բայց ապաշխարությունը պարզապես զղջում չէ մեղքի բացասական հետևանքների համար: Ապաշխարության մեջ ափսոսանք է արտահայտվում մեր մեղքերով Աստծուն պատճառված անպատվության և ցավի համար:

Ճշմարիտ ապաշխարությունը միշտ բնութագրվում է առնվազն երեք բաղադրիչներով. նախ՝ տրտմությունը նրա համար, որ մեր մեղքը փշրել է Աստծո սիրտը: Մենք ցավ ենք ապրում, որովհետև ցավ ենք պատճառել Նրան, ով այդքան սիրում է մեզ: Երկրորդ՝ պետք է մեր գործած որոշակի մեղքի անկեղծ խոստովանություն լինի: Ճշմարիտ ապաշխարությունը չի ջանում որևէ կերպ արդարացնել մեր վարքը: Այն մեղքը չի գցում ուրիշի վրա: Այն ընդունում է կատարածի պատասխանատվությունը: Երրորդ՝ ճշմարիտ ապաշխարությունը միշտ ենթադրում է այդ մեղքից հրաժարվելու որոշում: Չի կարող իսկական զղջում լինել առանց կյանքում համապատասխան վերափոխման: Կեղծ ապաշխարությունը եսակենտրոն է: Այն անհանգստանում է մեղքի հետևանքների համար: Դա զգայական տրտմություն է, քանի որ մեր մեղքերը հաճախ իրենց հետևից բացասական հետևանքներ են բերում: Այն արդարացնում է որոնում և մեղքը փոխադրում մեկ ուրիշի վրա: Նրա համար կարևոր չէ փոփոխությունը վարքի մեջ, եթե միայն դա որևէ կերպ չի պարգևատրվելու:

Հինգշաբթի ***օգոստոսի 8***

Խոստովանության ապաքինող զորությունը

Խոստովանությունը բացում է մեղքի թարախապալարը և թույլ է տալիս, որ մեղքի թունավոր թարախը դուրս հոսի: Խոստովանությունը

շատ բաներում չափազանց բուժիչ է: Այն մեր սրտերը բացում է Աստծո շնորհն ընդունելու համար: Խոստովանության միջոցով մենք ընդունում ենք ներումը, որը Քրիստոսն անհատույց մեզ է առաջարկում խաչի վրա: Ապաշխարությունն ապաքինող է, որովհետև մեզ թույլ է տալիս ստանալ շնորհը: Այն նաև քանդում է մեր և մյուս մարդկանց միջև եղած պատնեշները՝ վերականգնելով փոխհարաբերությունները:

Կարդացե՛ք Սաղմոս 32.1-8-ը: Այստեղ ի՞նչ է ասվում խոստովանության և ապաշխարության մասին: _____

_____

_____

Կարդացե՛ք Գործք առաքելոց 24.16-ը: Պողոս առաքյալը ձգտում էր «մաքուր խիղճ ունենալ Աստծո և մարդկանց առջև»: Ի՞նչ է դա նշանակում: _____

_____

_____

_____

Մեղքի զգացողությունը լա՞վ է, թե՞ վատ: Ամեն բան կախված է հանգամանքներից: Եթե Սուրբ Հոգին հանդիմանում է ինչ-որ մեղքերի համար, և մեղքի զգացողությունը մեզ մերձեցնում է Աստծո հետ, լավ է: Իսկ եթե մենք արդեն խոստովանել ենք մեղքը, բայց շարունակում ենք մեղսավորության զգացողություն ապրել դրա պատճառով, ապա դա կարող է կործանարար հետևանքներ ունենալ: «Մեղքի այդպիսի զգացողությունը պետք է վայր դնել Գողգոթայի խաչի ստորոտին: Մեղսավորության զգացողությունը թունավորում է կյանքի հոսքերը և ճշմարիտ երջանկությունը: Այժմ Հիսուսն ասում է. «Ինձ վրա դիր այդ ամենը: Ես կվերցնեմ քո մեղքերը: Ես քեզ խաղաղություն կտամ: Մի՛ կորցրու սեփական անձիդ հանդեպ հարգանքը, որովհետև Ես քեզ փրկագնել եմ Իմ Արյան գնով: Դու Իմն ես: Ես կամրապնդեմ քո թույլ կամքը, կհանեմ մեղքի համար քո խղճի խայթոցները»» (Է. Ուայթ, Հրատարակված ձեռագրեր, հտ. 9, 305): Մեղքի խնդրի պատասխանը Հիսուսն է: Նրա շնորհը ազատում է մեղքի այն կործանարար զգացումից, որը մեզ վրա դնում է մեղքը:

Լինում է այնպես, որ մենք խոստովանել ենք մեր մեղքերը, բայց առաջվա նման մեղքի զգացողություն ենք ապրում: Ինչո՞ւ: Հնարավոր է, որ սատանան փորձում է մեզ զրկել փրկության վստահությունից: Նրան դուր է գալիս ներման և փրկության օրհնյալ վստահությունը հափշտակելը, որը մենք ունենք Հիսուսում: Հնարավոր է նաև, որ Սուրբ Հոգին է որևէ խնդիր մատնացույց անում, որ գոյություն ունի մեր և մեկ

այլ մարդու միջև: Եթե մենք վշտացրել ենք որևէ մեկին, մեր անհանգիստ խիղճը կհանգստանա միայն այն ժամանակ, երբ մեր սխալ արարքը խոստովանենք այդ մարդու առջև:

Մեղքի զգացումն ինչպե՞ս է ազդում Տիրոջ և շրջապատողների հետ ձեր փոխհարաբերությունների վրա: Դուք ի՞նչ կարող եք անել՝ թեթևացնելու համար ձեր կրած մեղքի զգացողությունը: Անգամ եթե դուք սխալ եք վարվել և ձեր մեղքի զգացումն արդարացի է, աստվածաշնչյան խոստումներն ինչպե՞ս կօգնեն ձեզ առաջ գնալ:

Ուրբաթ ***օգոստոսի 9***

Հեպագա ուսումնասիրության համար

«Սեփական մեղքի խոստովանությունն առանց ճշմարիտ ապաշխարության և ուղղվելու չի կարող ընդունվել Աստծո կողմից: Կյանքում պետք է վճռական փոփոխություններ տեղի ունենան, Աստծո համար վիրավորական ամեն բան պետք է հեռացվի: Այդպիսին է մեղքի ճշմարիտ ապաշխարության պտուղը: Մեզ հստակորեն ասված է, թե ինչ է սպասվում մեզանից. «Լվացվեցե՛ք, մաքրվեցե՛ք, հեռացրե՛ք ձեր գործերի չարությունը իմ աչքերի առաջից, դադարեցե՛ք չարություն գործելուց: Սովորեցե՛ք բարություն անել, որոնեցե՛ք իրավունք, ուղղությո՛ւն ցույց տվեք զրկվածին, որբի դատը տեսե՛ք, որբևայրիի դատը պաշտպանե՛ք» (Եսայիա 1.16,17): «Ամբարիշտը գրավը հետ դարձնի, հափշտակածը հատուցի, կյանքի կանոններով գնա առանց անօրենություն գործելու» (Եզեկիել 33.15)» (Է. Ուայթ, Քայլեր դեպի Քրիստոս, 39):

Հարցեր քննարկման համար

1. Ներման մասին ի՞նչ մեծագույն դաս մենք կարող ենք ստանալ՝ նայելով Իր դահիճներին ներող Հիսուսին: Եթե Նա հաճույքով ներեց նրանց, որքա՜ն ավելի մեծ հաճույքով մենք պետք է ներենք մեզ նեղացնողներին:
2. Կիսվե՛ք ձեր փորձառությամբ, թե ինչպես մեղքի խոստովանությունն օրհնություն դարձավ ձեզ համար: Դա ինչպե՞ս օգնեց ձեզ ոչ միայն Տիրոջ, այլև շրջապատողների հետ փոխհարաբերություններում:
3. Թեև այս շաբաթ հիշատակվել է, որ մենք երբեմն պետք է խոստովանենք մեր մեղքերը այն մարդկանց առջև, ում նեղացրել ենք, այնուամենայնիվ, ինչո՞ւ պետք է շատ զգույշ լինենք, թե ինչ ենք ասում մյուս մարդկանց:

4. Ինչպես մենք արդեն ասել ենք, ճշմարիտ ապաշխարությունն իր հետևից բերում է մեղքից հրաժարում: Սակայն ի՞նչ է տեղի ունենում, երբ այդ մեղքի դեմ պայքարելիս մենք կրկին գործում ենք այն: Նշանակո՞ւմ է դա, որ մեր ապաշխարությունն անկեղծ չէր, և մենք չենք կարող ևս մեկ անգամ ներվել: Եթե դա այդպես լիներ, ի՞նչ հույս կունենայինք: Մենք ինչպե՞ս պետք է հասկանանք աստվածաշնչյան ապաշխարության բնույթը և միևնույն ժամանակ միշտ հիշենք մեր մեղսավոր բնության իրական լինելու մասին:
5. Ուսումնասիրված դասի հիման վրա ասացե՛ք, թե ինչու է ապաշխարությունը վերածննդի և վերափոխման կենսականորեն կարևոր բաղադրիչը: «Վերածնունդ» և «բարոնորոգություն» եզրույթներն ինչպե՞ս են փոխանցում ապաշխարության անհրաժեշտության գաղափարը:

ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՀԱՆԳՈՒՅՑ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք

Հովհաննես 17.9-11,20-24, Ա Կորնթացիս 12.12-18, Գործք առաքելոց 4.32,33, 1.8, 15.1-31, Մատթեոս 18.16-20:

Հիշելու համարը.

«Արդ աղաչում եմ ձեզ ես՝ Տիրոջ համար բանտարկվածս, որ այնպես գնաք, ինչպես վայելում է այն կոչումին, որի մեջ կանչվեցիք՝ ամեն խոնարհությունով, և հեզությունով, և երկայնամտությունով, սիրով իրար համբերելով, ջանալով Հոգու միաբանությունը պահել խաղաղության կապով» (Եփեսացիս 4.1-3):

Միաբանությունը վերածննդի հիմնական բաղադրիչն է: Հակամարտությունները, բաժանումներն ու վեճերը վերածննդի համար անհրաժեշտ մթնոլորտ չեն ստեղծում: Պենտեկոստեի օրը աշխարհում Քրիստոսի առաքելության իրականացման նպատակով համախմբված եկեղեցու վրա հեղվեց Սուրբ Հոգին: Բոլոր տարբերությունները և հավատացյալների տարակարծությունները հնազանդվեցին Քրիստոսի մեծ առաքելությունն իրականացնելու կոչին: Գերազանցության հասնելու համար պայքարը դադարեց Ավետարանը կործանվող աշխարհին հասցնելու Քրիստոսի հանձնարարության լույսի ներքո: Եթե Քրիստոսի առաջին հետևորդները զբաղված լինեին իշխանության համար պայքարով, նրանց գործը հենց ամենասկզբից փակուղի կմտներ: Բայց, ուսուցանված լինելով Սուրբ Հոգուց՝ մեռնել սեփական «ես»-ի համար՝ նրանք միավորվեցին ընդհանուր նպատակի ու առաքելության համար:

Մի խոսքով՝ որտեղ չկա միասնություն, այնտեղ չի կարող լինել նաև վերածնունդ: Որտեղ թագավորում են նախանձը, կասկածամտությունն ու գերազանցության համար պայքարը, այնտեղ չկա Սուրբ Հոգու զորությունը: Որքա՜ն կարևոր է, որ մենք սովորենք կործանել մեզ բաժանող պատնեշները, հասնելու համար այն միասնությանը, որ ցանկանում է Քրիստոսը Իր եկեղեցուն:

Պատասխանելով միասնության համար Քրիստոսի աղոթքին

Հովհաննես 17-ում գրի է առնված Հիսուսի բարեխոսական աղոթքը: Այն ցույց է տալիս, թե ինչն էր անհանգստացնում Նրան՝ երկրային պատմության այդ խիստ կարևոր ժամին:

Կարդացե՛ք Հովհաննես 17.9-11,20-24-ը: Ո՞րն էր Հիսուսի մեծագույն ցանկությունը: Ինչո՞ւ էր դա այդքան կարևոր: Միմյանց հետ աշակերտների փոխհարաբերություններն ինչպե՞ս են ցուցադրում իսկական քրիստոնեական հավատը: Տե՛ս Գործք առաքելոց 4.32,33: _____

_____

_____

_____

Աշակերտների միաբանությունը կամ միասնությունը նրանց սրտերը պատրաստել էր Սուրբ Հոգու զորության լիությունն ընդունելու համար: Եկեղեցու համար Քրիստոսի աղոթքը կատարվեց: Նրանք թողեցին իրենց բոլոր տարաձայնությունները, սերը հաղթանակեց, վեճերը դադարեցին:

«Եվ հավատացյալների բազմության սիրտը և հոգին մեկ էր, և ոչ ոք չէր ասում իր ստացվածքի համար, թե դա միայն իրենն է, այլ նրանց բոլոր բաները ընդհանուր էին: Եվ առաքյալները մեծ զորությամբ վկայություն էին տալիս Տեր Հիսուսի հարության մասին, և մեծ շնորհք կար նրանց բոլորի վրա» (Գործք առաքելոց 4.32,33):

Այս հատվածում աշակերտների վիճակը՝ «հավատացյալների բազմության սիրտը և հոգին մեկ էր», կապված է հետագա իրադարձության հետ՝ «առաքյալները մեծ զորությամբ վկայություն էին տալիս Տեր Հիսուսի հարության մասին»: Առաջին դարի բարդ պայմաններում Երուսաղեմում, երբ քրիստոնեությունը ժողովրդականություն չէր վայելում, այդ նվիրված քրիստոնյաները կիսվում էին նրանով, ինչ ունեին: Նրանք սատարում էին միմյանց: Նրանք մի կողմ էին դրել բոլոր անձնական փառասիրական նկրտումները: Անշահախնդրությունն ու հոգու առատաձեռնությունը նախապատրաստել էին նրանց՝ վկայության համար ստանալու Սուրբ Հոգու զորությունը:

«Ուշադրությո՛ւն դարձրեք, որ Հոգին հեղվեց այն բանից հետո, երբ աշակերտները եկան կատարյալ միաբանության, երբ դադարեցին ձգտել բարձրագույն դիրք զբաղեցնել: Նրանք կատարյալ ներդաշնակու-

թյան մեջ էին: Բոլոր տարակարծությունները վերացվեցին» (Է. Ուայթ, Խորհուրդներ եկեղեցու համար, 98):

Մեր եկեղեցուն ինչո՞ւ է այդքան անհրաժեշտ Հիսուսի աղոթքի կատարումը, որը գրի է առնված Հովհաննես 17-ում: Առաջին դարի եկեղեցու միասնության՝ Հիսուսի ցանկությունն ինչպե՞ս է մեզ բացահայտում այսօր մեր եկեղեցու վերաբերյալ Նրա ցանկությունը:

Երկուշաբթի *օգոստոսի 12*

Միասնության օրինակները Նոր Կտակարանում

Առաջին դարի նորկտակարանյան աշխարհը մարդկանց բաժանում էր ըստ դասերի, սոցիալական կարգավիճակի և սեռային պատկանելության: Դա սոցիալական անկարգության հասարակություն էր: Իրավահավասարության, ազատության և մարդկային արժանապատվության հայեցակարգը չափանիշ չէր:

Բայց հետո ի հայտ եկավ քրիստոնեությունը: Այն իր հետ սոցիալական հեղափոխություն բերեց: Հավասարության, արդարության, աղքատների հանդեպ հոգատարության և մերժվածների հանդեպ հարգանքի մասին Հիսուսի ուսմունքը արմատական էր: Միևնույն ժամանակ Նոր Կտակարանի հավատացյալները միավորվել էին գլխավոր արժեքների՝ արարման և փրկագնման շուրջ: Նրանք սովորեցնում էին, որ բոլոր մարդիկ ստեղծած են Աստծո կողմից, և Քրիստոսի խաչի շնորհիվ փրկագնումը մատչելի է բոլորին: Խաչը հայտնում էր ճշմարտությունն այն մասին, որ ամեն մարդ, անկախ աշխարհում իր դիրքից, իրենից հսկայական արժեք է ներկայացնում Աստծո աչքերում:

Բերված կերպարներն ինչպե՞ս են լուսաբանում այն փաստը, որ տարբեր հավատացյալներ՝ անկախ իրենց ծագումից, միավորվում են մեկ ներդաշնակ ամբողջության մեջ: Ա Կորնթացիս 12.12-18, Ա Պետրոս 2.4,5: _____

_____

_____

_____

_____

Է՞լ ինչ վառ կերպարներով կարելի է պատկերել եկեղեցու միասնությունը: Պողոս առաքյալն օգտագործում է մարմնի կերպարը՝ պատկերելու համար եկեղեցին ու նրա անդամներին: Մարմնում ամեն բան

անխզելիորեն միավորված է: Նրա անդամները փոխկապակցված են: Յուրաքանչյուր օրգան ունի իր գործառույթները: Եթե մարմնի որևէ մասը ցավում է, ցավում է ողջ մարմինը (Ա Կորնթացիս 12.18-26):

Պետրոսն ավելացնում է հոգևոր շինության պատկերը, որում քարերը խորհրդանշում են եկեղեցու անդամներին, և որտեղ յուրաքանչյուր փոքրիկ քարը իր տեղն է զբաղեցնում Աստծո փառքի կատարյալ տաճարում: Այս կերպարների մեջ եկեղեցու բոլոր անդամները սերտ կապակցված են միմյանց հետ: Դրանք քնքուշ միասնության կապեր էին՝ քանդված փոխհարաբերությունների, իշխանության համար պայքարի, տարաձայնությունների ու պայքարի աշխարհում. հավատացյալների միասնությունը հզոր փաստարկ է քրիստոնեության օգտին: Հիսուսը հստակորեն շարադրել է համապարփակ մի ճշմարտություն. «Սրանով կգիտենան ամենքը, թե իմ աշակերտներն եք, եթե իրար հանդեպ սեր ունենաք» (Հովհաննես 13.35):

Ձեր համայնքին որքանո՞վ է հաջողվում արտացոլել այն միասնությունը, որի մասին այստեղ խոսվում է: Նաև հարցրե՛ք ինքներդ ձեզ՝ դուք նպաստո՞ւմ եք համայնքում միաբանության հաստատմանը, թե՞ ձեր հայացքները, համոզմունքները և դիրքորոշումը ավելացնում են խնդիրները:

Երեքշաբթի ***օգոստոսի 13***

Միասնության բաղադրիչները՝ առաքելություն և լուր

Նորկտակարնյան հավատացյալների միասնությունը հիմնված չէր պարզապես նրանց միջև ջերմ, հուզական փոխհարաբերությունների վրա:

Կարդացե՛ք Գործք առաքելոց 1.8, 4.33, 5.42, 9.31, 28.28-31-ը: Ո՞րն է նորկտակարանյան եկեղեցու գլխավոր ձգտումը: Այդ ցանկությունն ինչպե՞ս էր միավորում հավատավորներին:

Աշակերտները կլանված էին իրենց սեփական շահերից շատ հեռու գնացող նպատակներով: Ավետարանը ողջ աշխարհին տանելու Քրիստոսի հանձնարարությունը կլանել էր նրանց անձնական հավակնությունները: Եկեղեցին չի կարող հասարակությանը հասցնել ավետարանչական լուրը, քանի դեռ նրանում բացակայում է միասնությունը, բայց այդ միասնությանը երբեք հնարավոր չէ հասնել, քանի դեռ այն ներշնչված չէ Ավետարանը քարոզելու ցանկությամբ:

Առաքելությունը միավորող մեծ գործոն է: Առաջին հավատացյալները միավորվել էին նրա շուրջը: Մեր Տիրոջ կյանքը, մահը, հարությունը, քահանայական ծառայությունը և վերադարձը նրանց միավորել էին մեկ ամբողջության մեջ: Նորադարձները «հետևում էին առաքյալների վարդապետությանը» (Գործք առաքելոց 2.41,42): Հիսուսի ուսմունքը դարձավ նրանց միասնության հիմքը:

Պետրոս առաքյալն օգտագործում է «ներկա ճշմարտություն» եզրույթը (Բ Պետրոս 1.12): Պետրոսի օրերում «ներկա ճշմարտության» լուրը միավորեց եկեղեցին և դրդեց հռչակել մարգարեական խոսքը՝ Նազովրեցի Հիսուս Քրիստոսը Հին Կտակարանի մեսիական մարգարեությունների կատարումն էր: Քրիստոնյաներին միավորում էր կարևորագույն ներկա ճշմարտությունը՝ մարգարեության կատարման լուրը:

Այժմ՝ երկրային պատմության վերջին օրերին, Աստված կրկին Իր ժողովրդին պարգևում է ներկա ճշմարտության կարևոր լուրը (Հայտնություն 14.6-12): Սա հավիտենական Ավետարանի լուրն է դատաստանի, հնազանդության և Տիրոջ գալստյան համատեքստում: Այն Յոթերորդ օրվա ադվենտիստներին միավորում է համաշխարհային ընտանիքի մեջ: Եթե այս լուրը աղոտանա ինչ-որ բանով, հայտնվի երկրորդ տեղում կամ նրան վերաբերվենք ինչպես անցյալի մնացուկի, ապա եկեղեցու միասնությունը կքայքայվի, իսկ նրա առաքելությունը կկորցնի իր արդիականությունը: Եթե եկեղեցու լուրը սխալ կամ աղավաղված է ըմբռնվում, ապա նրա առաքելությունն անհասկանալի կլինի: Երեք հրեշտակների մարգարեական լուրի հռչակման մեջ է Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցու գոյության իմաստը:

Դուք որքանո՞վ եք կապված ձեր լուրի և առաքելության հետ: Այլ խոսքերով, դուք ինչո՞ւ եք կոչվում Յոթերորդ օրվա ադվենտիստներ: Ձեր պատասխանով կիսվե՛ք շաբաթօրյա դպրոցի դասին:

Չորեքշաբթի ***օգոստոսի 14***

Եկեղեցական կազմակերպությունը՝ միավորող կառույց

Նոր Կտակարանը վկայում է այն մասին, որ վաղ եկեղեցին որոշակի կազմակերպչական կառուցվածք ուներ: Այդ կառուցվածքն օգնում է պահպանել եկեղեցու մաքրությունը և առաքելության վրա նրա կենտրոնացվածությունը:

Գործք առաքելոց 6-ում պատմվում է, թե ինչպես աշակերտների մի ոչ մեծ խումբ էր հավաքվել՝ լուծելու հավատավորների միջև սննդի բաշխման հիմնախնդիրը: Արդյունքում յոթ սարկավագներ ընտրվեցին: Եկեղեցու անդամները հարգանքով էին վերաբերվում այդ ծառայողներին:

Երբ Պողոս առաքյալը դարձի եկավ Դամասկոսի ճանապարհին, Աստված նրան ուղարկեց հավատացյալներից մեկի՝ Անանիայի մոտ (Գործք առաքելոց 9.10-17): Որոշ ժամանակ անց Սուրբ Հոգին Պողոսին դրդեց հանդիպել Երուսաղեմի եկեղեցու ղեկավարների հետ, և նրանք հաստատեցին նրա կանչված լինելը (Գործք առաքելոց 9.26-30): Գործք առաքելոց 20-ում հաղորդվում է, որ Պողոսը հանդիպեց Եփեսոսի եկեղեցու երեցներին, որպեսզի խրատի նրանց և նախազգուշացնի կեղծ ուսուցիչներից և կեղծ ուսմունքներից (Գործք առաքելոց 20.17,27-32):

Նորկտակարանյան եկեղեցին ինչպե՞ս էր լուծել թլփատության հետ կապված սուր խնդիրը: Գործք առաքելոց 15.1-31: _____

_____

_____

_____

Երուսաղեմի խորհրդակցությունը կանխեց առաջին դարի լուրջ պառակտումը: Վարչական իրավասություններով օժտված եկեղեցական կազմակերպությունն անհրաժեշտ էր նորկտակարանյան եկեղեցու դավանաբանական ամբողջականության պահպանման համար: Տվյալ դեպքում Երուսաղեմ ուղարկվեցին տեղական համայնքների ներկայացուցիչները՝ իրենց մասնակցությունը բերելու դավանաբանական քննարկումներին, որոնք լուրջ հետևանքներ ունեցան եկեղեցու ապագայի համար:

Հենց որ լիազորված խումբը եկավ փոխհամաձայնության, նրա անդամները գրի առան խորհրդում ընդունված որոշումը և դա ուղարկեցին այն համայնքները, որտեղ ծագել էր տվյալ խնդիրը, մասնավորապես՝ Անտիոք, Սիրիա և Կիլիկիա (Գործք առաքելոց 15.23):

Եկեղեցու անդամներն ընդունեցին Երուսաղեմի խորհուրդի որոշումը և ուրախացան, որ Սուրբ Հոգին օգնեց իրենց լուծելու ծագած խնդիրը (Գործք առաքելոց 15.30-35):

Եթե դուք Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցու անդամ եք, նշանակում է՝ միասնական եկեղեցական կառույցի մի մասն եք: Ո՞րն է ձեր դերը եկեղեցական կառույցի մեջ, և ինչպե՞ս դուք կարող եք առավել ակտիվորեն ներգրավվել եկեղեցու կյանքի և առաքելության մեջ:

Հասնելով միասնության

Որքան շատ ենք մենք մոտենում Հիսուսին, այնքան ավելի ենք մոտենում միմյանց: Մենք նոր հոգևոր տեսողություն ենք ձեռք բերում: Քրիստոսի Հոգին օգնում է մեզ՝ այլ կերպ տեսնելու միմյանց: Մեզ անհանգստացնող մանր խնդիրները վերանում են Քրիստոսի շնորհով: Մեր զգացած թշնամանքն անհետանում է Նրա մեծ շնորհի լույսի ներքո: Հին հաշիվները մոռացվում են, վեճերը՝ դադարում, պատնեշները՝ հեռացվում են: Ավետարանն ապաքինում է կործանված փոխհարաբերությունները:

Երբ Սուրբ Հոգին Իր ողջ լիությամբ հեղվեց Պենտեկոստեի օրը, միմյանց հանդեպ աշակերտների վերաբերմունքն արմատապես փոխվեց: Խաչից շողացող լույսի ներքո նրանք այլ կերպ տեսան միմյանց:

«Յուրաքանչյուր քրիստոնյա իր եղբոր մեջ տեսնում էր աստվածային սիրո և բարյացակամության հայտնությունը: Ամենքը միավորված էին մեկ նպատակով և մեկ Օրինակ ունեին նմանվելու համար: Հավատացյալների կյանքի իմաստը Քրիստոսի բնավորությունն արտացոլելու ձգտման և Նրա Արքայությունը տարածելու մեջ է» (Է. Ուայթ, Գործք առաքելոց, 48):

Ի՞նչն էր նպաստում առաջին դարի քրիստոնյաների միաբանությանը (թվարկե՛ք կոնկրետ գործողություններ): Ինչո՞ւ են այդ արարքներն այդքան արդյունավետ կերպով միավորում հավատավորներին: Մատթեոս 18.16-20, Գործք առաքելոց 1.14, 12.5,12, 6.7, Մատթեոս 28.16-20: _____

_____

_____

Միասնության ցանկությունը կամ հույսը, թե այն երբևէ վրա կհասնի, չեն ապահովում դրա առկայությունը: Նորկտակարանյան եկեղեցու հավատավորներն աղոթում էին միասին և մնում շփման մեջ: Նրանք միասին ուսումնասիրում էին Աստծո Խոսքը և միասին կիսվում իրենց հավատով: Աղոթքը, Աստվածաշնչի ուսումնասիրությունը, եկեղեցում միասին լինելը և վկայությունը հզոր բաղադրիչներ են, որոնք ստեղծում, զարգացնում և պահպանում են եկեղեցու միասնությունը: Աղոթելով միմյանց համար՝ մենք ավելի ենք մոտենում մեկմեկու: Շրջապատողների համար ավետարանչական ծրագրերին մասնակցությունը համախմբվածության և միասնության զգացում է առաջացնում: Կեն-

դանի, շարժուն, միասնական և վերածնված եկեղեցին այն եկեղեցին է, որի անդամները միասին աղոթում են, ուսումնասիրում Աստծո Խոսքը և ավետարանում շրջապատողներին:

Ի՞նչ ուժեր են սպառնում ձեր տեղական համայնքի կամ մեր համաշխարհային եկեղեցու միաբանությանը: Ինչո՞ւ է կարևոր հասկանալ, թե ինչ ուժեր են դրանք և պատրաստ լինել դիմակայելու դրանց:

Ուրբաթ ***օգոստոսի 16***

Հետագա ուսումնասիրության համար

«Առաջին աշակերտները նման չէին միմյանց, նրանք ունեին տարբեր բնավորություն, սովորություններ և հակումներ: Կանչված լինելով ուսուցիչներ դառնալու այս աշխարհի համար՝ նրանք պետք է հասնեին մտքերի, զգացմունքների և գործողությունների միասնության: Քրիստոսն Իր առջև նպատակ էր դրել՝ միավորել նրանց: Դրա համար նրանց հարկավոր էր միավորվել Նրա հետ» (Է. Ուայթ, Գործք առաքելոց, 20):

Հարցեր քննարկման համար

1. Ինչո՞ւ է մեզ համար այդքան կարևոր միասնական եկեղեցական կառույցը: Ի՞նչ տեղի կունենար մեր առաքելության, լուրի և ողջ Եկեղեցու հետ, եթե համայնքները, կոնֆերենցիաները, միություններն ու բաժանմունքները գործեին չհամաձայնեցված: Պատկերացրե՛ք, թե ինչպիսի քաոս կառաջանար:
2. Դասարանում պատասխանեցե՛ք «ինչո՞ւ եմ ես Յոթերորդ օրվա ադվենտիստ» հարցին:
3. Չմոռանալով միաբանության անվիճելի կարևորությունը՝ կարո՞ղ ենք ասել, որ կա ինչ-որ առավել կարևոր բան, քան միասնությունն է: Եթե այո, ապա՝ ի՞նչը: Օրինակ՝ Պողոսը կեղծ ուսմունքներ քարոզողների մասին գրում էր. «Բայց եթե մենք էլ կամ երկնքից մի հրեշտակ ավետարանի ձեզ ուրիշ բան, քան այն, որ մենք ավետարանեցինք ձեզ, նզովվա՛ծ լինի: Ինչպես առաջ ասացինք, հիմա էլ դարձյալ ասում եմ. եթե մեկը ավետարանի ձեզ ուրիշ բան, քան այն, ինչ դուք առաք, նզովվա՛ծ լինի» (Գաղատացիս 1.8,9): Ի՞նչն էր խախտել այն եկեղեցու միաբանությունը, որին դիմում էր Պողոսը: Դա մեզ ի՞նչ է ասում այսօր:
4. Ինչո՞ւ է միասնությունն այդքան կարևոր մեր միջավայրում վերածննդի և բարենորոգության համար:

ԽՈՐԱԹԱՓԱՆՑՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հովհաննես 17.3, Ա Հովհաննես 2.3-6, Մատթեոս 23.27,28, Բ Թեսաղոնիկեցիս 2.9-12, Ա Կորնթացիս 12.4-7:

Հիշելու համարը.

«Տե՛ս որ քո պատվիրանները սիրում եմ, Տե՛ր, քո ողորմության պես ապրեցրո՛ւ ինձ: Քո Խոսքի սկիզբը ճշմարտություն է, և քո արդարության բոլոր իրավունքները՝ հավիտյան» (Սաղմոս 119.159,160):

Մի անգամ, իմ հովվական ծառայության սկզբում, ես աստվածաշնչյան դաս էի անցկացնում Թենեսի նահանգի գյուղական բնակավայրերից մեկի մի ընտանիքում: Հանկարծ սենյակ մտավ մի բարձրահասակ տղամարդ՝ հսկայական սիգար ծխելով, և հայտարարեց, որ Աստված իրեն բժշկել է թոքերի քաղցկեղից:

Ես հաճախ եմ խորհում այդ փորձառության մասին: Այդ մարդն անկեղծորեն հավատում էր, որ Սուրբ Հոգին հրաշագործ կերպով բժշկել է իրեն: Սակայն իրակա՞ն էր բժշկումը միայն այն պատճառով, որ նա դրան հավատում էր: Մի՞շտ են նշաններն ու հրաշքները վկայում Սուրբ Հոգու գործունեության մասին: Մենք կարո՞ղ ենք մեր հավատը հիմնել միայն նշանների և հրաշքների վրա: Նշաններն ու հրաշքներն ի՞նչ դեր կարող են խաղալ կեղծ վերածննդի մեջ:

Վերածննդի համատեքստում մենք պետք է հարցնենք ինքներս մեզ՝ կարո՞ղ է սատանան կեղծ կրոնական արթնացում առաջ բերել՝ համոզելով մարդկանց, թե տեղի է ունեցել իսկական վերածնունդ:

Այս շաբաթ մենք ուսումնասիրելու ենք ճշմարիտ վերածննդի հոգևոր երևակայիչները և դրանք համադրելու ենք կեղծ նշանների ակնհայտ դրսևորումների հետ: Իմանալով, թե ինչով է մեկը տարբերվում մյուսից, մենք կկարողանանք մեզ ապահովել թշնամու խաբեությունից:

Աստծո կամքը և Նրա Խոսքը

Ցանկացած ճշմարիտ հոգևորություն կենտրոնացված է Աստծուն ճանաչելու և Նրա կամքը կատարելու մեջ (Հովհաննես 17.3, Եբրայեցիս 10.7): Ցանկացած այսպես կոչված վերածնունդ, որը առավել կենտրոնացված է փորձառության, քան Աստծո Խոսքին հնազանդվելու ձգտման վրա, զուրկ է ամեն իմաստից: Սուրբ Հոգին երբեք մեզ չի տանի Աստվածաշնչին հակառակ ուղղությամբ: Նա մեզ առաջնորդում է դեպի Խոսքը (Բ Տիմոթեոս 3.15,16, Ա Կորնթացիս 14.32): Աստծո Խոսքը յուրաքանչյուր ճշմարիտ վերածննդի հիմքն ու սիրտն է:

Մեզ ի՞նչ են ասում Սաղմոս 119-ից բերված հատվածները վերածննդի և Աստծո Խոսքի մասին: Թվարկե՛ք այն բոլոր հոգևոր որակները, որոնք մեր կյանքում զարգացնում է Աստծո Խոսքը: Սաղմոս 119.25,28,49-50,67,81,105,116,130,154: Ինչպիսի՞ն է այդ խոստումների նշանակությունը Տիրոջ հետ մեր կենսական փորձառության մեջ: _____

_____

_____

_____

_____

Կյանքի Խոսքի մասին Իր քարոզում Հիսուսը բացատրեց վերածննդի էությունը և սահմանեց հոգևոր կյանքի հիմքը: Նա հռչակեց. «Հոգին է կենդանացնողը, մարմինը ոչ մի օգուտ չի տալիս: Այս խոսքը, որ ես ձեզ ասացի, հոգի է և կյանք» (Հովհաննես 6.64): Հիսուսի պնդումը առանձնակի կարևոր է: Սուրբ Հոգին, որը ցանկացած հոգևոր վերածննդի Աղբյուրն է, խոսում է Աստծո Խոսքի միջոցով, որպեսզի խորը հոգևոր կյանք պարգևի այն հավատով ընդունող բոլոր մարդկանց: Վերածնունդը տեղի է ունենում այն ժամանակ, երբ Սուրբ Հոգին Հիսուսի խոսքերը տպավորում է մեր մտքի մեջ: Ահա թե ինչու Փրկիչն ասաց. «Ոչ միայն հացով կապրի մարդ, այլ ամեն Խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից» (Մատթեոս 4.4):

«Շատ կրոնական շարժումներում, որոնք տեղի են ունեցել վերջին կես դարում, քիչ թե շատ երևում է այն նույն ուժի գործողությունը, որը դրսևորվելու է ապագայի ավելի լայնածավալ շարժումներում: Մենք տեսնում ենք, որ մարդիկ հուզական վերելք են ապրում, ճշմարտությունը խառնվում է ստի հետ, ինչը մոլորեցնում է շատերին: Բայց խաբեությու-

նից կարելի է խուսափել: Աստծո Խոսքի լույսի ներքո այդքան էլ դժվար չէ որոշել այդ շարժումների բնույթը: Մենք կարող ենք վստահաբար ասել, որ Աստծո օրհնությունը չկա այնտեղ, որտեղ մարդիկ անտեսում են Աստվածաշնչի վկայությունը, երես են թեքում այն հստակ ու հոգին փորձող ճշմարտություններից, որոնք պահանջում են ինքնուրացում և հրաժարում աշխարհիկ բավականություններից» (Է. Ուայթ, Մեծ պայքար, 464):

Ճշմարիտ վերածննդի էությունը Աստվածաշնչում բացված Աստծո կամքը բացահայտելու մեջ է: Հիսուսի կյանքը լի էր Սուրբ Հոգով: Ծննդից մինչև մահ Նրան առաջնորդում և գոտեպնդում էր Սուրբ Հոգին:

Երկուշաբթի ***օգոստոսի 19***

Աստծո սերն ու Նրա Օրենքը

Վերածնունդն անխզելիորեն կապված է Հիսուսին ճանաչելու հետ: Դա անձի հոգևոր ընդունակությունների արթնացումն է, Փրկչի հետ շփման անձնական կենդանի փորձը: Ամեն վերածննդի էությունը Հիսուսին ճանաչելն է, իսկական ծանոթությունը Նրա հետ՝ որպես Փրկիչ: Ելնելով Հիսուսի հետ շփման իր անձնական խորը փորձառությունից՝ Պողոս առաքյալն աղոթում էր եփեսացիների համար, որ նրանք կարողանան «ճանաչել Քրիստոսի սերը, որ ամեն գիտությունից գերազանց է, որ Աստծո ամեն լիությունով լցվեն» (Եփեսացիս 3.19):

Սա հակադրվում է տասը կույսերի մասին պատմությանը, որոնցից հինգն ունեին բարեպաշտության և կրոնասիրության արտաքին կերպարանք, բայց չունեին Հիսուսի հետ շփման անձնական փորձառություն: Ցույց տալով նրանց մեծ կարիքը՝ Հիսուսն ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ. Ես չեմ ճանաչում ձեզ » (Մատթեոս 25.12):

Աստծուն ճանաչելը միշտ տանում է հնազանդության: Աստծո օրենքը բացահայտում է Նրա սերը: Քրիստոսի հետ առավել խորը փոխհարաբերությունները տանում են Նրան ուրախացնելու է՛լ ավելի մեծ ցանկության: Հնազանդությունը սիրո պտուղն է: Որքան մենք ավելի շատ սիրենք Հիսուսին, այնքան ավելի շատ կցանկանանք դրսևորել Նրա հանդեպ մեր սերը: Ցանկացած այսպես կոչված վերածնունդ, որը չի ընդգծում մեղքերի ապաշխարության անհրաժեշտությունը, երբ մենք գիտակցաբար խախտել ենք Նրա օրենքը, կասկած է հարուցում: Կրոնական ջերմեռանդությունը կարող է ժամանակավոր հոգևոր վերելք առաջ բերել, բայց ոչ՝ կայուն հոգևոր փոփոխություններ:

Ի՞նչ նշաններով էր Հովհաննես առաքյալը որոշում, թե որքանով է մարդը ճանաչում Աստծուն: Ա Հովհաննես 2.3-6, 4.7-8,20-21: ____

_____

_____

_____

Բերված տեքստերում Հովհաննեսը երկու կարևոր տեսանկյուն է ընդգծում: Նախ՝ Աստծուն ճանաչելը տանում է Նրա պատվիրանները պահելուն: Երկրորդ՝ Աստծո հանդեպ սերը մարդուն դրդում է սիրել նաև մերձավորին: Հովհաննեսի միտքը պարզ է: Ճշմարիտ հոգևորությունը բերում է կյանքի փոփոխության: Վերածննդի էությունը ոչ թե Հիսուսին մոտ լինելու ջերմ զգացողությունն է, այլ Նրան ծառայելու ուրախությամբ առլեցուն վերափոխված կյանքը: Ամեն վերածննդի գործընթացում Աստծո մեծ նպատակն այն է, որ մեզ մոտեցնի Իրեն, խորացնի մեր նվիրումը՝ հետևելու մեր կյանքի համար Իր ունեցած նպատակին և ազատվելու այն ամենից, ինչը մեզ խանգարում է վկայել ու ծառայություն իրականացնել Իր համար:

Ձեզ որքանո՞վ է հաջողվում անձնական փոխհարաբերություններ կառուցել մարդկանց հետ: Դրանք ի՞նչ են վկայում Տիրոջ հետ ձեր փոխհարաբերությունների մասին: Ո՞ր հարցում է անհրաժեշտ բարելավել ձեր փոխհարաբերությունները ինչպես Աստծո, այնպես էլ շրջապատող մարդկանց հետ:

երեքշաբթի ***օգոստոսի 20***

Ձևամոլությունը, մոլեռանդությունն ու հավատը

Դժվարություններից մեկը, որին բախվում է ճշմարիտ վերածնունդը, ձևամոլության սառցե կապանքներից դուրս պրծնելու և միևնույն ժամանակ մոլեռանդության բոցավառ խարույկի մեջ չընկնելու անհրաժեշտությունն է: Ձևամոլությունը խորապես պարփակված է սեփական իրավունքների ամբողջության մեջ: Այն բավարարվում է կրոնապաշտության արտաքին թաղանթով, բայց հերքում է հավատի կենդանի իրողությունը: Մոլեռանդությունը բնութագրվում է ծայրահեղություններով: Այն շեղվում է ուղիղ ճանապարհից, հակված է անհավասարակշռվածության և սովորաբար կենտրոնացած է հավատի մեկ կողմի վրա՝ անտեսելով բոլոր մնացյալը: Մոլագարությունը հաճախ տանում է ինքնարդարության և դատապարտման: Պողոս առաքյալը ծարավի էր, որ քրիստոնեական եկեղեցիները «այլևս երեխա չլինենք՝

երերված ու տատանված վարդապետության ամեն քամուց՝ մարդկանց խաբեությունով, որ մոլորեցնեն խաբեբայության խորամանկությունով» (Եփեսացիս 4.14):

Կարդալով փարիսեցիների հասցեին Հիսուսի ասած հանդիմանությունը՝ մենք ի՞նչ ենք իմանում սառը ձևամոլության մասին: Մատթեոս 23.27,28, Ղուկաս 11.39,40, Մարկոս 7.5-9: _____

_____

_____

_____

Ի՞նչ կարելի է պատասխանել այն մարդկանց, ովքեր համարում են, որ նշաններն ու հրաշքները վկայում են Հիսուսի հանդեպ հավատարմության մասին: Մատթեոս 7.21-23: _____

_____

_____

_____

Վերը բերված տեքստերում հիշատակված մարդկանց երկու խմբերի ներկայացուցիչների մոտ անբավարար է սրտի նվիրաբերումը: Նշաններն ու հրաշքները երբեք չեն զբաղեցնի ճշմարիտ աստվածաշնչյան հավատի տեղը: Դրանք չեն փոխարինի Աստծո կամքի և Նրա Խոսքի կատարմանը: Ճշմարիտ վերածննդի էությունն այն խորը հավատն է, որ տանում է հնազանդության, Աստծո կամքի կատարման: Աստվածաշնչորեն հիմնավորված վերածնունդը համահունչ է Հովհաննեսի խոսքերին՝ «Որովհետև ամենքը, որ Աստծուց են ծնվել, հաղթում են աշխարհին, և սա է հաղթությունը, որ աշխարհին հաղթեց, այսինքն՝ մեր հավատը» (Ա Հովհաննես 5.4):

Ինչի՞ եք դուք ավելի շատ հակված՝ ձևամոլության և ավանդույթների՞, թե՞ փորձառություններ վերապրելու և հուզական գրգռման: Ինչպե՞ս գտնել ճիշտ հավասարակշռությունը, եթե դուք հակված եք այդ ծայրահեղություններից մեկին _____:

_____

_____

Չորեքշաբթի ***օգոստոսի 21***

Ծառայությունն ու հրաշքները

Կեղծ վերածնունդը հաճախ կենտրոնանում է հրաշքների վրա, իսկ ճշմարիտ վերածնունդը՝ ծառայության: Կեղծ վերածնունդը շեշտը դնում

է տպավորիչ նշանների ու հրաշքների վրա, իսկականն ընդունում է այն փաստը, որ մեծագույն հրաշքը փոխված կյանքն է:

Ապաքինման այն հրաշքները, որոնք կատարում էր Հիսուսը, վկայում էին Նրա Մեսիա լինելու մասին: Լինելով մեր կարեկից Փրկիչը՝ Նա ձգտում էր թեթևացնել մարդկային տառապանքները: Բայց Նրան է՛լ ավելի անհանգստացնում էր այն յուրաքանչյուրի փրկությունը, ում Ինքը դիպչում էր Իր ապաքինող շնորհով: Հիսուսի փրկագնող ծառայության նպատակն էր՝ «որոնել և ապրեցնել» կործանվող մարդկությանը (Ղուկաս 19.10): Կրոնական առաջնորդների հետ անդամալույծի մասին վիճաբանության ժամանակ Հիսուսն ասաց. «Բայց որ իմանաք, թե մարդու Որդին իշխանություն ունի երկրի վրա մեղքեր թողնելու. այն ժամանակ անդամալույծին ասաց. Վե՛ր կաց, քո մահիճը վե՛ր առ և գնա՛ քո տուն» (Մատթեոս 9.6): Այս հրաշքին ի պատասխան՝ մարդիկ փառաբանում էին Աստծուն (Մատթեոս 9.8)

Հրաշքները Հիսուսի փրկագնական ծառայության արդյունքն էին, բայց դրանք չէին Նրա երկիր գալու գլխավոր պատճառը:

Բերված համարներն ի՞նչ են հայտնում այն մասին, թե ինչպես մարդիկ կարող են խաբվել վերջին օրերին: Բ Թեսաղոնիկեցիս 2.9-12, Մատթեոս 24.11-13,24, Հայտնություն 19.20: _____

_____

_____

_____

_____

_____

Այս մարդիկ կեղծ հրաշքներից խաբվեցին այն պատճառով, որ «ճշմարտության սերը չընդունեցին, որ ապրեն»: Երբ տեսարանի ցանկությունն անհամեմատ ավելի մեծ է, քան Քրիստոսում նոր կյանքի փափագը, այդ ժամանակ միտքը բաց է խաբեության համար: Հարուստի և Ղազարոսի մասին առակն ավարտվում է Հիսուսի խորաթափանց բառերով. «Եվ Աբրահամը նրան ասաց. Եթե Մովսեսին ու մարգարեներին ականջ չեն դնում, չեն էլ համոզվի, եթե մեռելներից մեկը հարություն առնի» (Ղուկաս 16.31): Այլ կերպ ասած՝ տպավորիչ նշաններն ու զարմանալի հրաշքները երբեք չեն զբաղեցնի Աստծո Խոսքի և Նրան հնազանդ լինելու տեղը: Գլխավորը Աստծուն հետևելն է, իսկ նշաններն ու հրաշքները միշտ երկրորդական են:

Ի՞նչ հրաշքների եք դուք հանդիպել ձեր կյանքում Տիրոջ հետ անձնական փոխհարաբերություններում: Դրանք ձեզ ի՞նչ են սովորեցրել: Որքանո՞վ են կարևոր դրանք ձեր հավատի համար:

Պտուղներ և պարգևներ

Թվարկե՛ք մի քանի գլխավոր պատճառներ, որ Աստված Իր Եկեղեցուն ուղարկում է Սուրբ Հոգու պարգևները: Ա Կորնթացիս 12.4-7, Հռոմեացիս 12.4-8, Եփեսացիս 4.11-16: _____

_____

Սուրբ Հոգու պարգևները կարելի է բաժանել երկու մեծ խմբերի՝ որոշ պարգևներ հատկանիշներ են, մյուսները՝ կանչվածություն: Օրինակ, օգնության, հյուրընկալության, քարոզելու և ուսուցման պարգևները հատկանիշներ են, որոնցով Աստված օժտում է առանձին հավատացյալների (Հռոմեացիս 12.6-8): Առաքյալության, մարգարեության, ավետարանման և հովվության (դասավանդման) պարգևները առանձին հավատավորների կանչվածությունն է (Եփեսացիս 4.11,12): Երկու խմբերն էլ ծառայում են մեկ ընդհանուր նպատակի: Դրանք տրված են Սուրբ Հոգու կողմից, որ ամրապնդեն եկեղեցու հոգևոր կյանքը և օգնեն նրան իր առաքելությունը կատարելու համար: Հոգևոր պարգևները ինքնանպատակ չեն, դրանք Աստծո կողմից տրված են ի բարօրություն Նրա եկեղեցու՝ նրա շինության համար:

Ի՞նչ նկատի ունի Պողոսը, երբ Գաղատացիս 5.16-ում օգտագործում է «Հոգով գնացեք» արտահայտությունը: Կարդացե՛ք Գաղատացիս 5.22-25-ը և թվարկե՛ք այն հատկանիշները, որոնք ի հայտ են գալիս, երբ մենք գնում ենք Հոգով: Տե՛ս նաև Հովհաննես 15.1-7-ը: _____

_____

_____

Ցանկացած այսպես կոչված վերածնունդ, որը հետաքրքրություն հանդես չի բերում Հոգու պտղի հատկանիշների հանդեպ, այլ համակված է Հոգու պարգևներն ունենալու ձգտմամբ, վտանգավոր է: Եթե Աստված Հոգու պարգևները ավելցուկով ուղարկեր հավատավորներին, ովքեր Հոգու պտղի հատկանիշներ ի հայտ չեն բերում, այդ ժամանակ եկեղեցին կդառնար եսասիրական սնափառության կենտրոն: Երկնային զորության հոսքեր բացելը, երբ թույլ են հոգևոր խողովակները, նշանակում է կործանել: Զգուշացե՛ք այն շարժումներից, որոնք կենտրոնացված են Սուրբ Հոգու պարգևների և զորության, և ոչ թե Աստծո կամքին հնազանդվելու և բնավորության վերափոխման վրա, որոնք ի հայտ են բերում Հոգու պտուղը:

Դուք ի՞նչ կարող էիք ասել այն մարդուն, ով, իր կարծիքով, զգում է աստվածային զորության գերբնական դրսևորումը: Ինչպե՞ս կարելի է օգնել այդ մարդուն՝ հասկանալու, թե իր վերապրածն ուղարկված էր իսկապես Աստծո՞, թե՞ մեկ այլ ուժի կողմից: Մեծ պայքարի իրական լինելու մեր ըմբռնումն ինչպե՞ս է օգնում որոշել, թե ով կամ ինչն է կանգնած հրաշքների հետևում:

Ուրբաթ ***օգոստոսի 23***

Հետագա ուսումնասիրության համար

«Հոգու խոստումը պատշաճ կերպով չի գնահատվում, այդ պատճառով էլ այն չի կատարվում այնպես, ինչպես դա հնարավոր էր: Դրանում ի հայտ է գալիս Սուրբ Հոգու բացակայությունը, որը ավետարանական ծառայությունը դարձնում է զորությունից բացարձակապես զուրկ: Մարդը կարող է հոյակապ կրթություն, տաղանդներ, պերճախոսություն, տարատեսակ բնատուր պարգևներ և ձեռքբերումի ունակություններ ունենալ, բայց առանց Աստծո Հոգու ներկայության ոչ մի սիրտ չի հուզվի, ոչ մի մեղավոր ձեռք չի բերվի Քրիստոսի համար: Մյուս կողմից, միաբան լինելով Քրիստոսի հետ, ընդունելով Հոգու պարգևները, Նրա հետևորդներից անգամ ամենաաղքատն ու անկիրթը կունենա այնպիսի զորություն, որը կխոսի հոգիների հետ: Աստված այդպիսի մարդկանց դարձնում է Տիեզերքի ամենահզոր ազդեցության հաղորդիչները» (Է. Ուայթ, Քրիստոսի առակները, 328):

«Առաքյալի անկեղծ աղերսներն անպտուղ չմնացին: Սուրբ Հոգին գործում էր մեծ զորությամբ, և սխալ ճանապարհի վրա կանգնած շատ մարդիկ գտան Ավետարանի հանդեպ իրենց նախկին հավատը: Այդ ժամանակից ի վեր նրանք ամուր էին այն ազատության մեջ, որ իրենց պարգևել էր Քրիստոսը: Նրանց կյանքում դրսևորվեց Հոգու պտուղը՝ «սեր, ուրախություն, խաղաղություն, երկայնամտություն, քաղցրություն, բարություն, հավատ, հեզություն, ժուժկալություն»: Աստծո անունը փառավորվեց, և այն կողմերում շատերը միացան հավատացյալներին» (Է. Ուայթ, Գործք առաքելոց, 388):

Հարցեր քննարկման համար

1. Մտորե՛ք սառը ձևամոլության և անզուսպ մոլեռանդության միջև գոյություն ունեցող տարբերությունների շուրջ: Դրանք մի՞շտ են հա-

կադիր: Այսինքն՝ կարո՞ղ է համայնքը միաժամանակ լինել և՛ մոլեռանդ, և՛ ձևամոլ: Եթե այո, դա ինչպե՞ս կարող է դրսևորվել: Ինչո՞ւ և՛ մեկը, և՛ մյուսը վնաս են պատճառում վերածննդին և բարեհորոգությանը: Ի՞նչ կարելի է ասել ձեր համայնքի մասին: Ի՞նչ դիրքորոշում ունի նա: Դուք ինչպե՞ս կարող եք օգնել նրան՝ գտնելու ճիշտ հավասարակշռությունը:

2. Մենք կարո՞ղ ենք աշխարհում տեսնել կեղծ վերածննդի նշաններ, և եթե այո, ապա՝ ինչպիսի՞ք: Մենք որտեղի՞ց գիտենք, որ դրանք կեղծ են: Մյուս կողմից, մի՞թե սխալ է հավատալ այն բանին, որ Աստված աշխատում է այն մարդկանց վերածննդի ուղղությամբ, ովքեր թեև սիրում են Նրան, բայց չգիտեն մեզ հայտնի ճշմարտությունները:
3. Ողջ դասարանով քննարկե՛ք ձեր պատասխանները հինգշաբթի օրվա դասի հարցի վերաբերյալ մարդու մասին, ով համարում է, թե Աստծո հետ գերբնական փորձառություն է վերապրել: Դուք ի՞նչ կարող եք սովորել ձեր եղբայրների ու քույրերի պատասխաններից:

ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԾՆՆԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆ Է

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Բ Մնացորդաց 20.17-20, Ա Կորնթացիս 6.19,20, Հայտնություն 2.1-6, Հռոմեացիս 1.16,17, Հայտնություն 14.6,7,12:

Հիշելու համար.

«Որովհետև թե՛ սրբողը, թե՛ սրբվողները, ամենքը մեկից են, և այդ պատճառով ամոթ չի համարում նրանց եղբայր կոչել» (Եբրայեցիս 2.11):

Վերածնունդը տևական գործընթաց է: Ամեն օր Տերը մեզ հրավիրում է կիսել Իր հետ շփման ուրախությունը: Ինչպես Իսրայելն էր կերակրվում երկնքից առաքվող մանանայով, այսօր էլ Հիսուսն ամեն օր մեզ համար հոգևոր խնջույք է կազմակերպում: Մեր հոգիները կըշտանում են, շունչը նորոգվում է, իսկ սիրտը՝ վերածնվում, երբ մենք լուռ ծնկի ենք իջնում Նրա գահի առջև՝ խորհելով Նրա Խոսքի մասին: Իսկական հոգևոր նորոգումը միշտ տանում է մտքերի, սովորությունների և կենսակերպի փոփոխության: Հենց սա է, որ մենք անվանում ենք բարենորոգություն:

«Ուրեմն դուք, սիրելինե՛ր, առաջուց իմանալով՝ զգո՛ւյշ կացեք, որ միգուցե անօրենների մոլորությունով հափշտակվելով՝ ընկնեք ձեր հաստատությունից: Եվ աճեցե՛ք մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի շնորհքով և գիտությունով. Նրան լինի փառք և՛ հիմա, և՛ մինչև հավիտենական օրը: Ամե՛ն» (Բ Պետրոս 3.17,18): Տվյալ դեպքում Պետրոսը բարենորոգությունը նկարագրում է որպես «աճ շնորհում»: Դա նշանակում է թույլ տալ Սուրբ Հոգուն՝ մեր կյանքի բոլոր կողմերը համաձայնեցնել Աստծո կամքին: Այնտեղ, որտեղ մեր հնազանդությունը բավարար չէ, վերածնունդը Աստծուն ուրախացնելու ցանկություն է առաջ բերում: Բարենորոգությունը մեզ տանում է կարևոր որոշում ընդունելու՝ հրաժարվել Աստծուց հեռացնող ամեն բանից:

Մարգարեները բարենորոգության կոչ են անում

Աստված հաճախ էր ուղարկում Իր մարգարեներին, որպեսզի Իսրայելին ուղղորդի դեպի վերափոխման ճանապարհը: Վերածնունդն անփոփոխ կերպով ուղեկցվում էր վերափոխմամբ: Կարևոր է նկատի ունենալ, որ եթե նույնիսկ ընտրյալ ժողովուրդը հեռանում էր Աստծուց, այնուամենայնիվ, շարունակում էր մնալ Նրա ժողովուրդը: Աստված կրկին ու կրկին ուղարկում էր Իր լրաբերներին, որպեսզի նրանց վերադարձնի Իր մոտ: Հին Կտակարանում գրի առնված վերածննդի ու բարենորոգության այդպիսի օրինակները հաճախ ընդհանուր բնութագրեր ունեն:

Հին Կտակարանում վերածնունդ ու բարենորոգություն էր տեղի ունենում, երբ մարդիկ ի սրտե կրկին խոստանում էին հնազանդվել Աստծո կամքին: Երբ Իսրայելը գնում էր իր ճանապարհով և «ամեն մարդ իր աչքին հաճելի եղածն էր անում» (Դատավորաց 21.25), Աստված վերցնում էր Իր օրհնությունը, և ժողովուրդը բախվում էր տարատեսակ աղետների ու պարտությունների:

Մի անգամ, երբ Աստծո ժողովուրդը բախվեց մեծագույն փորձություններից մեկին՝ նրան ճակատամարտ էր սպասվում ամմոնացիների և մովաբացիների հետ, Հովսափատ թագավորը իրեն դրսևորեց որպես արժանավոր հոգևոր առաջնորդ: Ճգնաժամի ժամանակ արքան ողջ ժողովրդին կոչ արեց հուսալ Աստծո զորությանը (Բ Թագավորաց 20.12): Թագավորը հասկացավ, թե ինչ է անհրաժեշտ վերածննդի և բարեփոխման համար:

Կարդացե՛ք Բ Մնացորդաց 20.1-20-ը և ձևակերպե՛ք հրեաներին Հովսափատ թագավորի տված հրահանգների էությունը: Ի՞նչ կարևոր խորհուրդ տվեց նա իր ժողովրդին: Վերածննդի և բարենորոգության ի՞նչ օրինակ ենք մենք այստեղ գտնում: _____

_____

_____

_____

_____

«Աստված Հուդայի զորությունն էր այդ ճգնաժամում, և հենց Նա էլ Իր ժողովրդի զորությունն է այսօր: Մենք չպիտի ապավինենք իշխաններին կամ մարդկանց դնենք Աստծո տեղում: Մենք պետք է հասկանանք, որ մարդիկ կարող են սխալվել և մոլորվել, և միայն ամենա-

կարող Աստված է մեր պաշտպանության անառիկ ամրոցը: Ցանկացած ճգնաժամային իրադրության մեջ մենք պետք է զգանք, որ սա Նրա ճակատամարտն է: Նրա հնարավորություններն անսահման են, իսկ մի բանի հաղթահարումը, ինչն անհնար է թվում, հաղթանակն է՛լ ավելի նշանակալից կդարձնի» (Է. Ուայթ, Հակամարտությունն ու արիությունը, 217):

Հովսափատի փորձառությունը պատկերում է վերածննդի և բարենորոգության էությունը: Այն Իսրայելի ժողովրդին միավորում է համատեղ ծոմի, աղոթքի, առ Աստված վստահության ու հնազանդության մեջ:

Այս պատմության մեջ բացահայտված հոգևոր ճշմարտություններն ինչպե՞ս կարող են օգնել ձեզ դժվարին և ճգնաժամային իրավիճակներում: Ո՞ր միակ ճանապարհն է տանում դեպի հավատի ճշմարիտ դրսևորում:

Երկուշաբթի ***օգոստոսի 26***

Պողոսը կորնթացիներին վերափոխման կոչ է անում

Կորնթացիներին ուղղված իր նամակում Պողոսը նրանց հոգևոր վիճակի համար անկեղծ անհանգստություն է արտահայտում: Եկեղեցու շատ անդամներ չէին համապատասխանում Աստծո օրինակին: Իրադրությունը լուրջ էր, քանի որ համայնքի անդամներն այնպիսի անբարո վարք էին դրսևորում, որը, Պողոսի խոսքերով, չէր հանդիպում անգամ հեթանոսների մեջ (Ա Կորնթացիս 5.1): Պողոսը պետք է բազում խնդիրներ լուծեր: Այս համատեքստում դժվար չէ հասկանալ, թե ինչու Կորնթոսի եկեղեցին կարիք ուներ վերածննդի և վերափոխման:

Պողոսը կորնթացիներին ի՞նչ խորհուրդ տվեց նրանց հոգևոր կյանքի վերաբերյալ: Ո՞րն է բերված համարների գլխավոր միտքը. Ա Կորնթացիս 6.19,20, 9.24-27, 13.13, 15.1,2,27,27: _____

_____

_____

_____

Պողոսը կորնթացիներին հորդորում է կառչել հավատին և Աստծուն փառավորելը դարձնել կյանքի գլխավոր նպատակ: Առաքյալը ևս մեկ անգամ նրանց հավաստիացրեց իր սիրո մեջ և հաստատեց, որ Աստծո

զորությամբ նրանք կարող են հաղթահարել ցանկացած գայթակղություն, որ հանդիպում է իրենց ճանապարհին (Ա Կորնթացիս 10.13):

Կորնթոսի եկեղեցին ինչպե՞ս արձագանքեց Պողոսի խորհրդին: Բ Կորնթացիս 7.8-12: _____

_____

_____

_____

Պողոսը կորնթացիների արձագանքից ցնծությամբ լցվեց: Թեև նա առաջվա նման անհանգստանում էր նրանց համար, սակայն գրեց. «Արդ ուրախ եմ, որ ամեն բանի մեջ վստահություն ունեմ ձեզ վրա» (Բ Կորնթացիս 7.16): Ինչպիսի՜ փոփոխություն: Կորնթացիներին հղված իր առաջին ուղերձում Պողոսը նրանց խստորեն դատապարտում էր մարմնավոր արատների համար, իսկ երկրորդ ուղերձում Աստծո հետ նրանց նոր փորձառության լիակատար վստահություն է դրսևորում: Բարենորոգությունը հանգեցրեց սովորությունների, կյանքի և փոխհարաբերությունների փոփոխության: Կորնթացիներն առաջվա նման հոգևոր դժվարությունների էին բախվում, փորձություններ էին վերապրում, բայց իրենց քրիստոնեական հավատի մեջ նշանակալի առաջընթաց ունեցան: Վերածնունդն ու բարենորոգությունը համադարման չեն բոլոր հոգևոր խնդիրների լուծման համար: Դա հավատի անընդհատ ճանապարհի մի մասն է:

Երեքշաբթի ***օգոստոսի 27***

Բարենորոգության կոչը Հայտնություն գրքում

Հայտնություն գրքի երկրորդ և երրորդ գլուխներում նկարագրված յոթ եկեղեցիները պատկերում են բազում քրիստոնեական եկեղեցու պատմությունը բազում դարերի ընթացքում: Այս տեսակետն ունեն Աստվածաշնչի բազմաթիվ հետազոտողներ: Ադվենտիստ մեկնաբանները նույնպես այս դիրքորոշման կողմնակիցներ են:

Հրեշտակը հրամայում է Հովհաննեսին. «Գրի՛ր, ինչ որ տեսնում ես, և ինչ որ է, և ինչ նրանից հետո լինելու է» (Հայտնություն 1.19): Յոթ եկեղեցիների մասին տեսիլքը վերաբերում է անցյալին, ներկային և ապագային: Այն նկարագրում է Աստծո եկեղեցու ինչպես հաջողությունները, այնպես էլ անհաջողությունները, պատմում է նրա հաղթանակների և պարտությունների մասին: Թեև յոթ եկեղեցիները կարող են ներկայացնել եկեղեցու կյանքը պատմական հեռանկարում, նրանցից

յուրաքանչյուրին ուղղված լուրն իրենից ներկայացնում է վերածննդի ու բարենորոգության երկնային կոչի ցնցող պատկեր:

Կարդացե՛ք Հայտնություն 2.1-6-ը: Ի՞նչ լավ բան է ասված այդ եկեղեցու մասին: Որո՞նք էին նրա խնդիրները: _____

_____

_____

_____

_____

Եփեսոսի եկեղեցուն հասցեագրված ուղերձը բնութագրում է ՔՀ մոտավորապես 31-ից 100 թվականների նորկտակարանյան եկեղեցին: Առաջին քրիստոնյաները նախանձախնդիր էին իրենց հավատի մեջ: Նրանք առանց հոգնության աշխատում էին հանուն Ավետարանի քարոզի: Աշակերտները խնամքով պահպանում էին եկեղեցու ուսմունքի մաքրությունը, հակառակվում էին հերձվածողություններին և ճշմարտության խանդավառ պաշտպաններ էին:

Սակայն ժամանակի ընթացքում եկեղեցու անդամներն սկսեցին կորցնել իրենց «առաջին սերը»: Նվիրումը նրանք փոխարինեցին պարտքի զգացումով: Հիսուսի աշխատանքը կատարելը նրանց համար ավելի կարևոր դարձավ, քան Նրա հետ փոխհարաբերությունները պահպանելը: Աստիճանաբար և գրեթե աննկատ Հիսուսի հետ շփման նրանց փորձառությունը սկսեց անհետանալ: Նրանք ջանադրաբար աշխատում էին՝ պաշտպանելով իրենց հավատը, բայց նրանց հոգևոր կյանքից ինչոր կարևոր մի բան էր հեռացել: Նրանց պակասում էր սերը Հիսուսի և միմյանց նկատմամբ:

Դուք ի՞նչ զգացիք, երբ առաջին անգամ ծանոթացաք Հիսուսի հետ: Ինչպե՞ս կարող եք առաջվա նման պահպանել ձեր «առաջին սերը»: Ինչո՞ւ է դա այդքան կարևոր: Ի՞նչը կարող է ձեզ զրկել այդ սիրուց:

Հորեքշաբթի ***օգոստոսի 28***

Լյութերի բարենորոգման կոչը

Երբ մտորում ենք «բարենորոգում» բառի մասին, մեր մտքերը բնականորեն դառնում են Բողոքական բարենորոգմանը և Մարտին Լյութերին: Մինչ այդ արևմտյան քրիստոնեությունը մեծամասամբ ամփոփված էր ավանդույթների շրջանակներում: Եկեղեցական դոգմաները փոխարինել էին Հիսուսի ուսմունքին: Առավել հաճախ հիմնվում էին

ավանդույթի, քան Սուրբ Գրքի վրա: Մարդիկ գործում էին վախից դրդված: Նրանք քիչ ունեին կամ առհասարակ չունեին փրկության հույս: Խճճված և ճանապարհից շեղված՝ նրանք դժվարությամբ էին հավատում, որ Աստված իսկապես ցանկանում է փրկել իրենց:

Հենց պատմության այդ ճգնաժամային պահին էր, որ Աստված վեր բարձրացրեց Մարտին Լյութերին, որպեսզի նա Իր ժողովրդին տանի բարենորոգման ճանապարհով: Լյութերը շատ տարիների ընթացքում պայքարում էր սեփական մեղավորության զգացումի դեմ, մինչև որ նրա կյանք ներթափանցեց Ավետարանի լույսը:

Կարդացե՛ք Հռոմեացիներին ուղղված ուղերձից առաջարկված համարները: Ինչո՞ւ դրանք այդպիսի հզոր ազդեցություն թողեցին Լյութերի կյանքի վրա և ինչո՞ւ են այդքան կարևոր մեր հավատի վերածնման և կյանքի վերափոխման համար: Հռոմեացիս 1.16,17, 3.21-25, 5.6-11, 8.1-4: _____

_____

_____

_____

_____

«Մեղավորները կարող են Աստծո կողմից արդարացվել միայն այն ժամանակ, երբ Նա ներում է նրանց մեղքերը, ազատում է պատժից, որին արժանի են, և նրանց հետ վարվում է այնպես, ասես իրականում նրանք երբևէ չէին էլ մեղանչել: Նա նրանց հանդեպ դրսևորում է Իր աստվածային բարյացակամությունը և նրանց վերաբերվում է որպես արդարների: Նրանք արդարացում են ստանում միայն Քրիստոսի՝ համարվող արդարության շնորհիվ: Հայրն ընդունում է Որդուն, և Իր Որդու փրկագնական զոհի շնորհիվ ընդունում է և մեղավորին» (Է. Ուայթ, Հատընտիր լուրեր, հտ. 3, 194):

Շնորհի ըմբռնումը կարող է վերափոխել կյանքը: Սա քրիստոնեության էությունն է: Աստծո շնորհը, որին մենք չենք արժանացել և որին արժանի չենք, մեր հավատի անկյունաքարն է: Հիսուսի կյանքի, մահվան, հարության և քահանայական ծառայության շնորհիվ մեզ է պատկանում հավիտենական կյանքի պարգևը: Այն ստանալով հավատով՝ մենք փրկության վստահություն ենք ձեռք բերում:

Վերածնունդը ենթադրում է, որ մենք ամեն օր գիտակցում ենք շնորհի արժեքը: Չկա ոչինչ առավել ոգևորիչ, քան ամենօրյա ուրախությունը Աստծո բարության և շնորհի համար:

Մտորե՛ք այն մեծ հույսի մասին, որ ամփոփված է հանուն մեր փրկության Քրիստոսի սխրանքի մեջ: Ինչո՞ւ այդ ճշմարտությունը

պետք է լինի մեր կյանքի ցանկացած վերածննդի և վերափոխման հիմքում:

Հինգշաբթի *օգոստոսի 29*

Բարենորոգության երկնային կոչը վերջին ժամանակում

Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցին ճշմարտության առաջ-ընթաց հայտնության շարժում է (տե՛ս Առակաց 4.18): Եկեղեցին վեր հառնեց Աստծո ձեռքով, որպեսզի վերականգնի աստվածաշնչյան ճշմարտությունները, որոնք կորսվել էին բազում դարեր առաջ: Թեև Սուրբ Հոգին մեծ զորությամբ գործում էր բարենորոգիչների միջոցով, այնուամենայնիվ, մնում էին կարևոր ճշմարտություններ, որ նրանք մինչև վերջ չէին հասկանում: Աստված այսօր էլ ունի ճշմարտություններ, որոնք ցանկանում է բացահայտել Իր ժողովրդին:

Աստված շահագրգռված չէ, որ մենք ճշմարտությունը հասկանանք պարզապես նրա համար, որ այն մեր գիտակցությունը լցնի կրոնական գիտելիքներով: Աստվածաշնչյան ճշմարտությունները Նրա սրտի լուսամուտներն են: Դրանք մեզ որոշ բաներ են բացահայտում Նրա բնավորության մասին: Որքան ավելի հստակորեն ենք հասկանում Աստծո Խոսքի ճշմարտությունները, այնքան առավել լրիվությամբ կարող ենք գիտակցել Աստծո սիրո խորությունը: Կեղծ ուսմունքն աղավաղում է Նրա բնավորությունը: Ճշմարտությունը բացահայտում է սատանայի սուտը և ցույց է տալիս, թե ով է նա իրականում (խորհեցե՛ք թեկուզ դժոխքում հավիտենական տառապանքների մասին՝ որպես այն բանի ամենաակնառու օրինակ, ինչ թաքնված է սատանայի սրտում):

Երկնքում ծագած մեծ պայքարի հենց սկզբից սատանան փորձում է զրպարտել Աստծո բնավորությունը: Նա սխալ ներկայացրեց Աստծո մտադրությունները Իր արարչագործության վերաբերյալ: Սակայն Իր կյանքում, Իր հռչակած ճշմարտության մեջ և Իր ընդունած մահվամբ Հիսուսը բացահայտեց Հոր ճշմարիտ բնավորությունը:

Ուշադիր կարդացեք վերածննդի և վերափոխման մասին Աստծո լուրը վերջին ժամանակի համար (Հայտնություն 14.6,7, 12): Այս համարներն ինչպե՞ս են բացահայտում Աստծո բնավորությունը: _____

_____

_____

Հավիտենական Ավետարանի մասին վերջին ժամանակի Աստծո լուրը ներառում է Աստծո կամքին հնազանդվելու կոչ՝ դատաստանի ժամի լույսի ներքո: Դատաստանը ողջ Տիեզերքի համար բացահայտում է Աստծո ինչպես արդարությունը, այնպես էլ ողորմությունը: Էվոլյուցիայի դարում վերափոխման մասին Հիսուսի լուրը նաև կոչ է անում Նրա ժողովրդին՝ Արարչին երկրպագել ճշմարիտ աստվածաշնչյան շաբաթ օրը: Շաբաթը հզոր հարված է էվոլյուցիոն տեսությանը:

Ինչպե՞ս հասկանալ, որ «հավիտենական Ավետարանը» երեք հրեշտակների պատգամի հիմքն է: Դուք ինչպե՞ս կարող եք ամեն օր վստահ լինել, որ ավետարանի լուրը վերաբերում է ձեզ, ինչպիսի սխալներ էլ որ դուք գործեք: Ինչո՞ւ է այդքան կարևոր ամեն օր սեփական անձի նկատմամբ Ավետարանի լուրը կիրառելը:

Ուրբաթ ***օգոստոսի 30***

Հետագա ուսումնասիրության համար

«Վերածնունդն ու բարենորոգությունը պետք է տեղի ունենան Սուրբ Հոգու օգնությամբ: Վերածնունդն ու բարենորոգությունը միևնույն բանը չեն: Վերածնունդը նշանակում է հոգևոր կյանքի արթնացում, հարություն հոգևոր մահից: Բարենորոգությունը նշանակում է բարենորգում, գաղափարների ու տեսությունների, սովորույթների ու վարքի փոփոխություն: Բարենորոգությունը արդարության բարի պտուղ չի բերի, եթե կապված չլինի վերածննդի հետ, որը Հոգուց է բխում: Վերածնունդն ու բարենորոգությունը պետք է կատարեն իրենց համար նախատեսված աշխատանքը, և այս աշխատանքի մեջ նրանք պետք է միասին լինեն» (Է. Ուայթ, The Advent Review and Sabbath Herald, 1902թ. փետրվարի 25):

«Միայն նրանք, ովքեր հոգու խորքում ենթակա են աշխարհին, անկախ իրենց դավանանքից, կրոնական հարցերում կառաջնորդվեն քաղաքական դրդապատճառներով, և ոչ թե սկզբունքներից ելնելով: Մենք պետք է ճշմարտությունն ընտրենք՝ հանուն հենց ճշմարտության, իսկ հետևանքները թողնենք Աստծուն: Մեծ վերափոխումների համար աշխարհը պարտական է սկզբունքային, հավատավոր և քաջարի մարդկանց: Այդպիսի մարդիկ բարենորոգումներ են իրականացնում նաև մեր օրերում» (Է. Ուայթ, Մեծ պայքար, 460):

Հարցեր քննարկման համար

1. Ի՞նչն է առաջնային՝ վերածնո՞ւնդը, թե՞ բարենորոգությունը,, և ինչո՞ւ:
2. Ինչո՞ւ վերածնունդն ու բարենորոգությունը անխզելիորեն կապված են մեր սրտի հետ: Ինչո՞ւ դրանք պետք է սկսվեն անհատապես, երբ մեզանից յուրաքանչյուրը գիտակցաբար ընտրում է իր հարաբերությունները Տիրոջ հետ նորոգելը, մոտենալ Նրան և առավել, քան երբևէ, ջանադրաբար ձգտել կատարելու Նրա կամքը: Ինչո՞ւ վտանգավոր է սպասել, մինչև դա սկսի տեղի ունենալ այն մարդու կյանքում, ով եկեղեցու նստարանին նստած է ձեր կողքին, կամ էլ երբ հովիվն իր ձեռքը վերցնի այդ նախաձեռնությունը: Ինչո՞ւ դուք ինքներդ պետք է այսօր որոշում ընդունեք՝ ձեզ առավել լրիվ նվիրել Աստծուն, որպեսզի Նա ձեր մեջ կատարի Իր գործը:
3. Ոչինչ չի կարող այնպիսի հարված հասցնել վերածննդին ու բարենորոգությանը, ինչպես կոպիտ, դատապարտող հոգին այն մարդկանց հանդեպ, ովքեր, ինչպես ձեզ թվում է, չեն համապատասխանում սպասվող չափանիշներին: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել խուսափել այդ վտանգավոր ծուղակներից և միևնույն ժամանակ պաշտպանել մեզ վստահված ճշմարտությունը:

ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆԸ ԱՃԵԼՈՒ ԵՎ ՓՈԽՎԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆՆ Է

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Ա Հովհաննես 2.1-9, Փիլիպեցիս 2.12-14, Մատթեոս 26.31-35, Հովհաննես 20.24-29, Ղուկաս 15.11-21, Հովհաննես 5.1-14:

Հիշելու համարը.

«Բայց ավելի շնորհք է տալիս. նրա համար ասում է՝ Ամբարտավաններին հակառակ է կենում, բայց խոնարհներին շնորհք է տալիս: Արդ հնազանդվեցե՛ք Աստծուն, հակառա՛կ կացեք սատանային, և նա կփախչի ձեզանից» (Հակոբոս 4.6,7):

Նախքան Պենտեկոստեն աշակերտները մեծ հոգևոր կարիքներ ունեին: Նրանք չափազանց մշուշոտ պատկերացումներ ունեին Աստծո ծրագրերի մասին, չէին հասկանում, թե որն է Հիսուսի առաքելությունը: Բայց երբ Աստծո շնորհը կպավ աշակերտներին, Քրիստոսի սիրուց հալվեցին նրանց սրտերը: Նրանք վերածնունդ և վերափոխում վերապրեցին:

Վերածնունդը հոգևոր խորը բաղձանքների արթնացում է: Դա հոգևոր ցանկությունների ուժեղացում է՝ Սուրբ Հոգու ազդեցության ներքո Աստծուն մեր մոտենալուն զուգընթաց: Վերածնունդը չի ենթադրում, որ նախկինում մենք Հիսուսի հետ ոչ մի փորձառություն չենք ունեցել, ավելի շուտ՝ այն մեզ դրդում է է՛լ ավելի խորը և հարուստ փորձառություն ապրել: Բարենորոգությունը նշանակում է աճ և փոփոխություն: Այն դրդում է առաջ շարժվել հոգևոր աճի մեջ: Բարենորոգությունը մեզ հրավիրում է վերանայել մեր կյանքը՝ աստվածաշնչյան արժեքների լույսի ներքո և թույլ տալ Սուրբ Հոգուն՝ մեզ անհրաժեշտ փոփոխությունները կատարելու ուժ տալ՝ ապրելու Աստծո կամքին հնազանդ:

Այս շաբաթ մենք ուսումնասիրելու ենք նորկտակարանյան քրիստոնյաների կյանքը, ովքեր վերածնունդ ու բարենորոգություն էին ապրել իրենց հոգևոր փորձառության մեջ:

Շնորհ՝ աճի համար

Աշակերտների կյանքում մշտական հոգևոր աճ էր նկատվում. չէ՞ որ նրանք Հիսուսի հետ էին: Երբ Քրիստոսը կանչեց աշակերտներին, նրանց փոխհարաբերություններն ու արարքները չէին արտացոլում Նրա բնավորության գեղեցկությունը:

Կարդացե՛ք Ղուկաս 9.51-56 և Մատթեոս 20.20-28-ը: Այս հատվածներն ինչպե՞ս են բացահայտում Հակոբոսի և Հովհաննեսի բնավորությունները: _____

_____

_____

_____

_____

Հակոբոսի և Հովհաննեսի բնավորությունները լուրջ թերություններ ունեին: Նրանք պատրաստ չէին աշխարհին հայտնել Քրիստոսի սերը, չգիտեին, թե ինչպես շնորհի լուրը հայտնել մարդկանց, ում կյանքը վերափոխման կարիք ուներ:

Չնայած բնավորության լուրջ թերություններին՝ Հակոբոսն ու Հովհաննեսը ցանկանում էին առավել լիակատար կերպով արտացոլել Հիսուսի բնավորությունը: Նրանք ծարավի էին բարեհորոգության: Հոգևոր աճը և փոփոխությունը մեր քրիստոնեական փորձառության մի մասն են:

Կարդացե՛ք Ա Հովհաննես 2.1-9-ը: Ի՞նչ խոշոր փոփոխություններ տեղի ունեցան Հովհաննեսի բնավորության և հայացքների մեջ: Մենք ի՞նչ դաս կարող ենք քաղել Հովհաննեսի օրինակից այն մասին, թե ինչ է նշանակում լինել Հիսուսի հետևորդ: _____

_____

_____

_____

_____

Որքա՜ն հեշտ է հիասթափվել սեփական անձից, հատկապես՝ եթե մենք իսկապես ցանկանում ենք մեր կյանքում վերածնունդ ու բարեհորոգություն ապրել: Երբ դուք հիասթափված եք, երբ ձեզ անհաջողակ, կորած մարդ եք զգում, ի՞նչ հանգամանքներ կարող են հիշեցնել ձեզ, որ երբեք չի կարելի հանձնվել: Ինչո՞ւ, չնայած ձեր բոլոր թերություններին, դուք կարող եք վստահ լինել փրկությանը:

Որոշման ընդունումը

Փոփոխությունները տեղի են ունենում ընտրության պահին: Բարենորոգությունը տեղի է ունենում, երբ մենք վճռում ենք հնազանդվել Սուրբ Հոգու հանդիմանող զորությանը և մեր կամքը ենթարկեցնել Աստծո կամքին: Աստված երբեք չի բռնանա մեր կամքին կամ չի շրջանցի այն: Նա հարգում է մեր ազատությունը: Նրա Հոգին համոզում է մեր մտքին, ազդում է սրտի վրա և դրդում է ճիշտ վարվել, բայց Սուրբ Հոգու կոչին արձագանքելու ընտրությունը մնում է մեզ:

Կարդացե՛ք Փիլիպեցիս 2.12-14-ը: Այս հատվածն ինչպե՞ս է վկայում շնորհում մեր աճի մեջ Աստծո հետ համագործակցության անհրաժեշտության մասին: Ի՞նչ նկատի ուներ Պողոսը, երբ ասում էր՝ «գործեցեք ձեր փրկությունը»: Իսկ ի՞նչ են նշանակում նրա «Աստված է, որ ներգործում է ձեզանում» խոսքերը: _____

_____

_____

_____

Մեզ համար անհնար է հասնել մի բանի, ինչի վրա դեռ չի աշխատել Աստված: Իր գերբնական զորությամբ Նրա աշխատելուն զուգընթաց մենք ընդունակ ենք դառնում ընդունել որոշում՝ մեր կյանքով ցույց տալու զորությունն ու շնորհը, որով Նա հարստացրել է այն:

«Երբ մահկանացու, մեղավոր մարդը ահով ու դողով գործում է իր փրկությունը, նրանում աշխատում է Աստված՝ կատարելով կամենալն էլ, անելն էլ Իր հաճության պես: Բայց Աստված չի աշխատի առանց մարդու համագործակցության: Վերջինս պետք է օգտագործի իր բոլոր ուժերը, նա պետք է ձգտող, ջանադիր աշակերտ լինի Քրիստոսի դպրոցում: Եվ որքան ավելի շատ է նա ընդունում է իրեն անհատույց տրվող շնորհը, այնքան մտքում և սրտում Քրիստոսի ներկայությունը օգնում է նրան՝ ընդունել մեղքի ցանկացած բեռ թողնելու նպատակաուղղված որոշում, որպեսզի սիրտը լցվի Աստծո սիրո ողջ լիությամբ» (Է. Ուայթ, Քրիստոնեական դաստիարակության հիմունքները, 134):

Բարենորոգությունը տեղի է ունենում այն ժամանակ, երբ մենք համագործակցում ենք Աստծո հետ՝ որոշում ընդունելով Նրան տալ այն ամենը, ինչ ցույց է տալիս Սուրբ Հոգին, և ինչը ներդաշնակ չէ Նրա կամքի հետ: Եթե մենք չընդունենք այդ որոշումները (դրանք երբեմն

շատ ցավոտ են լինում), դրական հոգևոր փոփոխություններ տեղի չեն ունենա:

Աստված եսասիրական մտքերը ուժով չի պոկի մեր ուղեղից: Նա խորհրդավոր կերպով չի վերցնի անառողջ սովորությունները կամ գաղտնի հակումները: Նա դատապարտում է մեր մեղքը: Նա մեզ համոզում է ճիշտ վարվել, բայց մե՛նք պետք է կատարենք ընտրությունը: Հենց որ ճիշտ ընտրություն ենք կատարում, Նա գոտեպնդում է մեզ այդ ընտրության մեջ, սակայն մենք ինքներս ամեն օր, անգամ ամեն վայրկյան կատարում ենք մեր ընտրությունը:

Ի՞նչ է նշանակում մեր փրկության գործում համագործակցել Աստծո հետ: Իսկ ի՞նչ չի ենթադրում այդ համագործակցությունը: Վերջին անգամ դուք ե՞րբ եք խորը հանդիմանություն զգացել ինչ-որ բանում և Աստծո ողորմությամբ հաղթահարել այդ մեղքը, թեև պայքարը շատ ծանր է եղել:

Երեքշաբթի սեպտեմբերի 3

Հավատը և կասկածը

Ինչպիսի՞ն էին Պետրոսի բնավորությունն ու վարքը նախքան Գողգոթայի խաչը: Մատթեոս 26.31-35: _____

_____

_____

_____

_____

Պետրոսը չէր կարողանում դիմակայել թշնամու խարդավանքներին: Նա ջանում էր դիմակայել սատանայի գայթակղություններին՝ հիմնվելով իր սեփական ուժերի վրա: Ինքնավստահությամբ լեցուն՝ նա անգամ չէր պատկերացնում, թե իրենց ինչ է սպասվում առջևում: Կայիափայի ներքին բակում միայնակ, սպասուհու հարցից վախեցած՝ Պետրոսն ուրացավ Իր Տիրոջը (Մատթեոս 26.69-75): Ավելի վաղ Հիսուսը նախազգուշացրել էր Պետրոսին. «Սիմո՛ն, Սիմո՛ն, ահա սատանան ձեզ ուզեց, որ մաղի ցորենի պես, բայց ես աղաչեցի քեզ համար, որ քո հավատը չպակասի, և դու, երբ որ դառնաս, եղբայրներիդ էլ հաստատիր» (Ղուկաս 22.31,32): Հիսուսը տեսնում էր Պետրոսի հոգևոր վիճակը: Հիմնվելով սեփական ուժերի վրա՝ Պետրոսը հեռանում էր Իր Տիրոջից: Այդ պատճառով Փրկիչը օգտագործեց «դու, երբ որ դառնաս» արտահայտությունը: Պետրոսը հոգևոր արթնացման կարիք

ուներ: Նրա դիրքորոշումը պետք է փոխվեր: Նա բարենորոգության կարիք ուներ:

Կարդացե՛ք Հովհաննես 20.24-29-ը: Բերված հատվածն ի՞նչ է ասում Թովմասի մասին: Այս դեպքից մենք ի՞նչ դասեր կարող ենք քաղել մեզ համար: _____

_____

Պետրոսն ու Թովմասը մի ապշեցուցիչ ընդհանուր գիծ ունեին: Նրանք հավատին մոտենում էին մարդկային տեսակետից: Պետրոսը վստահ էր, որ կարող է անել, իսկ Թովմասը՝ որ կարող է տեսնել: Նրանք կախված էին իրենց անկատար մարդկային դատողությունից: Բայց Պենտեկոստեն ամեն բան փոխեց: Փոխված Պետրոսը խիզախորեն քարոզում էր Պենտեկոստեի օրը, և երեք հազար մարդ մկրտություն ընդունեց (Գործք առաքելոց 3.2-9): Երբ իշխանություն ունեցողները փորձեցին Պետրոսին ստիպել լռել, նա պատասխանեց. «Մենք չենք կարող այն, որ տեսանք և լսեցինք, չասել» (Գործք առաքելոց 4.20): Պետրոսը ուրիշ մարդ էր դարձել: Թովմասը նույնպես փոխվել էր: Ավանդությունն ասում է, որ նա նավարկություն է կատարել դեպի Հնդկաստան, որպեսզի քարոզի Ավետարանը: Թեև նրա մասին քիչ է ասված, մենք կարող ենք վստահ լինել, որ Պենտեկոստեից հետո նա նույնպես նոր մարդ դարձավ:

Ո՞ւմ բնավորությունն է ձեզ ավելի շատ դուր գալիս՝ Պետրոսի՞, թե՞ Թովմասի: Դուք ի՞նչ կարող եք սովորել նրանց փորձառություններից, որ նման սխալներ չգործեք:

Հորեքշաբթի *սեպտեմբերի 4*

Վերադառնալու դրդում

Կարդացե՛ք Ղուկաս 15.11-21-ը: Ի՞նչ առանձնահատուկ հանգամանքներ դրդեցին անառակ որդուն՝ տուն վերադառնալու որոշում ընդունել: Վերածննդի և բարենորոգության ի՞նչ սկզբունքներ են դրված առակում: _____

_____

_____

Վերածնունդը կարելի է սահմանել տարբեր կերպ: Սակայն կարևոր է աչքաթող չանել մի պահ՝ վերածնունդը *վերադարձ է դեպի տուն:* Դա Հոր սերն առավել լավ ճանաչելու խորագույն ցանկություն է: Բարենորոգությունը կապված է աճի և փոխվելու՝ Սուրբ Հոգու դրդմանն

արձագանքելու ընտրության հետ: Դա որոշում է՝ թողնել այն ամենը, ինչ կանգնած է Աստծո հետ առավել սերտ փոխհարաբերությունների ճանապարհին: Անառակ որդին չի կարող միևնույն ժամանակ լինել և՛ խոզանոցում, և՛ Հոր տան տոնական խնջույքի մեջ:

Պատկերացրե՛ք մի երիտասարդի, ով չափազանց շատ էր կարոտել հայրական տունը և չէր կարող մնալ նախկին վայրում: Նրա սրտում վերադառնալու անհաղթահարելի ցանկություն էր հայտնվել: Աստվածային ներկայության այդպիսի անհաղթահարելի ցանկությունը մեզ տանում է դեպի վերածնունդ և բարենորոգություն: Հայրական գրկախառնության խորը կարոտը դրդում է մեզ կյանքի մեջ անհրաժեշտ փոփոխությունների:

Պատրաստվելով վերադառնալ տուն՝ երիտասարդը նախօրոք մտորել էր արդարացումների մասին: Հնարավոր է, որ նա կրկին ու կրկին փորձում էր իր խոսքը: Ղուկաս 15.18,19-ում կարդացե՛ք անառակ որդու խոսքը և հոր պատասխանը 20-24 համարներում: Մենք հոր խոսքերից ի՞նչ ենք իմանում մեր հանդեպ Աստծո վերաբերունքի մասին:

Թեև որդին հոր տեսադաշտի սահմաններից դուրս էր, նա մնացել էր նրա սրտում: Հայրական աչքերը ամեն օր նայում էին հեռուն՝ ցանկանալով հորիզոնի վրա տեսնել որդու ուրվագիծը: Մեր կյանքում փոփոխություններ կատարելու մեծագույն դրդապատճառը պետք է լինի Նրա սիրտը չկոտրելու ցանկությունը, ով այնքա՜ն սիրում է մեզ: Երբ պատանին խոզերի հետ տրորում էր ցեխը, հայրը տառապում էր ավելի, քան նա ինքը: Վերածնունդը տեղի է ունենում այն ժամանակ, երբ Աստծո սերը խոնարհեցնում է մեր սիրտը: Իսկ բարենորոգությունը տեղի է ունենում, երբ մենք որոշում ենք ընդունում արձագանքել այն սիրուն, որը մեզ թույլ չի տալիս հեռանալ: Երբ մենք բարդ ընտրություն ենք կատարում և թողնում ենք մեզ Աստծուց բաժանող վարքը, սովորությունները, մտքերն ու զգացմունքները, Նրա հանդեպ սերը զբաղեցնում է դրանց տեղը:

«Այս իմ որդին մեռած էր և կենդանացավ» արտահայտությունը ինչո՞ւ է համարվում ճշմարիտ վերածննդի տարողունակ սահմանում: Ի՞նչ է նշանակում լինել մեռած, իսկ հետո կենդանանալ:

Հինգշաբթի ***սեպտեմբերի 5***

Հավատը գործողության մեջ

Հիսուսն Իր գործած հրաշքների միջոցով բացում էր Հոր կարեկցանքն ու սերը: Նա բժշկում էր անդամալույծ մարմինները, որպես-

զի անդամալույծ հոգիներ ապաքինելու է՛լ ավելի մեծ ունակությունը դրսևորի: Նա վերականգնում էր խեղված ձեռքերն ու ոտքերը, որպեսզի ցույց տա անդամալույծ սրտերը և խճճված միտքը վերականգնելու Իր հսկայական ցանկությունը: Հիսուսի հրաշքները սովորեցնում են մեզ, թե ինչպես մարզել մեր հավատը: Դրանք մեզ աճի և փոփոխության մասին թանկարժեք դասեր են տալիս:

Հավատի զորությունը ներկայացնող ամենավառ պատկերներից մեկն արտահայտված է Բեթհեզդայի ավազանի մոտ հիվանդի ապաքինման հրաշքի մեջ: Խեղճ մարդը ավազանի մոտ պառկած էր արդեն երեսունութ տարի: Նա հուսահատված էր: Նախքան Հիսուսի գալը նրա կյանքը, թվում է, դատապարտված էր խեղճության, չքավորության և տառապանքների:

Կարդացե՛ք Հովհաննես 5.1-14-ը: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ Հիսուսը հարցրեց հիվանդին, թե նա ուզո՞ւմ է առողջ լինել: (Հովհաննես 5.6): Մի՞թե ակնհայտ չէ, որ ցանկացած այդքան երկար տառապած մարդ կցանկանա ապաքինվել: Ո՞րն էր Հիսուսի դըրդապատճառը: Ի՞նչ պատասխանեց հիվանդը: (Հովհաննես 5.7):

_____

_____

_____

_____

Լսելով հիվանդի պատասխանը՝ Հիսուսը պարզապես ասաց. «Վե՛ր կաց, վերցրո՛ւ քո մահիճը և քայլի՛ր» (Հովհաննես 5.8): Հիմնական հարցը հետևյալն է. *այդ խեղճ հիվանդ մարդը հավատ ունե՞ր այն բանի հանդեպ, որ Քրիստոսի խոսքը կարող է բժշկել իրեն, և գործո՞ւմ էր համապատասխանորեն՝ չնայած իր ողջ նախորդ փորձառությանը:* Հենց որ հիվանդը որոշում ընդունեց հնազանդվել Քրիստոսի հրամանին, ապաքինվեց: Ապաքինման պարգևը Քրիստոսի խոսքում էր: Հիսուսի խոսքն իր մեջ կրում էր Սուրբ Հոգու զորությունը, որպեսզի կատարի այն, ինչ Նա հռչակել էր:

«Հավատացե՛ք Նրա խոստմանը: Խոստովանե՛ք ձեր մեղքերը և ձեզ հանձնե՛ք Աստծուն: Նրան ծառայելու որոշում ընդունեք: Հենց որ անեք դա, Աստված անպայման կկատարի Իր խոստումը: Դուք կապաքինվեք նույն կերպ, ինչպես անդամալույծը, ում Քրիստոսը քայլելու ընդունակություն էր տվել այն պահին, երբ հիվանդը հավատաց, որ ապաքինված է: Հավատացողի համար ամեն բան հնարավոր է:

Մի՛ սպասեք, մինչև զգաք, որ բժշկվել եք, այլ ասացե՛ք. «Ես հավատում եմ դրան ոչ թե որովհետև ինձ առողջ եմ զգում, այլ որովհետև Աստված խոստանում է» (Է. Ուայթ, Քայլեր դեպի Քրիստոս, 51):

Ինչո՞ւ է այդքան կարևոր ներման մասին Աստծո խոստումներին հավատալը, հատկապես՝ երբ մենք մեր մեղքերի համար մեղավորության զգացում ենք ունենում: Ինչո՞ւ ներումը պետք է նախորդի մեր կյանքի վերափոխմանը: Ինչո՞ւ է կարևոր հավատալը, որ Քրիստոսի զորությամբ մենք միշտ կարող ենք հաղթանակ տոնել:

Ուրբաթ ***սեպտեմբերի 6***

Հետագա ուսումնասիրության համար

«Թող ոչ ոք չքարոզի, թե մարդն ինքը ոչինչ չպետք է անի, ինքն իրեն հաղթահարելու այդ մեծ աշխատանքի մեջ: Աստված մարդու համար ոչինչ չի անում առանց նրա մասնակցության: Նաև հարկ չկա ասել, թե Հիսուսը կօգնի ձեզ միայն այն բանից հետո, երբ դուք ձեր կողմից կանեք ամեն հնարավորը: Քրիստոսն ասել է. «Առանց ինձ չեք կարող ոչինչ անել» (Հովհաննես 15.5): Սկզբից մինչև վերջ մարդը պետք է համագործակցի Աստծո հետ: Եթե Սուրբ Հոգին չի ազդում մարդու սրտի վրա, նա ամեն քայլի կսայթաքի և կընկնի: Միայն մարդկային ջանքերը ոչինչ չարժեն, իսկ Քրիստոսի հետ համագործակցությունը նշանակում է հաղթանակ… Երբեք մի՛ ներշնչեք մարդկանց, որ նրանց կողմից ոչ մի կամ գրեթե ոչ մի ջանք չի պահանջվում, բայց նրանց սովորեցրե՛ք համագործակցել Աստծո հետ, որպեսզի հաղթանակ տանեն պայքարում» (Է. Ուայթ, Հատընտիր լուրեր, հտ. 1, 381):

«Ճշմարիտ հնազանդությունը գալիս է սրտից: Այն ծագում է սրտում՝ Քրիստոսի ազդեցության ներքո: Եվ եթե մենք չհակառակվենք, Նա այնքան կմիաձուլվի մեր մտքերի ու նպատակների հետ, այնքան մեր սիրտն ու միտքը կբերի Իր կամքի հետ համաձայնության, որ, հնազանդվելով Նրան, մենք կկատարենք ոչ այլ ինչ, քան մեր ցանկությունները: Սրբված և մաքրագործված՝ մեր կամքը ցնծությամբ կմասնակցի Քրիստոսի ծառայությանը: Երբ մենք ճանաչենք Աստծուն այնպես, ինչպես դա տրված է մեզ, մեր կյանքը մշտական հնազանդության օրինակ կդառնա: Քրիստոսի ճիշտ ըմբռնման և Աստծո հետ շփման շնորհիվ մենք կսկսենք ատել մեղքը» (Է. Ուայթ, Դարերի փափագը, 668):

Հարցեր քննարկման համար

1. Աճը քրիստոնյայի կյանքում տեղի է ունենում այն ժամանակ, երբ նա հավատով հիմնվում է Աստծո խոստումների վրա և հավատում է դրանց կատարմանը: Բերված համարներում ի՞նչ խոստումներ են տրված մեզ. Ա Հովհաննես 1.7-9, Փիլիպեցիս 4.13, Հակոբոս 1.5-8, Հռոմեացիս 8.31-39: Դուք ինչպե՞ս կարող եք սովորել հավատալ ձեր կյանքում դրանց իրականացմանը: Դուք ի՞նչ որոշումներ կարող եք ընդունել՝ այդ խոստումներն առավել իրական դարձնելու համար:
2. Խորհե՛ք հետևյալ բառերի մասին. «Ահով ու դողով գործեցեք ձեր փրկությունը»: Դասարանում խոսե՛ք այն մասին, թե ինչ է դա նշանակում, հատկապես՝ հավատով փրկության լույսի ներքո: Մենք ինչի՞ց պետք է վախենանք: Ի՞նչը մեզ պետք է ստիպի դողալ:
3. Վերջին անգամ ե՞րբ եք դուք, Պետրոսի նման, խախտել Աստծուն տրված խոստումը, թեև այն միանգամայն անկեղծ է եղել: Դուք ի՞նչ դաս քաղեցիք այդ սխալից: Ի՞նչ աստվածաշնչյան սկզբունքներ կօգնեն ձեզ՝ հասնելու խոստացված հաղթանակին:

ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ Է

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Կողոսացիս 3.1-4, Բ Կորնթացիս 3.17,18, 10.3-5, Հռոմեացիս 12.2,3, Հովհաննես 10.10, Մատթեոս 5.13-15:

Հիշելու համար.

«Արդ, եթե Քրիստոսի հետ հարություն առաք, ապա խնդրեցեք վերինները, որտեղ Քրիստոսն է նստում Աստծո աջ կողմը: Վերինները մտածեցեք, ոչ թե երկրի վրայինները» (Կողոսացիս 3.1,2):

Իսահակ Ուոթսը 750 օրհներգի հեղինակ է, որոնցից շատերն այսօր էլ երգում են հազարավոր քրիստոնյաներ: Մի անգամ Լոնդոնում շքերթ էր տեղի ունենում Իսահակ Ուոթսի պատվին: Մարդիկ խմբերով դուրս էին եկել փողոց, որ տեսնեն այդ հանրաճանաչ մարդուն: Երբ նրա կառքն անցնում էր մարդկանցով լեփ-լեցուն պատշգամբների տակով, մի կին ցնցված էր, որ այդ միջահասակ, տարիների բեռից կորացած մարդն այդպիսի հիասքանչ օրներգեր է գրել: Նա բացականչեց. «Ի՞նչ: Դուք Իսահակ Ուո՞թսն եք»: Ուոթսը նշան արեց, և կառքը կանգ առավ: Նա կանգնեց ողջ հասակով և բացականչեց. «Տիկի՛ն, անգամ եթե ես շատ բարձրահասակ լինեի, կամ իմ ձեռքերն արարելու զորություն ունենային, ինձ առաջվա նման կգնահատեին խելքով, որովհետև միտքը մարդու գնահատման հայտածիչն է»:

Իսահակ Ուոթսն իրավացի էր: Մարդուն գնահատում են խելքով, իսկ բարենորոգությունը վերաբերում է մեր մտքին: Եթե փոփոխություններ են տեղի ունեցել մտածողության մեջ, դա կդրսևորվի նաև արարքների մեջ: Նարենորոգությունը տեղի է ունենում, երբ Սուրբ Հոգին մեր մտքերը ներդաշնակեցնում է Քրիստոսի մտքերի հետ, իսկ մտածողությանը հաջորդում են գործերը:

Մտքերն ու արարքները

Մեր մտքերը որոշում են նաև մեր վարքը: Մտածելակերպն ազդում է գործելաոճի վրա: Եվ ընդհակառակը, կրկնվող գործողություններն ազդում են մեր մտքերի վրա: Քրիստոնյան նոր արարած է, նրա մեջ մտածողության հին մոդելները փոխարինվում են նորերով (Բ Կորնթացիս 5.17):

Երբ մարդիկ առագաստանավը նախապատրաստում են ճանապարհորդության, բարձրացնում են առագաստները: Առագաստներն են որոշում նավի ուղղությունը: Ճանապարհորդության ընթացքում անհրաժեշտ է հետևել առագաստներին, որպեսզի պահպանվի ճիշտ ուղղությունը: Եթե ուշադրություն չդարձնենք առագաաստների վրա, նավն արագորեն կշեղվի իր ուղուց: Առագաստների նման, մեր մտքերն են որոշում մեր հոգևոր կյանքի ուղղությունը: Քրիստոնյաներին կոչ անելով՝ «Վերինները մտածեցե՛ք» (Կողոսացիս 3.2), Պողոս առաքյալը դրդում է մեզ մտքերը կենտրոնացնել երկնայինի վրա: Մեր մտքերը ձևավորվում են այն բանից, ինչին մենք ժամանակ ենք հատկացնում:

Շնորհի ի՞նչ հրաշք է ներթափանցում մեր կյանք, երբ մենք Աստծո Խոսքի մեջ տեսնում ենք Նրա փառքը: Բ Կորնթացիս 3.17,18:

Հիսուսին տեսնելով Իր Խոսքի մեջ՝ մենք փոխվում ենք: Նոր մտքերը փոխարինելու են գալիս հներին: Նայելով Հիսուսին՝ մենք ավելի ու ավելի ենք նմանվում Նրան: «Մտավոր և հոգևոր զարգացման հիմնարար օրենքը հռչակում է. ինչին մարդը նայում է, դրան էլ վերածվում է: Մարդն աստիճանաբար հավասարվում է այն առարկաներին, որոնց մասին մտածում է՝ նմանվելով նրան, ինչ սիրում է և ինչին երկրպագում է: Եվ մարդը երբեք ի զորու չէ բարձրանալ մաքրության, ազնվության և ճշմարտության իր չափանիշից վերև: Եթե բարձրագույն իդեալը իր սեփական «ես»-ն է, ապա մարդը երբեք չի բարձրանա իր թուլություններից վերև: Ընդհակառակը, նա դանդաղորեն, բայց վստահաբար ավելի ու ավելի ցած կիջնի: Միայն Աստծո շնորհն է ընդունակ բարձրացնել մարդուն: Ինքներս մեզ թողնվելով՝ մենք անխուսափելիորեն ներքև կգլորվենք» (Է. Ուայթ, Մեծ պայքար, 555):

Հիսուսին նայել՝ սրանում է բարենորոգության էությունը: Նա պետք է լցնի մեր միտքը, ձևավորի մեր մտքերը, ղեկավարի մեր արարքները: Երբ մեր հայացքը դարձած է Հիսուսին, Նա մեզ տանում է դեպի է՛լ ավելի բարձր չափանիշներ, քան խիստ կանոնների պարզ հանրագումարն է:

Մենք չենք կարող իրապես նայել, ընկալել Հիսուսին և մնալ առաջվանը: Եթե մենք կիսում ենք Նրա մտքերը, միայն մեկ ցանկություն կունենանք՝ հետևել Նրա կամքին:

Դուք ի՞նչ խորհուրդ կտայիք մարդուն, ով ձգտում է Հիսուսին առաջին տեղը հատկացնել իր մտքերի մեջ: Աստվածաշունչն ի՞նչ նկատի ունի, երբ խոսում է Հիսուսին նայելու անհրաժեշտության մասին:

Երկուշաբթի *սեպտեմբերի 9*

Մտքի զտիչները

Որոշ ծնողներ երեխաների համար այնքան անհանգստացած են համացանցի մատչելիությամբ, որ իրենց համակարգիչների վրա որոշակի կայքեր արգելափակող զտիչներ են տեղադրել: Ուրիշները նույն բանն անում են հեռուստացույցների համար: Էլեկտրոնային զտիչների նպատակն է՝ ինչ-որ բան անցկացնել, իսկ մեկ այլ բան՝ արգելափակել: Աստված հոգ է տարել, որ մեր միտքը պաշտպանված լինի հոգևոր զտիչներով: Այն միանգամայն հմուտ կերպով է ստեղծված, և մեր միտքը ներս է թողնում միայն այն, ինչը նպաստում է Հիսուսի հետ մեր հոգևոր փոխհարաբերությանը:

Պողոսն ի՞նչ գործնական խրատներ է տալիս իր քրիստոնյա եղբայրներին նրանք իրենց միտքը վտանգավոր ազդեցությունից պահպանելու համար: Այդ խորհուրդն այսօր ինչպե՞ս կարելի է կապել հեռուստացույց նայելու, համացանցի և կինոնկարների հետ կապված մեր սովորությունների հետ: Փիլիպպեցիս 4.7,8, Հռոմեացիս 12.2:

Անհնար է խորը հոգևոր տեսողություն զարգացնել, եթե մեր միտքը սնվում է բռնությամբ, ագահությամբ և նյութապաշտությամբ: Մեր զգացմունքները դեպի միտք տանող դարպասներն են: Եթե միտքը լի է հոլիվուդյան կինոնկարների գրգռիչ տեսարաններով, դրանք կձևավորեն զգայական փորձերը, և ոչ թե Աստծո Խոսքի սկզբունքները: Պրոդյուսերները միլիոնավոր դոլարներ են ծախսում, որ կառավարեն մեր հույզերը, պայմանավորեն մեր մտածողությունն ու ձևավորեն արժեքները: Մենք կարող ենք վստահ լինել, որ զվարճությունների այդ գիտակները իրենց հարց չեն տալիս, թե իրենց արտադրանքը նպաստելո՞ւ է Հիսուսի վերադարձին մարդկանց նախապատրաստվելուն: Նրանց գլխավոր շարժառիթը փողն է: Քրիստոսի երկրորդ գալստյանը նա-

խապատրաստվող Յոթերորդ օրվա ադվենտիստները պետք է լավ մտածեն՝ մինչ իրենց հոգիները աշխարհիկ զվարճանքների զոհասեղանին կդնեն:

Իտալիայի Միլան քաղաքում մի հրաշակերտ մայր տաճար կա՝ մուտքի երեք խոշոր դռներով: Ձախ դռան վերևում փորագրված են հետևյալ բառերը. «Ամեն բան, ինչ բավականություն է պատճառում, տևում է միայն մեկ վայրկյան»: Աջ դռան վերևում փորագրված է. «Այն ամենը, ինչ անհանգստություն է պատճառում, տևում է մեկ վայրկյան»: Եվ կենտրոնական դռան վերևում զարդարանքներով հարուստ մակագրությունը հռչակում է. «Երկարատև է միայն այն, ինչ հավերժ է»:

Հարցրե՛ք ինքներդ ձեզ՝ դուք հաճա՞խ եք մտորում հավիտենականի մասին: Ձեր նախընտրանքներն ինչպե՞ս են արտացոլում ձեր մտքերը:

Երեքշաբթի ***սեպտեմբերի 10***

Մտքի պաշտպանությունը

«Եվ Աստծո խաղաղությունը, որ ամեն մտքից վեր է, կպահպանի ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսում» (Փիլիպեցիս 4.7): Մենք պետք է ակտիվորեն ձգտենք այդ հիասքանչ խոստմանը, որպեսզի այն իրապես կատարվի մեր կյանքում:

Միտքը պաշտպանությունից զրկելու բազում եղանակներ կան: Մենք կարող ենք բացել բոլոր «ջրարգելակները» և գիտակցություն ներս թողնել աշխարհիկ զվարճանքների հոսքը: Մեր միտքը կարող է ափեափ լցվել չարությամբ, դառնությամբ, վիրավորանքով կամ սուզվել թունավոր հաճույքների և վնասակար սովորությունների օվկիանոսը: Բարի լուրն այն է, որ Հիսուսը խոստացել է պաշտպանել մեր միտքը, եթե մենք Նրան թույլ տանք:

Կարդացե՛ք Բ Կորնթացիս 10.3-5-ը: Ինչպե՞ս հասկանալ Պողոսի խոսքերն այն մասին, որ մեր զինվորության զենքերը մարմնավոր չեն, այլ Աստծով զորավոր: Ի՞նչ է նշանակում մարմնավոր զենք: Իսկ ի՞նչ բան է Աստծով զորավոր զենքը: Ի՞նչ նկատի ունի նա, և ինչպե՞ս դա կարող է իրականանալ: _____

_____

_____

Քրիստոնյաները հաճախ մեջբերում են Բիլի Գրեմի խոսքերը. «Դուք չեք կարող թռչուններին արգելել թռչել ձեր գլխավերևում, բայց

դուք կարող եք արգելել նրանց՝ բույն հյուսել ձեր մազերի մեջ»: Այլ կերպ ասած՝ մեր գլխում տարբեր մտքեր են հայտնվում: Տարատեսակ տեսողական պատկերներ, ձայներ և բույրեր խթանում են այս կամ այն մտքերը: Զանազան փորձառություններ տարբեր հույզեր են առաջ բերում: Միշտ չէ, որ մենք կարող ենք ընտրել մեր մտքերը: Բայց մենք կարող ենք որոշում ընդունել՝ դրանց վրա կենտրոնացնե՞լ մեր ուշադրությունը, թե՞ ոչ, նրանց թույլ տա՞լ, թե՞ թույլ չտալ լցնելու մեր գիտակցությունը: Բոլոր մտքերը հնազանդեցնել Քրիստոսին՝ նշանակում է ձեռք բերել Հիսուսի բանականությունը: Մարմնավոր մտքերը չեն անհետանա միայն այն պատճառով, որ մենք չենք ցանկանում: Աստծո Խոսքի հստակ սկզբունքների վրա կենտրոնացած միտքն Աստծո շնորհով պաշտպանված ու պահպանված է չարի բոլոր խարդավանքներից:

Հատկապես ի՞նչ նկատի ունի Պողոսը, երբ ասում է. «Ձեզանից ամեն մեկը թո՛ղ այն մտածի, ինչ և Քրիստոս Հիսուսում էր» (Փիլիպեցիս 2.5): Մենք ինչպե՞ս կարող ենք ունենալ Քրիստոսի զգացմունքները: «Թո՛ղ» բառը ենթադրո՞ւմ է պատասխանատվություն մեր կյանքում դրական փոփոխությունների համար:

Չորեքշաբթի ***սեպտեմբերի 11***

Մտքի ու մարմնի փոխադարձ կապը

Հին հույները սովորեցնում էին երկակիության մի որոշակի ձև, այն է՝ հավատում էին, որ մեր մարմնի և հոգու միջև խոշոր տարանջատում կա: Ի տարբերություն դրա՝ Սուրբ Գիրքը սովորեցնում է, որ մարդն իր մեջ համատեղում է ֆիզիկական, մտավոր, զգայական և հոգևոր սկզբնատարրերը: Այն, ինչ ազդում է մարդկային էության մի մասի վրա, ազդում է և ողջ մարդու վրա: Առաքյալները սովորեցնում էին, որ ֆիզիկական, մտավոր, հուզական և հոգևոր առողջությունը փոխկապակցված է և չի կարող տարանջատվել:

Այդ գաղափարն ինչպե՞ս է արտացոլված Ա Թեսաղոնիկեցիս 5.23-ում: _____

_____

_____

_____

Նորկտակարանյան հավատավորների համար ֆիզիկական, մտավոր և հուզական բարեկեցությունն անխզելիորեն կապված էր հոգևոր բարօրության հետ: Պողոս առաքյալը կոչ էր անում քրիստոնյաներին՝

«փառավորեցեք Աստծուն ձեր մարմնում»: Նա հավատում էր, որ ողջ մարդկությունը գնված է թանկ գնով, այդ պատճառով մենք մեզ չենք պատկանում (Ա Կորնթացիս 6.19,20): Մարմնի համար հոգատարությունը՝ արտահայտված առողջ կենսակերպում, մեզ շատ ավելին է տալիս, քան կյանքի մի քանի լրացուցիչ տարիները: Եթե տվյալ հարցում մենք առաջնորդվում ենք ճիշտ շարժառիթներով, դա նույնպես երկրպագություն է Աստծուն:

Ինչպե՞ս են Հռոմեացիս 12.1-3, Հովհաննես 10.10, Ա Կորնթացիս 10.31 համարներն արտացոլում փոխադարձ սերտ կապը մեր ֆիզիկական և հոգևոր առողջության միջև: _____

_____

_____

_____

Երբ Սուրբ Հոգին համոզում է մեզ աճելու անհրաժեշտության մեջ, Նա չի սահմանափակվում մեր կյանքի ինչ-որ մի տեսանկյունով: Բարենորոգությունը մեկ մակարդակի գործընթաց չէ: Հոգին ծարավի է, որ մեր կյանքը բոլոր ոլորտներում լիակատար համաձայնության բերի Քրիստոսի կամքի հետ: Եթե ինչ-որ ֆիզիկական սովորություն չի համապատասխանում Նրա կամքին, Աստված ուզում է, որ մենք թողնենք դրանք՝ փառաբանելու համար Իր անունը: Սատանան ուզում է մեր մարմնի միջոցով վերահսկել մեր միտքը, իսկ Հիսուսը փափագում է մեր մարմինը վերահսկել մեր մտքի միջոցով: Մեր մարմինը տաճար է, ոչ թե զվարճությունների սենյակ: Հետևելով երկնային սկզբունքներին՝ մենք կարող ենք ապրել առավել ուրախ, արդյունավետ, առողջ կյանքով՝ ավելցուկով:

Ի՞նչ անձնական փորձառություններ են համոզել ձեզ՝ ձեր ֆիզիկական և հոգևոր էության միջև փոխադարձ սերտ կապի հարցում: Ի՞նչ որոշումներ դուք կարող եք ընդունել, որպեսզի ձեր հոգևոր և ֆիզիկական էությունները բարենպաստ ներդաշնակության գան:

Հինգշաբթի ***սեպտեմբերի 12***

Ազդեցության ձևերը

Մի ամբողջ շարք պատկերներ կան, որոնց միջոցով Հիսուսը մեզ ներկայացրեց Իրեն և Իր եկեղեցին: Այդպիսի պատկերներից մեկը լույսն է: «Ես եմ աշխարհի լույսը» (Հովհաննես 8.12), - Իր մասին ասում

է Հիսուսը: Նրա մասին նաև ասված է. «Այն էր ճշմարիտ Լույսը, որ աշխարհ եկող ամեն մարդու լուսավորում է» (Հովհաննես 1.9): Տերը կոչ է անում մեզ՝ «քայլեցե՛ք, քանի դեռ լույսն ունեք» և «հավատացե՛ք լույսին» (Հովհաննես 12.35,36):

Մատթեոս 5.13-15-ը համեմատե՛ք Փիլիպպեցիս 2.14-16-ի հետ: Տերն ի՞նչ նպատակ է դրել աշխարհում Իր ժողովրդի առջև: Դա ինչպե՞ս կարելի է իրագործել կյանքում: Մենք ինչպե՞ս կարող ենք դառնալ այն, ինչ կոչված ենք լինելու: _____

_____

_____

_____

Վերածննդի և բարեկարգության նպատակն այն է, որ Քրիստոսի սիրո, շնորհի և ճշմարտության լույսը շողա մեր կյանքում: Լույսը խավարի հակադրությունն է: Հիսուսը կոչ է արել Իր ժողովրդին՝ ապրել աշխարհիկ կյանքի համընդհանուր ընդունված կերպարից տարբերվող կյանքով՝ ցույց տալու համար Նրա առաջարկած կյանքի գերազանցությունը: Նա մեզ կոչ է անում լինել կարեկից, հոգատար և զգայուն՝ այն աշխարհում, որտեղ իշխում են եսասիրությունը, ագահությունն ու ինքնասիրահարվածությունը: Տերը հրավիրում է մեզ՝ հետևել բարձր չափանիշների այն հասարակությունում, որը համակված է հաճույքների և զվարճանքների ծարավով (Կողոսացիս 3.1,2): Այն ժամանակ, երբ միլիոնավոր երիտասարդներ մեռնում են այլասերման հիվանդություններից, որոնք նրանք իրենք են իրենց վրա հրավիրել, Փրկիչը դրդում է մեզ առողջ կյանքի (Հովհաննես 10.10): Այս ինքնահավան, սանձարձակ, արհեստական գրգիռներից տանջահար սերնդի մեջ Հիսուսը մեզ ինչ-որ միանգամայն այլ բան է առաջարկում: Նա մեզ համեստության, արժանավոր վարքի և բարոյական մաքրության է կոչում (Ա Պետրոս 3.3,4):

Քրիստոսի ծննդից մոտավորապես 700 տարի առաջ հինկտակարանյան Եսայի մարգարեն հանդիսավոր կերպով Իսրայելի ժողովրդին բարեկարգության կոչ էր անում: Նրա խոսքերը մեծ նշանակություն ունեն Տիրոջ վերադարձին սպասող եկեղեցու համար: «Իմ խորհուրդները ձեր խորհուրդները չեն, և ձեր ճանապարհները իմ ճանապարհները չեն, ասում է Տերը: Այլ ինչպես որ բարձր է երկինքը երկրից, նույնպես էլ բարձր են իմ խորհուրդները ձեր խորհուրդներից» (Եսայիա 55.8,9): Եկեղեցու և մեզանից յուրաքանչյուրի համար Աստծո իդեալն ավելի բարձր է, քան մենք կարող ենք պատկերացնել: Երկինքը ծարավի է Աստծո ժողովրդի միջոցով բացահայտելու Աստծո սիրող էությունը:

Վերլուծե՛ք ձեր կյանքը: Այն վկայո՞ւմ է, որ դուք Հիսուսի հետևորդ եք, և ձեր կյանքը հենվում է ինչ-որ ավելի մեծ բանի վրա, քան այս մեռնող աշխարհն է:

Ուրբաթ ***սեպտեմբերի 13***

Հեպագա ուսումնասիրության համար

«Շատերը հայտարարում են, որ Տիրոջ կողմնակիցն են, բայց դա այդպես չէ. նրանց բոլոր արարքները խոսում են այն մասին, որ նրանք գտնվում են սատանայի ճամբարում: Ի՞նչ չափանիշներով պետք է որոշենք, թե ում կողմից ենք: Որտե՞ղ է մեր սիրտը: Ո՞ւմ հետ են մեր մտքերը: Ո՞ւմ մասին ենք մենք սիրում խոսել: Ո՞ւմ հանդեպ ենք ամենաքնքուշ կապվածությունը զգում և հանուն ո՞ւմ ենք տալիս մեր լավագույն ուժերը: Եթե մենք Տիրոջ կողմից ենք, մեր մտքերը Նրա հետ են, և մեր ամենահաճելի մտորումները Նրա մասին են: Մենք ընկերություն չենք անում աշխարհի հետ. մենք Նրան ենք նվիրաբերել այն ամենը, ինչ ունենք, և նաև՝ ինքներս մեզ: Մենք ծարավի ենք արտացոլելու Նրա կերպարը, շնչել Նրա հոգով, արարել Նրա կամքով և ամեն բանում ուրախացնել Նրան» (Է. Ուայթ, Հավատը, որով ես ապրում եմ, 220):

«Յուրաքանչյուր մարդու առավելություն է տրված՝ լինել կենդանի հուն, որով Աստված աշխարհ է առաքում Իր շնորհի գանձերը, Քրիստոսի անհատնում հարստությունները: Քրիստոսը չունի ավելի մեծ ցանկություն, քան այնպիսի հետևորդներ ձեռք բերելը, ովքեր աշխարհին կհայտնեն Նրա Հոգին և Նրա բնավորությունը: Չկա ոչ մի բան, որի կարիքը աշխարհն ունենար ավելի, քան մարդու միջոցով Փրկչի սիրո դրսևորումն է: Երկինքը լարված սպասում է նորանոր ուղիների, որոնցով սրբազան յուղը կարող էր հեղվել դեպի մարդկային սրտերը՝ դրանք լցնելով ուրախությամբ և օրհնություններով» (Է. Ուայթ, Քրիստոսի առակները, 419):

Հարցեր քննարկման համար

1. Պողոսն ի՞նչ խոսքեր է օգտագործում՝ նկարագրելու համար Աստծո ժողովրդի բարձր կոչումը (Բ Կորնթացիս 5.18-20, 6.17,18): Այդ կերպարներն ինչպե՞ս են դրսևորվում գործնական կյանքում: Մեր կյանքը վկայո՞ւմ է այն մասին, ինչ այստեղ խոսվում է մեր մասին:

2. Եթե մենք ազնիվ ենք, ապա կարող ենք հուսալ ցանկացած աստվածաշնչյան խոստման: Իսկ գայթակղության պահին անհրաժեշտ է գիտակցական ճիշտ ընտրություն կատարել և կենտրոնանալ ճշմարտության վրա, հակառակ դեպքում մենք կտրվենք գայթակղությանը: Ի՞նչ սկզբունքներ կամ սովորություններ են օգնում ձեզ վերահսկել ձեր մտքերը գայթակղության պահին:
3. Դուք ի՞նչ կպատասխանեիք մարդուն, ով ասում է. «Այո՛, իմ մտքերը միշտ չէ, որ մաքուր են, բայց իմ արարքները և կենսակերպը կատարյալ են»:
4. Հիասքանչ հոգևոր ճշմարտությունների հետ մեկտեղ, որոնք մենք ունենք՝ որպես Յոթերորդ օրվա ադվենտիստներ, մեզ նաև լուր է տրված առողջության մասին: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել այդ սկզբունքը կենսագործել մեր կյանքում: Ո՞րն է առողջության մասին լուրի դերը վերածննդի և բարենորոգության մեջ:

ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ Է

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Բ Տիմոթեոս 1.11, Փիլիմոն 1-25, Բ Կորնթացիս 10.12-15, Հռոմեացիս 5.8-11, Մատթեոս 18.15-17:

Հիշելու համարը.

«Որովհետև թե որ դեռ թշնամի էինք, Աստծո հետ հաշտվեցինք նրա Որդու մահով, որքա՞ն ավելի, որ հաշտված ենք, կապրենք նրա կյանքով» (Հռոմեացիս 5.10):

Անգամ Պենտեկոստեից հետո քրիստոնյաների միջև փոխհարաբերությունները ժամանակ առ ժամանակ լարվում էին: Նոր Կտակարանը վկայում է մի շարք դեպքերի մասին, երբ եկեղեցու ղեկավարները և նրա առանձին անդամները հանդիպում էին նման դժվարությունների: Այս պատմություններում արտացոլված սկզբունքները ծայրաստիճան կարևոր են այսօր եկեղեցու համար: Դրանք ի հայտ են բերում դրական արդյունքներ, որոնց մենք կարող ենք հանգել՝ վիճահարույց իրադրություններում օգտագործելով աստվածաշնչյան խորհուրդները:

Այս շաբաթվա դասին մենք հատուկ ուշադրություն կդարձնենք փոխհարաբերությունների վերականգնմանը: Անցյալի վերածննդի խոշոր փորձառությունները հանգեցնում էին փոխհարաբերությունների առողջացման: Սուրբ Հոգու ազդեցության ներքո մարդիկ մերձենում են Աստծո և միմյանց հետ: Քանդվում են մեզ Տիրոջից բաժանող և շրջապատողների հետ բարյացակամ փոխհարաբերություններ պահպանելուն խոչընդոտող պատնեշները: Ավետարանի հզոր ուժը պետք է դրսևորվի ոչ այնքան նրանում, թե ինչ է ասում եկեղեցին, այլ թե *ինչպես է նա ապրում:*

«Սրանով կգիտենան ամենքը, թե իմ աշակերտներն եք, եթե իրար հանդեպ սեր ունենաք» (Հովհաննես 13.35): Վերածննդի մասին մեր բոլոր դատողությունները առանց սիրո ոչնչի չեն բերի:

Խզումից դեպի բարեկամություն

Պողոսն ու Բառնաբասը աշխատում էին միասին՝ վկայելով Հիսուսի մասին: Բայց նրանց միջև անհամաձայնություն ծագեց (Գործք առաքելոց 15.36-40): Պողոսը չէր կարող հենվել այնպիսի մի համեստ մարդու վրա, ինչպիսին Հովհաննես-Մարկոսն էր: Ավետարանի քարոզի հետ կապված հնարավոր վտանգները Հովհաննես-Մարկոսին ստիպեցին լքել Պողոսին ու Բառնաբասին և վերադառնալ տուն:

«Այդ դասալքության պատճառով Պողոսը որոշ ժամանակ անբարեհաճ և անգամ խիստ վերաբերմունք ուներ Մարկոսի հանդեպ: Իսկ Բառնաբասն, ընդհակառակը, արդարացնում էր նրան՝ հաշվի առնելով նրա անփորձ լինելը: Նա անասելի չէր ուզում, որ Մարկոսը թողնի ծառայությունը, որովհետև նրա մեջ տեսնում էր հատկանիշներ, որոնց շնորհիվ վերջինս կարող էր օգտակար աշխատող դառնալ Աստծո դաշտում» (Է. Ուայթ, Գործք առաքելոց, 170):

Թեև Աստված օգտագործում էր այս բոլոր մարդկանց, նրանց միջև ծագած խնդիրները լուծում էին պահանջում: Շնորհի քարոզող առաքյալը պետք է ինքն էլ շնորհի դրսևորեր երիտասարդ քարոզչի հանդեպ, ով հիասթափեցրել էր իրեն: Ներում քարոզող առաքյալը պետք է ներեր: Հովհաննես-Մարկոսն աճում էր Բառնաբասի առաջնորդությամբ ու աջակցությամբ և, ի վերջո, Պողոսի սրտին դիպան այդ փոփոխությունները:

Ինչպե՞ս են Տիմոթեոսին և Կողոսի եկեղեցուն ուղղված Պողոսի նամակները վկայում Հովհաննես-Մարկոսի հետ նրա նոր փոխհարաբերությունների մասին: Այդ երիտասարդ քարոզչի հանդեպ ի՞նչ վստահություն էր հիմա զգում առաքյալը: (Կողոսացիս 4.10,11, Բ Տիմոթեոս 4.11): _____

_____

_____

Թեև մեզ անհայտ են Հովհաննես-Մարկոսի հետ Պողոսի փոխհարաբերությունները, սակայն աստվածաշնչյան գրառումները հստակ կերպով ներկայացնում են այն փաստը, որ Հովհաննես-Մարկոսը դարձել էր Կողոսում առաքյալի ամենահուսալի գործակիցներից մեկը: Պողոսը Հովհաննես-Մարկոսին ներկայացնում է որպես իր աշխատակից: Իր կյանքի ավարտին Պողոսը Տիմոթեոսին առանձնահատուկ կերպով խնդրում էր՝ Հովհաննես-Մարկոսին իր հետ բերել Հռոմ, քանի որ նա

«անհրաժեշտ էր ծառայության համար»: Երիտասարդ քարոզիչը Պողոսին աջակցում էր ծառայության մեջ, ուստի անկիայտ է, որ Պողոսը ներել էր նրան: Նրանց միջև թյուրիմացությունը վերացել էր, և նրանք կարողացան միասին աշխատել և ավետարանել:

Մենք ինչպե՞ս կարող ենք ներել նրանց, ովքեր նեղացրել կամ հիասթափեցրել են մեզ: Միևնույն ժամանակ ինչո՞ւ ներումը միշտ չէ, որ ներառում է նախկին փոխհարաբերությունների լիակատար վերականգնումը: Ինչո՞ւ դա միշտ չէ, որ հարկավոր է:

Երկուշաբթի ***սեպտեմբերի 16***

Ստրուկից՝ որդի

Բանտարկված լինելով Հռոմում՝ Պողոսը հանդիպեց Ոնեսիմոս անունով մի խեղճ ստրուկի, ով Կողոսից փախել էր Հռոմ: Պողոսն անձամբ ճանաչում էր Ոնեսիմոսի տիրոջը: Փիլիմոնին հղված ուղերձը բարեկամին ուղղված Պողոսի անձնական խնդրանքն է, որը վերաբերում է փախստական ստրուկի հետ փոխհարաբերությունների վերականգնմանը:

Պողոսը բարձր էր գնահատում մարդկանց միջև լավ փոխհարաբերությունները: Առաքյալը գիտեր, որ քայքայված փոխհարաբերությունները կործանարար ազդեցություն են ունենում մարդու հոգևոր աճի վրա: Փիլիմոնը Կողոսի եկեղեցու անդամ էր: Եթե նրա սրտում չարություն պահված լիներ Ոնեսիմոսի նկատմամբ, դա անխուսափելիորեն կանդրադառնար նրա քրիստոնեական վկայության վրա:

Կարդացե՛ք Փիլիմոն 1-25-ը: Փոխհարաբերությունների վերականգնման ի՞նչ կարևոր սկզբունքներ են շարադրված տեքստերում: _____

_____

Հնարավոր է, ոմանց կզարմացնի, որ Պողոսն այդքան զուսպ է խոսում ստրկության արատավորության մասին: Բայց Պողոսի ռազմավարությունն անհամեմատ ավելի արդյունավետ էր: Իդեալական դեպքում Ավետարանը վերացնում է բոլոր դասակարգային տարբերությունները (Գաղատացիս 3.28): Առաքյալը Ոնեսիմոսին Փիլիմոնի մոտ է ուղարկում ոչ թե որպես ստրուկ, այլ որպես իր որդի Հիսուսում և որպես Տիրոջում Փիլիմոնի «սիրելի եղբայր» (Փիլիմոն 16):

Պողոսը գիտեր, որ փախստական ստրուկները հուսալի ապագա չունեին: Ցանկացած ժամանակ նրանց կարող էին բռնել: Նրանք

դատապարտված էին զրկանքների և չքավորության: Բայց հիմա, որպես Քրիստոսում Փիլիմոնի եղբայր և պարտաճանաչ աշխատող՝ Ոնեսիմոսը կարող էր հիանալի ապագայի հույս ունենալ: Փիլիմոնը նրա համար կարող էր ապահովել սնունդ, ապրուստ և աշխատանք: Քայքայված փոխհարաբերությունների վերականգնումը դրամատիկ փոփոխություն մտցրեց Ոնեսիմոսի կյանքում: Նա դարձավ «հավատարիմ և սիրելի եղբայր», Պողոսի գործակիցը Ավետարանի քարոզի գործում (Կողոսացիս 4.9):

Ելնելով այստեղ բերված ավետարանական սկզբունքներից՝ ի՞նչ կարող եք ձեռնարկել՝ ավելի հեշտ հաղթահարելու ցանկացած սթրեսը, լարված իրավիճակը և խնդիրը շրջապատող մարդկանց հետ փոխհարաբերություններում:

Երեքշաբթի ***սեպտեմբերի 17***

Համեմատությունից դեպի լրացում

Նախորդ դասերից մեկում արդեն խոսել ենք այն մասին, որ Կորնթոսի եկեղեցին խոշոր խնդիրներ ուներ: Վերածննդի և բարենորոգության համար այդքան անհրաժեշտ ապաքինման և վերականգնման ո՞ր սկզբունքներն է Պողոսը շարադրում Ա Կորնթացիս 3.5-11, 12.1-11 և Բ Կորնթացիս 10.12-15-ում: _____

_____

_____

Այս հատվածներում առաքյալն ընդգծում է եկեղեցական միասնության հիմնարար սկզբունքները: Նա ցույց է տալիս, որ Հիսուսը զանազան աշխատողների օգտագործում է եկեղեցում տարբեր տեսակի աշխատանքների կատարման համար, թեև բոլորը աշխատում են մեկ թիմում՝ առաջ մղելով Աստծո եկեղեցին (Ա Կորնթացիս 3.9):

Աստված մեզ կոչ է անում փոխհամագործակցության, ոչ թե մրցակցության: Յուրաքանչյուր հավատացյալ օժտվածություն ունի Աստծուց, որպեսզի աջակցի Քրիստոսի մարմնի աճին և ծառայի մարդկանց (Ա Կորնթացիս 12.11): Ավելի մեծ և ավելի փոքր պարգևներ չկան (Ա Կորնթացիս 12.18-23): Աստծուց մեզ տրված պարգևներն անհրաժեշտ են ոչ թե եսասիրական ցուցամոլության, այլ ծառայության համար:

Շրջապատողների հետ համեմատվելու ցանկացած փորձ անխուսափելիորեն, որովհետև մենք զգում ենք կա՛մ հիասթափություն, կա՛մ մեծա-

մտություն: Եթե մենք մտածում ենք, թե ուրիշ մարդիկ անհամեմատ «ավելի բարձր» են մեզանից, ապա նրանց հետ մեզ համեմատելիս կզգանք հուսալքություն: Իսկ եթե համարում ենք, որ Քրիստոսի համար մեր աշխատանքն առավել արդյունավետ է, քան շրջապատողների աշխատանքը, ապա հպարտություն կզգանք: Ե՛վ մեկ, և՛ մյուս դիրքորոշումները վնաս կհասցնեն հանուն Քրիստոսի մեր աշխատանքին: Տքնելով այն ասպարեզում, որը մեզ է վստահել Քրիստոսը, մենք Նրա մասին վկայության մեջ ուրախություն և բավարարվածություն ձեռք կբերենք: Մեր ճիգերը կլրացնեն եկեղեցու մյուս անդամների ջանքերը, և արդյունքում Քրիստոսի եկեղեցին հսկայական քայլերով կշարժվի դեպի Նրա Թագավորությունը:

Ձեր շրջապատում կա՞ն մարդիկ, ում ծառայության մեջ ունեցած պարգևները ձեր մեջ նախանձի զգացում են առաջացնում: Միևնույն ժամանակ, հաճա՞խ եք հպարտություն զգում ձեր պարգևների համար՝ դրանք համեմատելով շրջապատողների հնարավորությունների հետ: Հենց այդ մեղսավոր մարդկային էության դրսևորումներն էին անհանգստացնում Պողոսին, երբ նա դիմում էր կորնթացի հավատացյալներին: Մենք ինչպե՞ս կարող ենք սովորել մարդկանց հանդեպ վարվել ոչ եսասիրաբար, ինչն անհրաժեշտ է ծուղակներից խուսափելու համար այս ոլորտում՝ անկախ այն բանից, թե ինչն է առավել հատուկ մեզ՝ նախա՞նձը, թե՞ հպարտությունը:

Չորեքշաբթի ***սեպտեմբերի 18***

Տարաձայնություններից դեպի ներում

Ի՞նչ բան է ներումը: Այն արդարացնո՞ւմ է մեզ հետ ծայրաստիճան անարդարացի վարված մարդու վարքը: Իմ ներումը կախվա՞ծ է վիրավորողի ապաշխարությունից: Իսկ միգուցե ինձ վշտացրած մարդն արժանի չէ՞ իմ ներմանը:

Բերված տեքստերն ինչպե՞ս են օգնում մեզ հասկանալ աստվածաշնչյան ներման բնույթը: Հռոմեացիս 5.8-11, Ղուկաս 23.32-34, Բ Կորնթացիս 5.20,21, Եփեսացիս 4.26-30: _____

_____

_____

Քրիստոսը մեզ Աստծո հետ հաշտեցնելու նախաձեռնություն դրսևորեց: «Աստծո քաղցրությունը քեզ ապաշխարության է տանում» (Հռոմեացիս 2.4): Քրիստոսում մենք հաշտություն ստացանք Աստ-

ծո հետ, երբ դեռ մեղավորներ էինք: Մեր ապաշխարությունն ու խոստովանությունը չէ, որ հաշտություն է բերում: Այն հնարավոր դարձավ խաչի վրա Քրիստոսի մահվան շնորհիվ, իսկ մենք մեր կողմից միայն պետք է ընդունենք այն, ինչ կատարվել է մեզ համար:

Մենք իսկապես չենք կարող ներման օրհնությունները ստանալ, քանի դեռ չենք խոստովանել մեր մեղքերը: Դա չի նշանակում, որ մեր խոստովանությունն է ներում առաջ բերում Աստծո սրտում: Ներումը Նրա սրտում եղել է միշտ (Նեեմիա 9.17), բայց խոստովանությունը մեզ հնարավորություն է տալիս ընդունել այդ ներումը (Ա Հովհաննես 1.9): Խոստովանությունը կենսականորեն անհրաժեշտ է ոչ թե նրա համար, որ փոխում է մեր հանդեպ Աստծո վերաբերմունքը, այլ որովհետև այն փոխում է Նրա հանդեպ մեր վերաբերմունքը: Արձագանքելով Սուրբ Հոգու հանդիմանությանը, որը մեզ կոչ է անում մեղքի ապաշխարության և խոստովանության, մենք փոխվում ենք:

Ներումը չափազանց կարևոր է նաև մեր հոգևոր բարօրության համար: Վիրավորողին ներել չկարողանալը, անգամ երբ վերջինս արժանի չէ ներման, կարող է մեզ ավելի շատ տառապանք պատճառել, քան նրան: Եթե մարդը նեղացրել է ձեզ, և այդ վիրավորանքի ցավը տանջում է ձեզ, քանի որ դուք չեք կարողացել ներել, նշանակում է՝ դուք թույլ եք տալիս է՛լ ավելի շատ վիրավորել ձեզ:

Ներումը մեկ այլ մարդու ազատագրումն է մեր դատապարտումից, քանի որ Քրիստոսը մեզ ազատել է Հոր դատապարտումից: Ներումը չի արդարացնում մյուս մարդու վերաբերմունքը մեր հանդեպ: Մենք կարող ենք հաշտվել վիրավորողի հետ, որովհետև Քրիստոսը մեզ հաշտեցրեց Իր հետ, երբ մենք նեղացրել էինք Իրեն: Մենք կարող ենք ներել, որովհետև ներված ենք: Մենք կարող ենք սիրել, որովհետև սիրված ենք: Ներումն ընտրություն է: Մենք կարող ենք ընտրել ներումը՝ մյուս մարդու գործողություններին կամ վերաբերմունքին հակառակ: Սա իսկապես Քրիստոսի ոգին է:

Ինչպե՞ս է Քրիստոսում մեզ պարգևված ներման վրա կենտրոնանալն օգնում մեզ սովորելու ներել շրջապատողներին:

Հինգշաբթի ***սեպտեմբերի 19***

Հիշաչարությունից դեպի վերականգնում

Կարդացե՛ք Մատթեոս 18.15-17-ը: Համաձայն Հիսուսի խորհրդի՝ ի՞նչ երեք քայլ մենք պետք է անենք եկեղեցու անդամների

միջև խնդիրների լուծման համար: Այսօր մենք ինչպե՞ս պետք է կիրառենք այդ խոսքերը: _____

_____

_____

Մատթեոսի ավետարանի 18-րդ գլխում գրի առնված խորհուրդը տալիս Հիսուսը ցանկանում էր, որ խնդիրը հեռու չտարածվեր, այլ անհապաղ լուծվեր երկու հակամարտող մարդկանց կողմից: Այդ պատճառով Տերն ասում է. «Եթե քո եղբայրը քո դեմ մեղանչի, գնա՛ նրան հանդիմանիր՝ եթե դու և նա մենակ լինեք» (Մատթեոս 18.15): Ինչքան աճում է երկուսի միջև եղած հակամարտության մեջ ընգրկված մարդկանց թիվը, այնքան աճում են նաև տարաձայնությունները: Մարդիկ որոշակի կողմեր են գրավում, և գծագրվում է ռազմաճակատի գիծը: Բայց երբ քրիստոնյաները ջանում են իրենց տարաձայնությունները լուծել նեղ շրջանում՝ քրիստոնեական սիրո և փոխըմբռնման ոգով, այդ ժամանակ ներման եղանակ է ստեղծվում: Այդպիսի մթնոլորտը նպաստում է այդ մարդկանց վրա Սուրբ Հոգու ազդեցությանը:

Պատահում են իրավիճակներ, երբ հնարավոր չէ լուծել տարաձայնությունը անձնական մակարդակում: Այդ դեպքերի համար Հիսուսը մեզ խորհուրդ է տալիս մեզ վերցնել ևս մեկ կամ երկու վկայի: Այդ երկրորդ քայլը հաշտեցման գործընթացում միշտ պետք է հետևի առաջին քայլին: Նպատակը կայանում է նրանում, որ միաբանեն մարդկանց, այլ ոչ թե հեռացնեն միմյանցից: Այդ գործընթացի մեջ ներգրավված մեկ կամ երկու անձնավորությունները անհրաժեշտ են ոչ մեկի կամ մյուսի արդարացիությունն ապացուցելու, ոչ էլ մյուսին մեղադրելու մեջ միաբանվելու համար: Նրանք գալիս են քրիստոնեական սիրով և կարեկցանքով, գալիս են որպես բարի խորհրդատուներ, որ միաբանվել են աղոթքի մեջ՝ նպաստելու համար երկու խորթացած մարդկանց մերձեցմանը: Լինում են իրավիճակներ, երբ խնդիրը լուծելու բոլոր փորձերն ապարդյուն են: Այդպիսի պարագաներում Հիսուսը հրամայում է մեզ՝ այդ խնդիրը թողնել եկեղեցուն: Իհարկե՛, սա չի նշանակում, որ պետք է առավոտյան շաբաթօրյա ծառայությունն ընդհատել անձնական հակամարտության մասին պատմությամբ: Եթե առաջին երկու քայլերը չեն օգնել երկու կողմերի հաշտեցմանը, ապա ճիշտ կլինի խնդիրը տանել եկեղեցու խորհուրդ: Եվս մեկ անգամ անհրաժեշտ է ընդգծել, որ Քրիստոսի նպատակը կողմերի հաշտեցումն է, և ոչ թե մի կողմին մեղադրելը և մյուսին արդարացնելը:

«Թույլ մի՛ տվեք, որ ձեզ տիրի վիրավորանքի զգացումը, որը կարող է վերաճել չարության: Թույլ մի՛ տվեք, որ վերքը նեխի և դուրս

ժայթքի թունավոր բառերի միջոցով, որոնք ախտահարում են են լսողների բանականությունը: Թույլ մի՛ տվեք, որ դառը մտքերը լցնեն ձեր և ձեր զրուցակցի միտքը: Գնացե՛ք ձեր եղբոր մոտ և խոնարհաբար ու անկեղծորեն խոսե՛ք նրա հետ ծագած թյուրիմացության մասին» (Է. Ուայթ, Ավետարանի ծառայողներ, 499):

Ուրբաթ ***սեպտեմբերի 20***

Հետագա ուսումնասիրության համար

«Երբ աշխատողների հոգում ապրի Քրիստոսը, երբ ցանկացած եսասիրություն մեռնի, երբ չլինի մրցակցություն և գերազանցության ձգտում, երբ նրանք լինեն միասնական, երբ սրբագործեն իրենց այնպես, որ միմյանց հանդեպ նրանց սերը տեսանելի լինի, այդ ժամանակ Սուրբ Հոգու շնորհի հեղեղները կիջնեն նրանց վրա, և դա նույնքան հաստատ է, որքան Աստծո ցանկացած խոստման կատարումը» (Է. Ուայթ, Հատընտիր լուրեր, հտ. 1, 175):

«Եթե մենք ցանկանում ենք Տիրոջ մեծ օրը կանգնել Քրիստոսի՝ որպես մեր ապաստանի բարձր աշտարակի կողքին, ապա պետք է մի կողմ դնենք ամեն նախանձ, գերազանցության հասնելու համար մղվող ամեն պայքար: Մեզ անհրաժեշտ է կատարելապես ոչնչացնել այդ արատների արմատները, որպեսզի դրանք չկարողանան կրկին աճել: Մենք պետք է ամբողջովին անցնենք Տիրոջ կողմը» (Է. Ուայթ, Վերջին օրերի իրադարձությունները, 190):

Հարցեր քննարկման համար

1. Դասարանում կարդացե՛ք Կողոսացիս 3.12-17-ը: Քննարկե՛ք քրիստոնեության այն հատկանիշները, որոնք Պողոս առաքյալը ցանկանում էր տեսնել կողոսացի հավատացյալների մեջ: Ինչո՞ւ են այդ հատկանիշները համարվում բոլոր խնդիրների լուծման հիմքը: Դրանք մեզ ինչպե՞ս են տանում այն սկզբունքներին հետևելուն, որոնց մասին ասաց Հիսուսը Մատթեոս 18.15-18-ում:
2. Եվս մեկ անգամ վերադարձե՛ք Կողոսացիս 3.12-17-ի խորհուրդներին: Ինչո՞ւ են դրանք այդքան կարևոր վերածննդի և բարենորոգության համար, որոնց կարիքը մենք այդքա՞ն ունենք:
3. Մեզ՝ որպես Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցու, ի՞նչն է ամենից շատ խանգարում՝ վերապրելու վերածննդի ու բարենորոգության փոր-

ծառությունը, որոնք անհրաժեշտ են Ավետարանը ողջ աշխարհին քարոզելու համար: Միգուցե մեր ուսմունքն ու դավանաբանական դրույթնե՞րը: Իհարկե՝ ո՛չ: Չէ՞ որ հենց դրանք է Աստված տվել մեզ, որ փոխանցենք աշխարհին: Խնդիրը հենց մեր մեջ է թաքնված, մեր միջանձնային փոխհարաբերությունների, մանրախնդրության, նախանձի, վեճերի, եսասիրության, գերազանցության ձգտման մեջ: Ինչո՞ւ դուք (այո՛, դուք, ոչ թե եկեղեցու նստարանին ձեր կողքին նստած մարդը կամ հովիվը), հենց դուք պետք է խնդրեք Սուրբ Հոգու զորությունը, որպեսզի ձեր մեջ տեղի ունենան այն փոփոխությունները, որոնք անհրաժեշտ են հետագա վերածննդի և ողջ եկեղեցու բարենորոգության համար:

ԽՈՍՏԱՅՎԱԾ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ. ԱՍՏԾՈ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԱԾ Է

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Մատթեոս 25.18-20, Հակոբոս 5.7,8, Զաքարիա 10.1, Մատթեոս 3.11, Հայտնություն 18.1, 19.11-16:

Հիշելու համար.

«Արդ, եղբայրներս, երկայնամիտ եղեք մինչև Տիրոջ գալուստը. ահա մշակը երկայնամիտ եղած՝ սպասում է երկրի պատվական պտղին, մինչև որ առաջին և վերջին անձրևն ստանա: Երկայնամիտ եղեք դուք էլ, հաստատեցե՛ք ձեր սրտերը, որ Տիրոջ գալուստը մոտեցել է» (Հակոբոս 5.7,8):

Ավետարանի քարոզով ողջ աշխարհն ընդգրկելու խնդիրը երեք հրեշտակների լուրի համատեքստում կարող է անհնարին թվալ: Թեև Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցին արագորեն աճում է, մենք, միևնույնն է, չենք հասնում երկրի բնակչության աճի հետևից: Աշխարհում դեռևս բազում տարածքներ կան, որտեղ «Յոթերորդ օրվա ադվենտիստ» անվանումը (չխոսելով արդեն մեր լուրի մասին) ոչ ոքի հայտնի չէ;

Այս փաստը մեր առջև լուրջ հարց է դնում. հնարավո՞ր է այս սերնդում ավետարանը հասցնել ողջ աշխարհին: Տեղի կունենա՞ ինչ-որ անսովոր առաջընթաց, որը զարմանահրաշ կերպով կարագացնի երեք հրեշտակների լուրի հռչակումը: Քննարկելով տվյալ թեման՝ մենք միշտ կարող ենք հիշել. սա Աստծո գործն է, և Նա այն կավարտի: Միևնույն ժամանակ չի կարելի մոռանալ, որ մենք նույնպես կոչված ենք կարևորագույն դեր կատարել այդ վերջնական աշխատանքում:

Խոստացված զորությունը

Մատթեոս 28.18-20-ում գրի առնված Քրիստոսի մեծ հանձնարարությունն ուղեկցվում է Նրա մեծ խոստմամբ: Ի՞նչ խոստում է դա, ի՞նչ նշանակություն ունի և ինչպե՞ս կարող է քաջալերել մեզ: Ինչո՞ւ է այդ խոստումն այդքան կարևոր մեզ համար:

_____

_____

_____

_____

_____

Աշակերտները քարոզում էին ոչ թե իրենց, այլ Քրիստոսի զորությամբ: Փաստորեն, ըստ Պողոսի, ընդամենը մի քանի տարում Ավետարանն արագորեն քարոզվեց «երկնքի տակ լինող բոլոր արարածներին» (Կողոսացիս 1.23): Թեև ոմանք կարող են կասկածի տակ առնել Պողոսի խոսքերի ճշգրիտ նշանակությունը, սակայն փաստը մնում է փաստ՝ Ավետարանը մեծազոր ազդեցություն թողեց առաջին դարի հասարակության վրա: Այն փոխեց աշխարհը: Քրիստոսը խոստացել էր Իր աշակերտներին. «Եվ ահա ես իմ Հոր խոստումը կուղարկեմ ձեզ. դուք էլ նստեցե՛ք Երուսաղեմ քաղաքում, մինչև որ վերևից զորություն հագնեք» (Ղուկաս 24.49): Փրկիչն ավելացրել է. «Բայց զորություն կառնեք, երբ Հոգին ձեզ վրա կգա, և իմ վկաները կլինեք Երուսաղեմում և բոլոր Հրեաստանում և Սամարիայի մեջ՝ մինչև երկրի ծայրերը» (Գործք առաքելոց 1.8):

Անկախ խնդրի բարդությունից՝ Աստծո խոստումները հաստատ են: Հիսուսի պնդումն է. «Եվ արքայության այս Ավետարանը ամբողջ տիեզերքում կքարոզվի՝ բոլոր հեթանոսներին վկայություն լինելու համար, և այն ժամանակ կգա վերջը» (Մատթեոս 24.14). սա խոստում է: Ամբողջ աշխարհում Ավետարանի հռչակումը կարող է անհնարին թվալ, բայց Աստծո զորությունը կհաղթահարի բոլոր խոչընդոտները: Երկիր մոլորակում յուրաքանչյուր մարդ արդարացի իրավունք կունենա մինչև մեր Տիրոջ վերադարձը լսել և հասկանալ Աստծո սիրո և ճշմարտության մասին լուրը (տե՛ս Հայտնություն 18.1):

«Ես տեսա հրեշտակների, որոնք երկնքում շտապում էին այս ու այն կողմ՝ ինչ-որ կարևոր իրադարձության նախապատրաստվելով: Հետո ես տեսա ևս մեկ հզոր հրեշտակի, ում հանձնարարվեց իջնել երկիր, իր

ձայնը միացնել երրորդ հրեշտակի ձայնին և զորություն հաղորդել նրա լուրին: Մեծ փառքով էր օժտված այդ հրեշտակը, և, երբ նա դուրս էր գալիս, երկիրը լուսավորվեց նրա փառքից: Նրանից բխող լույսը թափանցում էր ամենուր» (Է. Ուայթ, Վաղ ստեղծագործություններ, 277):

Աստված կավարտի Իր աշխատանքը: Նա Իր Հոգին կհեղի մեծազոր ուժով և կկատարի այն, ինչ անհնար է մարդկային ծրագրման տեսակետից:

Դուք ինչպե՞ս կարող եք ձեր անմիջական շրջապատում Տիրոջ է՛լ ավելի հաջողակ վկա դառնալ: Այլ խոսքերով՝ դուք ի՞նչ կարող եք անել՝ նպաստելու համար Մատթեոս 24.14-ի խոստման կատարմանը:

Երկուշաբթի *սեպտեմբերի 23*

Վաղ և Ուշ անձրևները

Ինչպես Հին, այնպես էլ Նոր Կտակարանում ջուրը խորհրդանշում է Սուրբ Հոգին: Եսայիա մարգարեն փոխանցում է Տիրոջ խոսքերը. «Որովհետև ջուր պիտի թափեմ ծարավի վրա, և հեղեղներ՝ չորության վրա, և պիտի թափեմ իմ Հոգին քո սերունդի վրա, և իմ օրհնությունը՝ քո զավակների վրա» (Եսայիա 44.3): Եսայիան օգտագործում է հրեական գրականության մեջ ընդունված հնարքը, որը կոչվում է «զուգահեռականություն»: Տեքստի երկրորդ մասը բացատրում է առաջինը: Հովել մարգարեն նույնպես դիմում է ջրի խորհրդանիշին: Աստված խոստանում է լցնել Իսրայելի դաշտերը, իսկ հետո հայտարարում է. «Եվ պիտի լինի սրանից հետո, որ իմ Հոգին պիտի թափեմ ամեն մարմնի վրա» (Հովել 2.28): Հիսուսը ևս, խոսելով Սուրբ Հոգու մասին, օգտագործում է ջրի խորհրդանիշը:

Ի՞նչ երկու խորհրդանիշներ են օգտագործվում բերված տեքստերում յուրաքանչյուրում, որտեղ խոսվում է Սուրբ Հոգու հեղման մասին: Հովել 2.21-24,28-32, Հակոբոս 5.7,8: Մենք ինչպե՞ս պետք է հասկանանք այդ խորհրդանիշների նշանակությունը:

Աստվածաշնչյան ժամանակներում վարն ու ցանքը տեղի էին ունենում հոկտեմբերի կեսերին՝ առաջին անձրևների սկզբից քիչ անց: Այդ վաղ անձրևներն օգնում էին, որ ցորենը ծլի ու աճի: Ուշ անձրևը գալիս էր գարնան վերջին, որպեսզի հասունացող պտուղները բերք դառնային: Գարու և մյուս հացահատիկային մշակաբույսերի բերքը հավաքում էին գարնանը, իսկ ամռանը և աշնանը հասունանում էին պտուղները:

Աստված Վաղ և Ուշ անձրևի խորհրդանիշներն օգտագործում է՝ ցույց տալով երկու իրադարձություն: Վաղ անձրևը թափվեց աշակերտների վրա Պենտեկոստեի օրը, որպեսզի սկիզբ դնի քրիստոնեական առաքելությանը: Իսկ Ուշ անձրևը Աստծո եկեղեցու վրա կթափվի ժամանակի վերջում, որպեսզի երկրի վրա Նրա առաքելությունն ավարտվի: «Վաղ անձրև» արտահայտությունը նաև ցույց է տալիս Սուրբ Հոգու ամենօրյա աշխատանքը, ով հանդիմանում է, խրատում և գոտեպնդում յուրաքանչյուր քրիստոնյայի: «Ուշ անձրև» արտահայտությունն օգտագործվում է Քրիստոսի եկեղեցու վրա Աստծո Սուրբ Հոգու առանձնահատուկ հեղումը նկարագրելու համար:

«Հրեաների մարգարեություններում վաղ և ուշ անձրևները, որոնք Արևելքի երկրներում թափվում են ցանքի և հունձքի ժամանակ, խորհրդանշում էին Աստծո եկեղեցու վրա հոգևոր շնորհի առատ հեղումը: Առաքյալների օրերում Հոգու հեղումը վաղ կամ առաջին անձրևի սկիզբն էր, և այդ հեղման պտուղները փառավոր էին…

Բայց երկրային հունձքի ավարտին խոստացված է շնորհի հոգու առանձնահատուկ դրսևորում, որը եկեղեցին կնախապատրաստի Մարդու Որդու գալստյանը: Հոգու այդ հեղումը նման է ուշ անձրևի. հենց այս զորության մասին պետք է քրիստոնյաներն աղաչեն հունձքի Տիրոջը «Բարեպատեհ ժամանակին» (Է. Ուայթ, Գործք առաքելոց, 54,55):

Երեքշաբթի ***սեպտեմբերի 24***

Ուշ անձրևի հեղման նախապայմանները

Բերված համարները մեզ ի՞նչ են ասում այն մասին, թե պետք է նախապատրաստվել Սուրբ Հոգու զորությունն ստանալուն: Գործք առաքելոց 1.14, Զաքարիա 10.1, Գործք առաքելոց 3.18-20, 4.31, Սաղմոս 119.25, Հովհաննես 6.63:

Սուրբ Գիրքը մեզ կոչ է անում՝ Աստծուց խնդրել Սուրբ Հոգին (Ղուկաս 11.13): Աշակերտները հավատում էին Քրիստոսի խոստմանը, միասին սպասում էին դրա կատարմանը և աղոթում էին այդ մասին (Գործք առաքելոց 1.8,14): Աստված մեզ հրահանգում է աղոթել Սուրբ Հոգու համար ոչ թե այն պատճառով, որ Նա չի ցանկանում մեզ տալ Նրան, այլ՝ որովհետև մենք պատրաստ չենք ընդունել այն: Երբ մենք աղոթում ենք Սուրբ Հոգու հեղման համար, Աստված աշխատում է մեր սրտերի վրա և մեզ տանում է առավել խոր ապաշխարության: Եկեղեցու մյուս անդամների հետ ոչ մեծ խմբերով աղոթքը միավորում և համախմբում է

մեզ: Ինչպես աղոթքը, այնպես էլ Աստվածաշնչի ուսումնասիրությունը նախապատրաստում են մեր միտքը՝ այն զգայուն դարձնելով մեր կյանքում Սուրբ Հոգու ծառայության համար:

Ո՞րն է ձեր կյանքի հոգևոր նորոգման բնական արդյունքը: Ինչի՞ է հանգեցնում ճշմարիտ հոգևոր վերածնունդն ու բարենորոգությունը: Սաղմոս 51.10-15, Գործք առաքելոց 4.13,20,5.33,8.4:

Ցանկացած հոգևոր վերածնունդ և ճշմարիտ բարենորոգություն տանում են վկայելու անհաղթահարելի ցանկության: Երբ մեր սրտերը լեփ-լեցուն են խորը շնորհակալությամբ այն ամենի համար, ինչ մեզ համար կատարել է Հիսուսը, այդ ժամանակ մենք կիսում ենք Պետրոսի և Հովհաննեսի զգացմունքները, ովքեր հայտարարեցին. «Մենք չենք կարող այն, որ տեսանք և լսեցինք, չասել» (Գործք առաքելոց 4.20): Վաղ անձրևի ժամանակ Սուրբ Հոգու հեղումը Պենտեկոստեի օրը գոտեպնդեց աշակերտներին, որ նրանք կարողանան արդյունավետ կերպով վկայել: Նրանց վկայությունն այնքան զորեղ էր, որ Թեսաղոնիկեում խռովարարների ամբոխը բղավում էր. «Այս աշխարհը շփոթեցնողներն այստեղ էլ հասան» (Գործք առաքելոց 17.6):

Ինչպես Պենտեկոստեի օրը Սուրբ Հոգու հեղումն օգնեց աշակերտներին մեծ ավետարանիչներ դառնալ իրենց սերնդի համար, այնպես էլ Ուշ անձրևի զորությամբ Սուրբ Հոգու հեղումը կօգնի Աստծո եկեղեցուն՝ լուսավորել աշխարհը նրա վերջին օրերին: Երկրի վրա Աստծո առաքելությունն ավարտել կարելի է միայն Ուշ անձրևի տեսքով իջած Սուրբ Հոգու զորությամբ, և հենց այս զորությունն է մեզ առաջարկում Աստված: Երկնքի ամենաթանկարժեք պարգևը առաջարկված է անսահմանափակ չափով, որպեսզի ավարտվի այն ամենակարևոր խնդիրը, որը երբևէ վստահվել է եկեղեցուն:

Իրենց քարոզով և վկայությամբ առաջին աշակերտները «շրջեցին» աշխարհը: Ինչո՞ւ դա չի կարելի ասել մեր մասին:

Հորեքշաբթի սեպտեմբերի 25

Մկրտություն կրակով

Հին և Նոր Կտակարանում Սուրբ Հոգու գործունեությունը նկարագրելու համար օգտագործվում են տարատեսակ խորհրդանիշներ, օրինակ՝ ջուրը, քամին, յուղը: Հովհաննես Մկրտիչը Սուրբ Հոգու գործողությունը ներկայացրեց մեկ այլ պատկերով՝ կրակով (Մատթեոս 3.11, Ղուկաս 3.16):

Շատերը չեն հասկանում Հովհաննեսի պնդումները: Տեքստը չի ասում. «Նա ձեզ կմկրտի Սուրբ Հոգով *կամ* կրակով»: Այստեղ ասված է. «Նա ձեզ կմկրտի Սուրբ Հոգով և կրակով»: Երկրորդ արտահայտությունը՝ «և կրակով», բացատրում է «ձեզ կմկրտի Սուրբ Հոգով» արտահայտությունը: Սուրբ Հոգով մկրտությունը կրակով մկրտությունն է: «Մկրտել» բառը Նոր Կտակարանում օգտագործվում է 80 անգամ և ցույց է տալիս լրիվ ընկղմումը:

Կարդացե՛ք բերված տեքստերը և որոշե՛ք, թե ինչ է ցույց տալիս կրակի աստվածաշնչյան խորհրդանիշը. Ելից 3.2-4, 24.17, Գ Թագավորաց 18.24, Մաղաքիա 3.2,3, Գործք առաքելոց 2.1-4, Եբրայեցիս 12.29: _____

_____

_____

Կրակը Աստծո փառքի, ներկայության և զորության խորհրդանիշն է, որոնք դրսևորվում են Սուրբ Հոգու ծառայության մեջ: Կրակով մկրտված լինել նշանակում է Սուրբ Հոգու օգնությամբ սուզվել Աստծո փառքի մեջ՝ վկայելու համար Նրա զորությամբ: Մովսեսը Աստծուն հանդիպեց այրվող մորենու մեջ և հետո ուղարկվեց վկայելու փարավոնին: Եղիան Իսրայելին վկայում էր Կարմեղոս լեռան վրա Աստծո հրե ներկայության փառքի մեջ: Երբ կրակի լեզվակները Պենտեկոստեի օրն իջան աշակերտների վրա, նրանք սկսեցին վկայել լեզուներով, որոնք նախկինում երբեք չէին իմացել: Մկրտվել Սուրբ Հոգով նշանակում է խորասուզվել Աստծո ներկայության և զորության մեջ, որպեսզի կարողանանք արդյունավետ կերպով վկայել Նրա փառքի մասին: Երկրային պատմության վերջին օրերին Տիրոջ ժողովուրդը կրկին կսուզվի Նրա ներկայության մեջ, կլցվի Նրա զորությամբ և դուրս կգա աշխարհին վկայելու Նրա փառքի մասին:

Երկիրը կլցվի Աստծո փառքով: «Որովհետև երկիրը պիտի լցվի Տիրոջ փառքի գիտությամբ, ինչպես որ ջրերը ծածկում են ծովը» (Ամբակում 2.14): Մարգարեական տեսիլքի մեջ Հովհաննեսը տեսնում էր երկնքից իջնող լրաբեր հրեշտակին, և «և երկիրը լուսավորվեց նրա փառքից» (Հովհաննես 18.1):

Աստծո փառքը, Նրա սիրող բնավորությունը սպասող աշխարհին և դիտող Տիեզերքին կբացահայտվեն Սուրբ Հոգու զորությամբ: Երկիր մոլորակի վրա ապրող ամեն մարդ կլսի և կհասկանա վերջին ժամանակի համար Աստծո լուրը:

Աստծո փառքը և սիրող բնավորությունը կբացահայտվեն աշխարհին: Դուք ինչպե՞ս կարող եք ձեր կյանքով մարդկանց բացահայտել այդ փառքը: Դրա համար ի՞նչ կպահանջվի ձեզանից:

Մեծ պայքարն ավարտված է

Ողջ Հայտնություն գիրքը կարող է ամփոփվել մի քանի բառով. Հիսուսը հաղթանակում է, սատանան տանուլ է տալիս: Կարդացե՛ք Հայտնություն 12.17, 17.13,14, 19.11-16-ը: Ո՞րն է այս բոլոր տեքստերի կենտրոնական լուրը: _____

_____

_____

_____

Մեզ համար հնչում է Աստծո լուրը. խաչի վրա սատանային հաղթած Հիսուսը կգա կրկին, կհաղթանակի դժոխքի ուժերին և ընդմիշտ վերջ կդնի չարին (Հայտնություն 19.19-21, Եզեկիել 28.18,19): Վերջին խոսքը չի պատկանում չարին, կարիքին ու հիվանդությանը: Վերջին խոսքը համաճարակներին ու տառապանքներին չի պատկանում, քաոսին, հանցագործություններին ու մահվանը չի պատկանում:

Վերջին խոսքը պատկանում է Աստծուն:

Իսկ մինչ այդ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին անում են ամեն հնարավորը, որպեսզի հասնեն յուրաքանչյուր մարդու: Աստծո սիրտը ցավում է, երբ նայում է կործանվող աշխարհին: Վկայելով ինչպես խոսքերով, այնպես էլ գործերով՝ Նրա ժողովուրդն աշխարհին կբացի Հիսուսի շնորհն ու ճշմարտությունը:

Իհարկե, սատանան կանի ամեն հնարավորը՝ դիմակայելու այդ վկայությանը: Աշխարհին վրա կհասնի վերջին ճգնաժամը: Սակայն Հիսուսը Ուշ անձրևի մեջ կհեղի Իր Սուրբ Հոգին, և երկրի վրա Աստծո գործը կավարտվի:

«Աստծո ծառաների լուսավոր դեմքերին դրված է սրբազան նվիրաբերման կնիքը: Նրանք կշտապեն երկնային լուրը հասցնել երկրի բոլոր անկյունները: Հազարավոր ձայներ ամենուրեք կհռչակեն այս նախազգուշացումը: Բազում հրաշքներ տեղի կունենան, հիվանդները կապաքինվեն, նշաններն ու գերբնական դեպքերը կուղեկցեն հավատացյալներին» (Է. Ուայթ, Մեծ պայքար, 612):

Երկրի վրա Աստծո գործը կավարտվի: Հիսուսը կգա: Ողջ երկինքն ու երկիրը կցնծան: Մեր կյանքում չպետք է լինի ոչինչ առավել կարևոր, քան վերածննդի ամենօրյա փորձառությունը, Նրա շնորհի ազդեցությունը մեր սրտերում և Սուրբ Հոգու հրավերը, որ Նա մեզ Իրեն նման դարձնի (Ա Հովհաննես 3.1-3):

Մեր աշխարհը կործանվում է: Ո՞վ է դա տեսնում: Կա՞ որևէ առավել նշանակալից բան, քան մեր սրտերը Հիսուսի առջև բացելն ու վերածննդի և վերափոխման մասին աղոթելը, որոնք անհրաժեշտ են ոչ միայն մեզանից յուրաքանչյուրին առանձին-առանձին, այլ նաև ողջ եկեղեցուն: Ի՞նչ տեղի կունենար, եթե մեր սրտերը լիովին պատկանեին Աստծուն, և մենք ամբողջովին նվիրված լինեինք աշխարհում Բարի լուրի տարածման գործին:

Ուրբաթ ***սեպտեմբերի 27***

Հետագա ուսումնասիրության համար

«Այս լուրը տարածվելու է ոչ այնքան մարդկային իմաստությամբ, որքան Աստծո Հոգու խորը համոզվածությամբ: Ապացույցներն արդեն տրվել են: Սերմը ցանվել է, և այժմ այն կաճի ու պտուղներ կբերի: Ավետարանիչների կողմից տարածվող գրքերն արդեն գործել են իրենց ազդեցությունը, սակայն շատ մարդկանց, ում վրա ճշմարտությունը տպավորություն է գործել, ինչ-որ բան խանգարել է մինչև վերջ հասկանալ և ընդունել այն: Իսկ այժմ լույսի ճառագայթները թափանցում են ամենուր, ճշմարտությունը հստակ կերպով բացահայտված է, և Աստծո անկեղծ զավակները կտրում են իրենց կաշկանդող կապանքները: Ազգակցական կապերը, եկեղեցու առջև ունեցած պարտականություններն անզոր կլինեն կանգնեցնելու նրանց: Ճշմարտությունը մնացած ամեն ինչից առավել կարևոր կդառնա: Չնայած ճշմարտության հակառակորդի համախմբված ուժերին՝ դարձի եկածների մի մեծ խումբ կանցնի Տիրոջ կողմը» (Է. Ուայթ, Մեծ պայքար, 612):

Հարցեր քննարկման համար

1. Վերը բերված մեջբերման մեջ էլեն Ուայթը գրել է. «Այս լուրը տարածվելու է ոչ այնքան մարդկային իմաստությամբ, որքան Աստծո Հոգու խորը համոզմունքով»: Դասարանում խոսե՛ք այս դարձվածքի նշանակության մասին: Ինչի՞ մասին այն չի խոսում: Ի վերջո, մեր լուրը տրամաբանական է, խելամիտ, և դրա օգտին շատ ծանրակշիռ փաստարկներ են խոսում: Այդ դեպքում մեզ ի՞նչ էր ցանկանում ասել Աստծո լրաբերուհին:

2. Ժամանակակից եկեղեցին ինչպե՞ս կարող է օգտագործել Հին Կտակարանում Իր ժողովրդին տրված Աստծո խոստումները: Երկրորդ Օրինաց 11.13-18, Օվսե 6.1-3, 10.12:
3. Դոկտոր Սթիվեն Հոքինգը՝ մեծագույններից մեկը գիտնականների աշխարհում, մահից հետո կյանքի հայեցակարգն անվանել է «հեքիաթներ մթությունից վախեցող երեխաների համար»: Ինչո՞ւ են նման հայտարարությունները վկայում հույսի մեր լուրի կարևորության մասին այս աշխարհի համար, որը չի ճանաչում ո՛չ Աստծուն, ո՛չ Նրա սերը:
4. Թեև մենք չգիտենք Հիսուսի գալստյան ճշգրիտ ժամանակը, սակայն ծարավի ենք այդ իրադարձության վրա հասնելուն և մեր մեղսավոր աշխարհի վերափոխմանը: Այդ պատճառով մեզ համար՝ որպես Աստծո ժողովուրդ, այդքան կարևոր են վերածնունդն ու բարենորոգությունը, և մեր ղեկավարները մեզ գործողության կոչ են անում: Սակայն փոփոխությունները տեղի կունենան միայն մեր սրտերում Սուրբ Հոգու գործողության շնորհիվ: Իսկ մենք՝ որպես առանձին անհատներ, պետք է մեզ՝ մեր սիրտը, հոգին և գիտակցությունը Տիրոջը նվիրելու գիտակցական որոշում ընդունենք: Ինչպե՞ս կարող ենք մենք, չդատապարտելով ուրիշներին, մեզ չհամեմատելով նրանց հետ, անել աշխատանքի մեր մասը՝ միմյանց դրդելով պատրաստվել մեր կյանքում Սուրբ Հոգու գործողությանը:

Շաբաթօրյա դպրոցի Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ
2013 թվականի երրորդ եռամսյակ

ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ԵՎ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆ

Մարկ Ֆինլի

Գլխավոր խմբագիր՝	Պավել Սարգսյան
Թարգմանությունը և համակարգչային շարվածքը՝	Մերինե Աթոյան
Վերստուգող՝	Հովհաննես Մխիթարյան
Գրական խմբագիր՝	Ալվարդ Մաղոյան
Համակարգչային ձևավորող՝	Կորյուն Կակոյան